




ԶՄԻԱԾԻՆ





ԽԷ

ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ա. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս - Սեպտեմբեր

1990




1923-44
06-916



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆԻՍՏՐԱՏՈՐԱՏԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Տ. Տ. ՎԱՋԱՏՅԱՆԻ ՄԱՍԻՆԻՍՏՐԱՏՈՐԱՏԻ

ՎԱՋԱՏՅԱՆԻ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ի խորոց արտի ջնորճալիրում եմ Ձեր ծննդյան 82-ամյակը՝ բարձր զմահատելով Ձեր անձնական ալիանոր հաջ ժողովրդի հոգևոր անաղարտության պահպանման ու բազմապատկման գործում, կարևորելով Հայ Առաքելական Եկեղեցու անփոխարինելի դերը ամբողջ աշխարհում: Հալսպանարանության բազմաբարդ խնդրում լիանույս եմ, որ Ձեր հաղթալետությամբ Հայ Եկեղեցին այստեղևոս եւ առաւելագոյն նպաստ կբերի մեր ժողովրդի ազգային զարթոնքին, նոր պետականության հաստատմանն ու ամրապնդմանը:

Ցանկանում եմ արեւատություն, անսպառ եռանդ՝ ի բարօրություն մեր ժողովրդի:

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան,

22 սեպտեմբեր 1990 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԳԻ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Ձեր շնորհավորական հեռագիրը մասնավոր հուզում պատճառեց Մեզ։ Եթե Աստված Մեզ շնորհի ևս մի քանի տարի կյանք պարգևի, պիտի կամենանք շարունակել Մեր գործունեությունը՝ նվիրված մեր Մայր Եկեղեցու առավել ծաղկման և մեր հավատավոր ժողովրդի կյանքի հոգևոր ու բարոյական զարթոնքին ու նրա արդար իղծերի իրականացման։ Ազդրում ենք մասն, որ Ձեզանով սկիզբ առած պատմական հոչակումը ազատ ու ինքնիշխան մայր պետության, անվտրձ ու անվտանգ քաղ առ քաղ հասնի նոր բարձունքների, «զի Աստված բնդ մեզ է»։

Ձեզ ու Ձեր բոլոր նվիրյալ գործընկերներին աններբ հավատք, մըշտանորոգ եռանդ ու անխառն լավատեսություն։


Օրհնությամբ ու հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

24 սեպտեմբեր 1990 թ.



**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԾԾՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա**

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ծնորհավորում ենք Ձեր ծննդյան տոնը և ցանկանում Ձեզ ատողջություն, երկար տարիների խաղաղ կյանք և բեղմնավոր աշխատանք: Ձեր հոգու մեծությամբ, վեհանձն ու հայրական հոգատարությամբ, պալծառ մտքով, ողջախոն բանականությամբ վալելում եք ողջ հայ ժողովրդի սերն ու հարգանքը: Ցանկանում ենք, որ կրկնապատկի Ձեր կյանքի կորովը, հոգու արիությունը և սրտի բերկրանքը:

Ծնորհավորելով Ձեր ծննդյան տոնը, ցանկանում ենք շնորհակալության խոսք հղել երափտավոր հայ ժողովրդի անունից Ձեր կատարած ամենօրյա հայրենամոլեր աշխատանքի համար: Կրկին շնորհավորում ենք և ցանկանում Ձերդ Սրբությանը քաջատողջություն՝ ի փառս հայ ժողովրդի:

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Երևան,

20 սեպտեմբեր 1990 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՏԻԱՐ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Երևան

Գոհունակ արտով շնորհակալություն եմք հայտնում Ձեզ ջերմ հեռագրի համար Մեր ծննդյան տարեդարձի առթիվ:

Զգացված եմք Ձեր բարի մաղթանքների համար: Տիրոջ ողորմությամբ պիտի շարունակենք Մեր պարտքը կատարել մեր ժողովրդի հանդեպ՝ մեր նպատակը բերելով նրա արդար իղձերի իրականացման ճանապարհին, ազատ ու ինքնիշխան մեր հայրենի պետության հովանու ներքո:

Հուսով եմք, որ այս նոր պալմաններում նոր ծաղկում պիտի ապրի նաև մեր ազգի Մայր Եկեղեցին Ձեր անմիջական գործարար աջակցությամբ:

Այս առթիվ ընդունեցեք Մեր քաջալերանքը և օրհնությունը Ձեզ և ձեր հայրենի նորակազմ կառավարության:

Օրհնությամբ՝


ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՏ

Ս. Էջմիածին,

21 սեպտեմբեր 1990 թ.





ՄԵԾԱՀԱՐԳ ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԳՈՐԲԱՆՈՎԻՆ
ՊՐԵԶԻԴԵՆՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Մոսկվա

Գոհունակությամբ հաստատում ենք Մեր 7 սեպտեմբեր 1990 թվակիր նամակը ի պատասխան Ձեր կարևոր նամակի, որ Մեզ հանձնվեց օգոստոս ամսի սկզբներին:

Այսօր ստիպված ենք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովմունքով տեղեկացնելու համար, որ Լեոնային Ղարաբաղի հաշ ազգաբնակչության վիճակը դարձած է ողբերգական մաս եկեղեցական կյանքում:

Լեոնային Ղարաբաղի հոգևոր առաջնորդը՝ Պարգև Եպիսկոպոս, հաղորդեց Մեզ, թե կիրակի օր, 9 սեպտեմբերին, Ամարասի հաշկական վանքում (նիմնված 4-րդ դարում), հանդիսավոր պատարագից հետո, գիշերը երկու անգամ ենթարկված է հարձակումների բանակային համազգեստով անձանց կողմից, որոնք կրակ են բացած վանքի պատերին, սարսափի մատնելով հոգևոր ծառայողներին և անգեմ պահակներին: Վտանգի տակ են նոր վերաբացված մեր հինգ վանքերն ու եկեղեցիները և մեր հոգևորականների կյանքը:

Դիմում ենք Ձեզ ծանր ապրումներով, սակայն տակավին հույսով, որ Ձեր բարձր նեղիմակությամբ և օրենքի ուժով և ազգությունների ինքնորոշման իրավունքով վերջ կգտնի Լեոնային Ղարաբաղում հաշերի ողբերգությունը, ինքնավար աղյ մարզը դնելով Ձեր պրեզիդենտական իշխանության ներքև: Անհրաժեշտ հաշերի համբերության բաժակը վաղուց լցված է, և նրանք պատրաստ են ազատ մեռնելու, քան ստրուկ ապրելու, ինչպես ներոսները Տերմուպիլեի, Վալմիի և Կոսիկովի:

Ձեր չափազանց բազմաբաղ և տազնապալի այս օրերին, խնդրում ենք մի պահ գոնե Ձեր ուշադրությունը ուղղելք դեպի Լեոնային Ղարա-

բաղում տառապող մեր ժողովուրդը և Ձեր խաղաղարար արդար մի վճիռով փրկեիք նրանց, համուն Ձեր հռչակած հումանիստական մեծ գաղափարների, հոգուտ նաև աղբյուրանցի մեր հարևան ժողովուրդի կյանքի խաղաղության:

Թույլ տվեք վերջացնել Մեր խոսքը Համարտինի տողերով՝ «Ուժեղ էրի փառքը տկարների ազատությունն է»:

Խորին հարգանքով և օրհնությամբ՝


ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

13 սեպտեմբեր 1990 թ.





ԽԱՀՄ՝ ՊՐԵԶԻԴԵՆՏ Մ. Ս. ԳՈՐԲԱԶՈՎԻՆ

Մոսկվա, Կրեմլ


Ի լրացումն Մեր 13 սեպտեմբերի հեռագրի, բեկյալ սրտով կրկին դիմում ենք Ձերդ Գերազանցության, Ձեր մարդասիրական զգացումներին, որ խնայեք կյանքը հացադուլ հաշտարարած ժողովրդական դեպուտատներ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, լրագրող Ջորի Բալայանի, արվեստագետ Սոս Սարգսյանի, Լեոնային Ղարաբաղի դեպուտատների և մյուսների, որոնց հուսամատ աղերսանքն է, որ Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզում վերականգնվի Խորհրդային իշխանությունը՝ ուղղակի Ձեր պրեզիդենտական հեղինակության ներքո, որ կլինի իրապես արդար մի վերաբերմունք Ձեր կողմից՝ փրկելու համար այդ մարզի հաշ ազգաբնակչությունը Ձեզի արդեն ծանոթ անդունդի եզրին հասած ոլբերգական կացությունից:

Ամենախորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
15 սեպտեմբեր 1990 թ



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐԾԱԼ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԳՄԻՏՐԻ ՏԻՄՈՖԵԻ ՅԱԶՈՎԻՆ

Մոսկվա, ԽՍՀՄ պաշտպանության մինիստրություն

Մեծարգո Դմիտրի Տիմոֆեևի, ուզում եմք Ձեզ տեղյակ պահել, որ սեպտեմբերի 13-ին Մեր կողմից հեռագիր է ուղարկվել ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Սերգեյի Գորբաչովին հետևյալ բովանդակությամբ.

«Այսօր ստիպված եմք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովմամբ՝ տեղեկացնելու համար, որ Լեոնաչին Ղարաբաղի հայ ազգաբնակչության վիճակը դարձած է ողբերգական մաս եկեղեցական կյանքում:

Լեոնաչին Ղարաբաղի հոգևոր առաջնորդը՝ Պարզև Եպիսկոպոս, հաղորդեց Մեզ, թե կիրակի օր, 9 սեպտեմբերին, Ամարասի հայկական վանքում (հիմնված 4-րդ դարում), հանդիսավոր պատարագից հետո, գիշերը երկու անգամ ենթարկված է հարձակումների բանակային համազգեստով անձանց կողմից, որոնք կրակ են բացած վանքի պատերին, սարսափի մատնելով հոգևոր ծառայողներին և անգեմ պահակներին: Վտանգի տակ են նոր վերաբացված մեր հինգ վանքերն ու եկեղեցիները և մեր հոգևորականների կյանքը:

Դիմում եմք Ձեզ ծանր ապրումներով, սակայն տակալին հույսով, որ Ձեր բարձր հեղինակությամբ և օրենքի ուժով և ազգությունների ինքնորոշման իրավունքով վերջ կգտնի Լեոնաչին Ղարաբաղում հայերի ողբերգությունը, ինքնավար այդ մարզը դնելով Ձեր պրեզիդենտական իշխանության ներքև: Անհրաժեշտ հայերի համբերության բաժակը վաղուց լցված է, և նրանք պատրաստ են ազատ մեռնելու, քան ստրուկ ապրելու, ինչպես հերոսները Տերմուսիլեի, Վալմիի և Կոչկիովի:

Ձեր չափազանց բազմազբաղ և տագնապալի այս օրերին, խնդրում եմք մի պահ գոնե Ձեր ուշադրությունը ուղղելք դեպի Լեոնաչին Ղարաբաղում տառապող մեր ժողովուրդը և Ձեր խաղաղարար արդար մի վճիռով փրկելք նրանց, հաճուն Ձեր հոչակած հումանիստական մեծ գաղա-

փարների, հոգուտ նաև աղբբեղանցի մեր հարևան ժողովուրդի կյանքի խաղաղության:


Թույլ տվեք վերջացնել Մեր խոսքը Լամարտինի տողերով. «Ուժեղների փառքը տկարների սպառնալույսն է»:


Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
14 սեպտեմբեր 1990 թ.





«ՀՈՎԻԻ ՔԱԶ ԶԱՆԶՆ ԻԻՐ ԴՆԷ Ի ՎԵՐԱՅ ՈՉԽԱՐԱՅ»

Հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունի Արցախյան հարցի արդար լուծումը: Այն իր լարումին է հասել մանավանդ այսօր, երբ հայ ժողովրդի զավակների բողոքի արդար ձայները դեռևս մնում են անարձագանք:

Հայ ազգի որդիները, ազգային արժանապատվության պահպանման իրենց արդար պահանջների բավարարման պայքարի ճանապարհին, ընդունում են այդ պայքարը շարունակելու նորանոր ձևեր, միջոցներ: Հուսահատության և անօգնականության թույլ ձայներ չեն դրանք, այլ ցատու մի հիշ ու արդարության պահանջ, անվախ խիզախում և անձնագոհության քաջ օրինակ:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյան, հայտնի գրող-հրապարակախոս Զորի Բալայան, վաստակաշատ արվեստաբան ու սիրված դերասան Սոս Սարգսյան, Արցախի բարձունքներից իջած և ոգով արի Վաչագան Գրիգորյան ու Մարսիմ Բաբայան, ԽԱՀՄ ժողովրդական սրտագամավորներ, հաղորդիկներ, որոնք իրենց մեջ քաջություն գտան մի կողմ թողնելով այն ամենը, ինչ բարիք է այս երկրի վրա, իրենց կյանքը փռանգի ենթարկելու գնով իսկ հայտարարել քաղաքական հացադուլ, որը տևեց երեք շաբաթ:

Արցախյան խնդրի արդար լուծում, տեղական իշխանությունների վերականգնում Արցախում, զինվորականների տեղաբաշխում Արցախի և Նորքեշանի սահմանագծի վրա: Ահա այս պահանջներն էին դրել հացադուլավորները:

Ազգիս Վեճափառ Հայրապետը օր-օրի ուշադիր հետևում էր հայ ազգի պանծալի զավակների գործունեությանը՝ վախենալով նրանց կյանքի համար: Տեսնելով, որ հացադուլը երկարաձգվում է, և անսպառ իր հայրական

խղճի ձայնին՝ Նորին Սուրբ Օծությունը սեպտեմբերի 15-ին մոզիշ հեռագիր է ուղարկում նրա մասնակիցներին և ապա՝ երկրի պրեզիդենտ Մ. Ա. Գորբաչովին:

Սակայն անցնում էին օրեր, իսկ հացադուլավորների՝ հացադուլը շարունակելու վճիռը մնում էր անդրդվելի: Օրեցօր հյուժվում և թուլանում էին նրանք: Եվ, վերջապես, Մոսկվայից հասնում է անհամաձայնացնող լուրը՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, այդ ծերունազարդ գիտնականը, ֆիզիկական ծանր վիճակում տեղափոխվում է հիվանդանոց:

Զգալով, որ հապաղելն սպևս անհնար է, Նորին Սրբությունը կայացնում է իրեն հասուկ մի իմաստուն որոշում. անձամբ մեկնել Մոսկվա և փորձել համոզել հացադուլավորներին՝ դադարեցնելու այն:

Հաջորդ օրն իսկ, սեպտեմբերի 27-ին, հինգշաբթի, Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը, ուղեկցությամբ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերատեսուչ Տ. Անանիա եպիսկոպոս Արարաշյանի, ուղևորվում է Մոսկվա:

Կարճատև լուռ աղոթք Ս. Էջմիածնի Մայր տաճարում և, ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների, ազգիս Վեհափառ Հայրապետը ճանապարհվում է «Զվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին ադրթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը:

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա, ուր Նորին Սրբությանը բարի գալուստ է մաղթում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանը: Այնուհետև Վեհափառը առաջնորդվում է «Մոսկվա» հյուրանոց, ուր բնակվում էին նաև հայ հացադուլավորները:

Հյուրանոց ժամանելուց անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Անանիա և Տ. Տիրան եպիսկոպոսների, կարճատև այցելություն է տալիս մեր չորս հացադուլավորներին, որոնք գտնվում էին Զորի Բալայանի № 1013 սենյակում:

Անչափ հուզիչ էր այդ հանդիպումը. գրկախառնություն, արցունք, հիացմունք, աղերս ու կոչ՝ ուղղված ամենակարող Աստծուն:

Մոտ կես ժամ նրանց հետ հայրաքար գրուցելուց հետո Նորին Սուրբ Օծությունը վերադառնում է իր համարը՝ խոստանալով երեկոյան նորից այցելել քաջ հալորդիներին:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 28-ին, Վեհափառ Հայրապետը ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության լրատվական կենտրոնում ներկա է լինում մամուլ առույթի, որին մասնակցում էին խորհրդային և օտար լրագրողներ:

Առույթի բացումից հետո, որը կատարում է Մոսկվայում Հայկական Հանրապետության ներկայացուցիչ տիար Էդվարդ Հայկազյանը, խոսքը տրվում է Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետը նախ ներկաներին պատմում է հայ ժողովրդի մասին, թե ինչպես նա աշխարհում առաջինը ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Ապա այն դերի մասին, որ դարերի ընթացքում կատարել է Հայ Եկեղեցին մեր ժողովրդի կյանքում: Ցույց է տրվում նաև այն մեծ բարեկամական կապը, որ մինչ այսօր գոյություն ունի Հայ և օտար Եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների և նույնիսկ՝ ալլադալան համայնքների հետ:

Խոսելով Արցախի այսօրվա վիճակի մասին, Նորին Սրբությունը նախ շեշտում է այդ հարցի արդար լուծման կարևորությունը և ապա համոզմունք հայտնում, որ այս պայքարը պիտի ավարտվի հայ ժողովրդի հաղթանակով: Այս իմաստով էլ, ասում է Վեհափառ Հայրապետը, մեր Մոսկվա գալը և հացադուլավորներին այցելելը ունի մեկ կարևոր նպատակ, նախ արտահայտելու մեր հիացմունքը նրանց քաջ արարքի նկատմամբ և ապա խորհուրդ տալու դադարեցնել հացադուլը և ընտրել պայքարի այլ՝ նորանոր ձևեր:

Իր խոսքի վերջում Նորին Սուրբ Օծությունը պատասխանում է լրագրողների հարցերին:

Մոսկվայում գտնվելու հաջորդ օրերին ևս Վեհափառ Հայրապետը միախորությամբ և հուսադրիչ այցելություններ էր տալիս հացադուլավորներին՝ կարգ ու անկեղծ գրույցներով փորձելով նրանց ետ պահել հացադուլը շարունակելու մտքից: Եվ այդ նրան հաջողվում է. հոկտեմբերի 1-ին հայ ժողովրդի քաջարի զավակները աշխարհին ուղղված իրենց պաշտոնական հաղորդագրության մեջ հայտնում են իրենց որոշումը, որի մեջ ասվում է, թե, անսալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորներին, նրանք դադարեցնում են հացադուլը՝ իրավունք վերապահելով, սակայն, իրենց պահանջների չբավարարման դեպքում ցանկացած ժամանակ վերսկսելու այն:

Սույն հայտարարությունը ցնծությամբ է լցնում բոլոր ներկաների և մանավանդ Վեհափառ Հայրապետի սիրտը:

Հոկտեմբերի 2-ի առավոտյան ժամը 10-ին Նորին Սուրբ Օծությանը Կրեմլում ընդունում է ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովը: Նրանց միջև տեղի է ունենում շուրջ կեսժամանոց հարգալից գրույց, որի ընթացքում շոշափվում են Արցախի և Հայաստանի վերաբերյալ մի շարք քաղաքական հարցեր:

Սույն օրը Վեհափառ Հայրապետը հացադուլավոր հալոդիների հետ ժամանում է Երևան:

Օրանավակայանում հավաքված հարյուրավոր դիմավորողներ մեծ ջերմությամբ ու արցունքներով են դիմավորում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ոտք է դնում հայրենի հողի վրա՝ իր քաջ արժիվներով շրջապատված: Այստեղ են նաև Հայաստանի կառավարության անդամները, հացադուլավորների հարազատները, Մայր Աթոռի միաբանությունը:

Այնուհետև գրկախառնություններ, ծաղիկներ, ուրախություն ու հուզում, որից հետո ավտոմեքենաների շարասյունը ուղևորվում է Հայաստանի Հանրապետության Խորհրդարան:

Այստեղ ևս Խորհրդարանի պատգամավորները հոտնկալա ծափահարություններով են դիմավորում Վեհափառ Հայրապետին և հացադուլի նրստած հերոսներին:


Ընդհանրական խոսքով Խորհրդարանի առջև հանդես են գալիս ժողովրդական պատգամավորներ, հացադուլավորներ Զորի Բալայանը, Սոս Մարգարյանը, Մաքսիմ Բաբայանը և Վաչագան Գրիգորյանը, իսկ եզրափակիչ խոսքով՝ Վեհափառ Հայրապետը:

Բոլոր ելույթները ընդունվում են հոտնկալա ծափահարություններով, որից հետո Ամենայն Հայոց Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, մեկնում է Ս. Էջմիածին:

Նորին Սրբության պապ Մուկվա բարդական հաղթանակի մի պալճատ
Էջ հանդիսացավ մեր ժողովրդի համար: Այն լավագույն ձևով ցույց տվեց
ոչ միայն հայի ըմբոստ ոգին, մինչև մահ պայքարելու իր ժողովրդի ազա-
տության և հայրենիքի անկախության համար զոհվելու ձգտումը, այլ նաև
խմաստությունն ու խոհեմությունը՝ ցանկացած դժվարին պահին անգամ լսե-
լու իր Մեծի խոսքը, ու որոնել պայքարի նոր ձև:

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱԶՅԱՆ





ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Մոսկվա, «Մոսկվա» հյուրանոց

Խորապես հուզված Ձեր ծննդյան ութսուներկուերորդ տարեդարձի առթիվ, հղում ենք Ձեզ Մեր հայրապետական ողջույնը, Մեր հիացումը և եղբայրական սերը:

Ձեր կյանքը թանկ է բոլորիս համար: Դուք պետք է ապրեք տակավին երկար տարիներ համայն մեր ժողովրդի համար:

Արդ, խնդրում ենք Ձեզանից պատրվանից իսկ դադարեցնել հացադուրը և միանալ մեզ՝ շարունակելու մեր ազգի ազատարար պայքարը:


Գրկաբաց ապաստում ենք Ձեզ շուտով Մայր Հայաստան և Սուրբ Էջմիածին: Մեր օրհնությունը նաև Ձեր ազնիվ տիկնոջ և ընտանիքին:


Խաղաղություն ընդ Ձեզ: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
18 սեպտեմբեր 1990 թ.





ԽԱՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈԻՏԱՏ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Մոսկվա, «Մոսկվա» հյուրանոց

Հաստատում եմ իմ 18 սեպտեմբեր 1990 թվակիր հեռագիրը Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ: Այսօր, 20 սեպտեմբեր, հեռագրում եմ Ձեզ իմ ծննդյան տարեդարձի առթիվ: Անձամբ ես պարտք եմ զգում մի քանի տարի ևս ապրել՝ տեսնելու համար մեր ժողովրդի արդար սպասումների իրականացումը: Համոզված եմ, որ Դուք ևս այդ պարտականությունը ունեք: Ես չեմ կարող ապրել առանց Ձեզ: Կրկին խնդրում եմ բավ համարել Ձեր հացադուլը, որ արդեն իսկ իր բարերար դերը կատարեց: Աշխարհի խիղճը ցնցեց: Հրավիրում եմք Ձեզ Հայաստան, որպեսզի միասին մտածենք ու գործենք՝ արագացնելու համար արդարության հաղթանակը:

Միտով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբեր 1990 թ.





ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆԻՆ, ԶՈՐԻ ԲԱԼՍԱՅԱՆԻՆ, ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄՅՈՒՄ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ

Մոսկվա

Խոր հուզումով տեղեկացանք Ձեր հացադուլի հայտարարության մասին, իբրև հուսահատ բողոք ընդդեմ մինչև երկինք աղաղակող անարդարությունների, ողբերգական կացությունների, որոնց ենթարկված է Լեոնային Ղարաբաղի ողջ հայ ազգաբնակչությունը, մանավանդ վերջին ամիսներին, որոնց միակ մեղքն այն է, որ կամենում են ազատ շնչել:

Մենք հայրական վշտի և բողոքի Մեր ձայնն ենք բարձրացնում համայն մեր ժողովրդի հետ միատեղ և ողբում ենք դատը ճակատագիրը դարաբաղցի մեր հավատացյալ զավակների ու հոգևոր խոնարհվում ենք Ձեր հերոսական արարքի առաջ, որ արտահայտում է ողջ հայ ազգի խղճի սլոբազան աղաղակը:

Մեր հայրապետական պարտքն ենք համարում այսօր իսկ Սուրբ Էջմիածնից Մեր աղերսը հղելու Խորհրդային Միության Պրեզիդենտին՝ կոչ անելով նրա մարդասիրական և արդարության զգացումներին:

Ձեր այս տառապանքի պահերին լսեցեք ձայնը Հիսուսի. «Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեցին»:


Ընդունեցեք Մեր արտակցությունը, Մեր քաջալերանքը, Մեր օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
15 սեպտեմբեր 1990 թ.





ԽԱՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈԻՏԱՏՆԵՐ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, ԶՈՐԻ
ԲԱԼԱՅԱՆԻՆ, ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՍԻՄԵՈՆ ԲԱԲԱՅԱՆԻՆ,
ՎԱՀԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Մոսկվա, «Մոսկվա» հյուրանոց

Ծնորհակալություն Ձեր շնորհավորական հեռագրի համար: Ձեր հերո-
ւական արարքը ցնցեց խիղճը ողջ աշխարհի հայության և հայ ժողովրդի
օտարագրի բարեկամների, որով լիովի կատարեց իր դերը: Այժմ պահն է
արդեն, որ Դուք բավ համարեք հացադուլը և մեր կողքին անցնեք նոր
միջոցառումների իրագործման, մինչև հաղթանակը արդարության: Ընդհա-
տել այս պայքարը՝ պիտի լինի մեր մի տեսակ դասալքում, ինչ որ Ձեզ
չի սագի: Դուք պարտավոր եք ապրել ու պայքարել, մի վախենաք կյան-
քից, մի վախենաք հարատև պայքարից: Պայքարի ճանապարհը առավել
հերոսական է, քան նպատակին հասնելը: Ամենայն Հայոց Հայրապետը հրա-
վիրում է Ձեզ թողնել հացադուլը և գալ Երևան՝ ստանալու նրա օրհնու-
թյունը:

ՎԱՀԱԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 սեպտեմբեր 1990 թ.

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր, հույսերով և տագնապներով լի այս օրերին մեզ ուժ ու կորով է առաջին մեր սուրբ հավատը և ազգին անձնվեր ծառայելու Ձեր վսեմ օրինակը: Ձեզ մեր ջերմ մաղթանքները երկարամյա առողջության և տոկունության փափագով: Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ Աստված թող բազմապատկի Ձեր ուժն ու եռանդը՝ մեզ առաջնորդելու մինչև մեր ազգային նվիրական երազանքների կատարում:

Որդիական սիրով՝

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ,
ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ, ՍԻՄԵՈՆ ԲԱԲԱՅԱՆ,
ՎԱՀԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իրակվա,

24 սեպտեմբեր 1990 թ.



Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍԺԸ
ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՅՈՅՑԻՑ
(5 Սեպտեմբեր 1990 թ.)

Հարազատ ժողովուրդ Մեր,

1. Ազգովին գտնում ենք մեր բազմադարեան պատմության փոթորկալից ճանապարհի նոր հանգրուանի առաջ, հռչակումովը Հայաստանի Հանրապետության, իբրև ազատ և ինքնիշխան ազգային պետություն:

2. Ինչպես Մեր երջանկալիչատակ նախորդը՝ Տ. Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսը, 1918-ի Մայիսի 28-ին, Մենք ևս նույն ոգեշնչումով, նույն լույս երազանքներով ողջունում ենք այս պատմական հռչակումը և ընտրությունը մեր նոր հանրապետության նախագահի, վարչապետի և կառավարական կազմի:

Թող Աստուած օրհնի մեր ազգը համայն և մեր հայրենի պետությունը ազատ, զի առաքելալը Դոդոս պատգամում է մեզ երկու հազար տարիների բարձունքից՝ «Դուք յազատության կոչեցեալ էք եղբարք» (Գաղ. Ե.—13): Թող Աստուած անվտանգ ու պայծառ պահի նրանց կեանքի զարգացման ճանապարհը, դէպի իրականացումը մեր ժողովրդի բոլոր արդար սպասումների:

Յ. Այս հանդիսատր պահին, Մենք՝ Հայրապետը Ամենայն Հայոց որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, յանուն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Մեր նուիրական պարտքն ենք համարում բանի և գործով շարունակելու Սուրբ Էջմիածնի առաքելությունը առաւել եռանդով, առաջնորդումը Քրիստոսի սուրբ Աւետարանի լույսով և մեր ազատատենչ նախնեաց հայրենանուէր ոգով, ի շինութիւն մեր ժողովրդի հոգևոր բարոյական կեանքի, ի նորոգ կառուցում մեր վերածնունդ մայր երկրի, և ի վերածաղկում մեր ազգային մշակույթի:

4. Ժամանակն է, որ մեր ժողովուրդը թէ՛ մայր երկրում և թէ՛ արտասահմանում ոգեկան նոր թռիչքով դուրս գայ մտածումի և գործելու հին կաղապարներից և նույն առաքելալի խօսքերով՝ «Մաքրեցէք հին խմորը որպէսզի լինէք նոր զանգում» (Ա. Կորնթ. Ե.—7):

Հարկ է նաև դուրս գալ ազգային մտածողութեան նեղ սահմաններից և մեր հարազատ վաերական ազգայինը ամրապնդել, վերաթևոցել ստեղծագործութեան, բարձրացնելով այն մեր օրերի համամարդկային ըմբռնումների և արժէքների մակարդակին՝ մշակութային, ընկերային և քաղաքական կեանքում:

Աստուած և աշխարհը համայն վկայ են ահա թէ սուրբ գրական Արարատի ստորոտին, շարունակում է ապրել ու մաքառել բազմադարեան ժողովուրդը հայոց, այսօր իբրև ազատ ու ինքնիշխան ազգութիւն, իբրև մի մարմին, մի հոգի ու մի կամք, իբրև ժամանակակից ժողովրդավար իրաւական մի պետութիւն որ յառաջ է ընթանում ազնիւ պալաքարով դէպի աղբիւրը լուսի:

5. Մնում ենք աղօթող, որ համայն մեր ժողովուրդը իր բոլոր կազմակերպութիւններով, իր բոլոր հասարակական խմբաւորումներով ու գաղափարախօսական հոսանքներով, պայծառ գիտակցութեամբը հայրենիքի անվտանգութեան ու ազգի գերագոյն շահերի, պահի պահպանի իր եղբայրական միասնութիւնը, մտածելու հաւասարակշռութիւնը և գործելու օրինական կարգապահութիւնը: Զի անիշխանութիւնը ժխտումն է պետութեան ինքնիշխանութեան և ժողովրդի ազատութիւնների:


6. Մեր մաղթանքն է որ ինքնիշխան հանրապետութեանց միութեան մէջ, հաւ Անդրկովկասի տարածքի ազգութիւնների միջև, ամրապնդուեն համերաշխ գործակցութեան յարաբերութիւններ, հիմնուած ճշմարտութեան և արդարութեան, մարդու իրաւանց և ազգութիւնների ազատ ինքնորոշման հրամայականի վրայ:

Համոզուած ենք, որ այս սկզբունքների կեանքի կոշմամբ, հնարավոր կը դառնայ իրապէս արդար լուծման ճանապարհը գտնել Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան բնական և օրինական պահանջքի, իր ճակատագիրը ինք տնօրինելու, իր ազատ կամքով: Վասնզի ազգութիւնների միջև դժուար թէ խաղաղութիւն և եղբայրութիւն հաստատուի առանց յարգելու տուեալ ազգութիւնների ինքնորոշման իրաւունքը: Այս է, կարծում ենք, մեր օրերին Խորհրդային Միութեան բարձրագոյն ղեկավարութեան որդեգրած վերակառուցման և ժողովրդավարութեան նոր, յուսալի քաղաքականութեան հիմքը:

Այս սկզբունքներով առաջնորդուած, անհրաժեշտ է ամեն գնով խուսափել ազգամիջեան արհիւակի առճակատումներից, որոնք ոչ ոքի չեն կարող ոչ մի բարիք խոստանալ:

7. Մենք կոչ ենք անում մեր հայրենի կառավարութեան նորընտիր ղեկավարներին, որ ամէն ջանք ի գործ դնեն ի պաշտպանութիւն մեր ժողովրդի ազնիւ իղձերի կենսագործման՝ ինաստութեամբ ու խորամտութեամբ, զի հայրենիքի կենսական շահերի ամրապնդումը հանդիսանում է գերագոյն հրամայականը:

«Եւ արդ, Տէր Աստուած հարցն մերոց, մեր անենեքեան հայցեմք ամենառատ յողորմութենէդ բուժմէ, զի պահեսցես և պահպանեսցես յամայր անն գնորահոշակ Հանրապետութիւն Հայաստանի, առ ի շնորհել ազգիս հայոց զլուսաւորեալ պաշտոնակերպում, զվերելք շինարար և զխաղաղութիւն կենարար, այժմ և միշտ. ամէն»:



ԱՎԱՐՏԱԾԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 20-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի չորս շրջանավարտների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոգոսյանը (ատենավար), Մայրավանքիս միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Շրջանավարտների ապարտաճանի պաշտպանության բննիչ հանձնաժողովի կազմում էին՝ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը (հանձնաժողովի նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ Պարգև Ծահբազյանը և Երվանդ Մելքոնյանը:

Նախ ընթերցվեց ներկայացված յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը, որից հետո յուրաքանչյուր շրջանավարտ հանդես եկավ իր ավարտաճանի բանավոր պաշտպանությամբ և պատասխանեց տրված հարցերին:

Իրենց ավարտաճանի պաշտպանությամբ հանդես եկան.

1. Տ. Մկրտիչ քհն. Երանյան.

Ավարտաճանի թեման էր՝ «Պետրոս Բերդումյան, հոգևորականը, գործիչը, «Յիսուս Փեսայ» և «Ողբ» պոեմները»:

Աշխատանքը բաղկացած էր 135 մեքենագիր էջերից և ընդգրկում էր Պետրոս Բերդումյանի գրական ծառանգությունը, «Յիսուս Փեսայ» և «Ողբ» պոեմների համեմատական բնագիրը և զուգահեռները՝ Աստվածաշնչական ակզբնադրյունների հետ:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց «գերազանց»:

2. Ալվարդ սրկ. Զարգարյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Պետրոս Բերդումյանի տաղերը»:

Աշխատանքը բաղկացած էր 260 մեքենագիր էջից (ուսումնասիրություն՝ 50 էջ, և բնագիր՝ 210 էջ), որտեղ հեղինակը ներկայացրել էր Բերդումյան բանաստեղծին՝ վեր հանելով նրա ավելի քան հարյուր տաղերի գրական-գեղարվեստական արժեքը:

Ներկայացված ուսումնասիրությունը արժանացավ «գերազանց» գնահատականի:

3. Էդվարդ սրկ. Միրզախանյան.

Ավարտաճառի թեման էր «Գրիգոր վարդապետ Ակնոացու կյանքը և մատենագրական ժառանգությունը»:

Ուսումնասիրությունը բաղկացած էր 70 մեքենագիր էջերից և ներկայացնում էր ԺԳ դարի նշանավոր վարդապետ Գրիգոր Ակնոացու մատենագրական ժառանգության միայն հինգ միավորները և դրանց գրական-գեղարվեստական արժեքն ու վերլուծությունը:

Ներկայացված աշխատանքը արժանացավ «գերազանց» գնահատանքի:

4. Հովհաննես սրկ. Անտոնյան.

Ավարտաճառի թեման էր «Ավետիք Եվդոկիացու կյանքը և մատենագրական ժառանգությունը»:


Ավարտաճառը բաղկացած էր 65 մեքենագիր էջերից և իր մեջ բովանդակում էր Հայ Եկեղեցու այդ աննկուն երախտավորի բարդ ու դժվարին կյանքը, եկեղեցանվեր գործունեությունը և գրական ստեղծագործությունների արժեքն ու վերլուծությունը:

Ներկայացված ուսումնասիրությունը գնահատվեց «գերազանց»:

Ավարտաճառերի պաշտպանությունից և հոգևոր ճանապարհի դիպումների հանձնման հանդիսավոր արարողությունից հետո, շրջանավարտներին ուղղված շնորհավորանքի ու բարեմաղթության խոսք ասաց ատենավար գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոգապալյանը:

Հաջորդ օրը շրջանավարտներին ընդունեց Վեհափառ Հայրապետը և իր օրհնությունը բաշխեց բոլորին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է շրջանավարտներին՝ մաղթելով, որ տալազայում նրանք դառնան անխոնջ մշակները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:



ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 22-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11.00-ին, հոգևոր գեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափսո Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1990—1991 ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունը:

Նախագահական տեղանի շուրջ, Վեհափսո Հայրապետի կողքին, տեղ էին գրավել Ս. Սիրոն արքեպս. Մանուկյանը, Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպս. Սանթրուքյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես արքեպս. Պողապպյանը և հոգևոր գեմարանի տեսուչ Ս. Անանիա եպս. Արաբաջյանը:

Ներկա էր նաև Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին ատընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Զարգարյանը:

Հոգևոր գեմարանի նոր ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր գեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայրավանքի պաշտոնատեղությունը, մեծ թվով հյուրեր և ուսանողների ծնողներ:

Հանդիսությունն սկսվում է Տերունական աղոթքով: Այնուհետև հոգևոր գեմարանի սաների կատարմամբ հնչում է գեմարանի քայլերգը և Վարդան Արեւելցու հոգեպարար շարականը՝ «Որք զարդարեցին»: Ապա հոգևոր գեմարանի փոխտեսուչ Նաթան վրդ. Հովհաննիսյանը Ս. Ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո գեմարանի սաները, դեկլամարությամբ գեմարանի երաժշտության դասախոս Հակ. Ֆրունձյանի, կատարում են «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հանդես է գալիս հոգևոր գեմարանի տեսուչ գերաշնորհ Ս. Անանիա եպս. Արաբաջյանը: Սրբազան հայրը ուրախությամբ նշում է, որ վերաբացվող տարեշրջանում ուսանողության բաժանվել կրկնապատկվել է՝ նոր ընդունելությամբ և քանանալից լսարանի բացումով: Անանիա արքեպս. հույս է հայտնում, որ գալիք սերունդը ևս եկեղեցանվեր ոգով ու մտավոր կարողությամբ պիտի կարողանա բավարարել մեր ժողովրդի հոգևոր պահանջները ի Հայաստան և ի ափսոսա աշխարհի:

Այնուհետև սրբազան հայրը ներկայացնում է տեսչությանը և դասախոսական կազմին, կազմ, որ համալրվել է նոր դասախոսներով՝ հրավիրված այլ ուսումնական հաստատություններից:

Ծարունակելով խոսքը, ճեմարանի տեսուչն իր երախտագիտությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ դեպի ճեմարանն ունեցած նրա հայրական ջերմ հոգատարության համար, և ճեմարանի տեսչության անունից վստահեցնում Նորին Սրբությանը՝ «...որ տեսչության և դասախոսական կազմի համատեղ ջանքերով կարելի պիտի լինի 1990—1991 ուսումնական տարեշրջանը դարձնել ավելի արդյունավետ և բարեբեր»:

Այնուհետև սրբազան հայրը հրավիրում է Հայոց Հայրապետին՝ բաշխելու իր օրհնությունը ճեմարանի ուսանողությանը և բոլոր ներկաներին:

Նորին Սրբությունն իր հայրապետական ողջույններն ու բարի մաղթանքներն է բերում հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը: Վեհափառ Հայրապետը սրտի բերկրանքով է խոսում այն իրողության մասին, որ համալս հայության ազգային և հոգևոր վերագարթոնքի այս պայմաններում, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության համար մի աննկարագրելի լայն ասպարեզ է բացվել: Մեր ժողովրդի զավակները, վերադառնալով իրենց հայրերի արմատներին, մեծ խանդավառությամբ ու ոգևորությամբ են վերաբերվում մեր ազգային-հոգևոր մշակույթի արժեքներին:

Ծարունակելով իր խոսքը, Նորին Սրբությունը շեշտեց Եկեղեցու և հոգևորականության կարևորությունը այս նպաստավոր և պատասխանատու ժամանակաշրջանում. «Եվ այս իրականությունը թելադրում է մեզ, որ այստեղ մեր ուժերը ավելի կենտրոնացնենք հոգևոր ճեմարանի գործունեության վրա, քանի որ հոգևոր ապաստանների մեծ կարիք ունենք»:


Ապա, իր խոսքն ողղելով ճեմարանի սաներին, Վեհափառ Հայրապետն ասում է. «Քիչ առաջ, սիրելի ուսանողներ, լսեցիք Ս. Ավետարանից ընթերցում Հիսուսի նշանավոր «Մերմնացանի առակը»: Այս առակը համարվում է Ավետարանի մարգարիտ առակներից մեկը, որն իր մեջ պարունակում է հավիտենական ճշմարտություն ոչ միայն հոգևոր կյանքի համար, այլև մարդկային աշխարհի համար:

Հիմա դուք, սիրելի սաներ, հենց այն հողն եք, որտեղ սերմնացանը իր սերմերն է տարածում: Զեզանից նրանք, ովքեր պատրաստ են մաքուր սրտով ընդունելու այդ սերմերը, աչի՜նքն՝ այն ուսույթ, որ ձեզ ավանդվում է այս նվիրական հարկի տակ ձեր դասախոսների կողմից, կարող են մեկի տեղ բազմապատիկ արդյունք տալ»:

Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը հայրական պատգամով դիմում է ուսանողությանը, որ նրանք պատրաստ լինեն իրենց ուսերին կրելու մեր ժողովրդի ճակատագիրը, սերտեն մեր մատենագրության բազմադարյան ժառանգությունը, միշտ ամուր, անջարժ պահեն մեր Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մայր հայրենիքը:

Հոգևոր ճեմարանի վերաբացման սույն հանդիսությունն ավարտվում է «Հայր մեր»-ի խմբովին երգեցողությամբ և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԷԴՎԱՐԴ ՍՐԿ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Սուրբիաս արք. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *

Հուլիսի 8-ին, կիրակի.— Գիտ տփոյ Սրբունոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Սերովբէ վրդ. Իսախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

* *

Հուլիսի 15-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Մակար քնն. Տերտերյանը:

* *

Հուլիսի 24-ին, կիրակի.— ՎԱՐԳԱՎԱՌ: Պաշտօնակերպութիւն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ հանդիսավոր ա. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսէս արքեպս. Պողոսպալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* *

Հուլիսի 23-ին, երկուշաբթի.— Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քին. Բաղրամյանը:

* *

Հուլիսի 29-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Զաքարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *

Օգոստոսի 5-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քին. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ ոգեշուշ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը: Նա իր քարոզում ողջունեց ողջ հայ ժողովրդին՝ հայրենասեր ու դեմոկրատական ուժերի հաղթանակի առթիվ, և շնորհավորեց ա. պատարագին ներկա գտնվող Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նորընտիր նախագահ պրն. Լևոն Տեր-Պետրոսյանին:

Հավարտ պատարագի, ի բացակայության Ամենայն Հայոց Հայրապետի ի Մայր Աթոռ, նորընտիր նախագահին Վեհաբանում ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը:

* *

Օգոստոս 12-ին, կիրակի.—ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՆԾԱՆՆԻ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ա. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* *

Օգոստոսի 13-ին, երկուշաբթի.— Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քահանա Ֆրանկյանը:

2

* *

Օգոստոսի 19-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *

Օգոստոսի 26-ին, կիրակի.— Տօն գիտի գօտույ Սրբուհույ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Ս. Մամիկոն արք. Քիլեճյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշանի քարոզ խոսեց:

* *

Սեպտեմբերի 2-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Ս. Կոմիտաս քնն. Հարությունյանը:

* *

Սեպտեմբերի 9-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Ս. Նաթան վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *

Սեպտեմբերի 16-ին, կիրակի.—**ԽԱՂԵՐԱՅ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ հանդիսավոր ա. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերազնորն Ս. Ներսես արքեպս. Պողոսպալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* *

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի.—**ՅԻԶԱՏԱԿ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Ս. Մակար քնն. Տերտերյանը:

* *

Սեպտեմբերի 23-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերազնորն Ս. Եփրեմ եպս. Թապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:


Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Սեպտեմբերի 30-ին, կիրակի.— **Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ա. սեղանի վրա, ա. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերազնորն Ս. Ներսես արքեպս. Պողոսպալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց մաղթանք Հայրապետական՝ նվիրված Վեհափառ Հայրապետի գահակալության 35-ամյակին:



ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅԻ ՏԱԾԱՐՈՒՄ
(Կիրակի, 3 հունիս 1990 թ., Հոգեգալուստ)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորաց նորոգման, քանզի նորոգողն էից հոգին էջ ի Ս. վերնատունն, որով նորոգեցան դասք առաքելոց»:


«Այսօր երկնայինները ուրախացան երկրավորների նորոգմամբ, որով հետև էությունը նորոգող հոգին իշավ սուրբ վերնատանը, նրանով նորոգվեցին առաքյալների խմբերը»:

Այսօր Հոգեգալուստ է, Պենտեկոստե: Չատկին հաջորդող հիսուն օրերը ահալասիկ այսօր իրենց լրմանն են հասել: Մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, հիսուն օր առաջ մեռելներից հարություն առավ, մահվանից ի կյանք փոխադրվեց և մահվան դեմ տարած իր փառավոր հաղթանակով մեզ ապացուցեց, որ մահը կյանքի վերջին սահմանը չէ, այլ՝ մի նոր կյանքի, հալիտենական, աննյութական կյանքի սկիզբ է:

Իր հարությունից հետո, մեր Տերը քառասուն օր իր աշակերտների հետ անցկացրեց՝ ապացուցելով, որ ինքն էր հարուցյալը, և աշխատավ աշակերտների խախտված հավատը վերանորոգեց: Ապա, քառասուն օրերի ավարտին, իր աշակերտների հետ բարձրացավ Համբարձման լեռը և այնտեղ իր վերջին պատգամները տալուց հետո՝ երկինք բարձրացավ: Համբարձումից առաջ մեր Տիրոջ վերջին պատգամը հետևյալն էր. «Նստարութ ի քաղաքիդ, Երուսաղէմ, մինչև զգեանուցուք զօրութիւն ի բարձանց» խոսքերը: «Մնացեք Երուսաղէմ քաղաքում, մինչև բարձունքներից զորություն ստանաք»:

Հիսուսի աշակերտները համբարձումից հետո տասը օր շարունակ, ըստ տերունական պատվիրանի, միաբան և միախոհ հավաքվում էին Երուսաղէմ քաղաքում՝ վերնատանը, այնտեղ ոգեկոչում հիշատակը իրենց վարդապետի, սաղմունքներ քաղում, աղոթքներ ասում և հաց ու գինի նաշակում ու ըմպում ի հիշատակ վերջին ընթրիքի, երբ Հիսուս հացն օրհնելուց և բաժանելուց, ապա գինին օրհնելուց և ըմպելուց հետո ասել էր. «Չալս արարեք վասն իմոյ յիշատակի»: Այսպիսով նա հիմնել էր Ս. Հաղորդության սրբազան խորհուրդը:

Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, առաքյալները համախումբ նստել



ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(Կիրակի, 3 հունիս 1990 թ., Հոգեգալուստ)

«Յանուն Հոր և Որդու և Հոգու և Սրբու. ամեն»:

«Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորաց նորոգման, քանզի նորոգողն էից հոգին էջ ի Ս. վերնատունն, որով նորոգեցան դասք առաքելոց»:

«Այսօր երկնայինները ուրախացան երկրավորների նորոգմամբ, որովհետև էությունը նորոգող հոգին իշավ սուրբ վերնատանը, նրանով նորոգվեցին առաքյալների խմբերը»:

Այսօր Հոգեգալուստ է, Պենտեկոստե: Զատիկն հաջորդող հիսուն օրերը անավասիկ այսօր իրենց լոմանն են հասել: Մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, հիսուն օր առաջ մեռելներից հարություն առավ, մահվանից ի կյանք փոխադրվեց և մահվան դեմ տարած իր փառավոր հաղթանակով մեզ ապացուցեց, որ մահը կյանքի վերջին սահմանը չէ, այլ՝ մի նոր կյանքի, հալիստենական, աննյութական կյանքի սկիզբ է:

Իր հարությունից հետո, մեր Տերը քառասուն օր իր աշակերտների հետ անցկացրեց՝ ապացուցելով, որ ինքն էր հարուցյալը, և այդպիսով աշակերտների խափսված հավատը վերանորոգեց: Ապա, քառասուն օրերի ավարտին, իր աշակերտների հետ բարձրացավ Համբարձման լեռը և այնտեղ իր վերջին պատգամները տալուց հետո՝ երկինք բարձրացավ: Համբարձումից առաջ մեր Տիրոջ վերջին պատգամը հետևյալն էր. «Նստարոք ի քաղաքիդ յԵրուսաղեմ, մինչև զգեճուցուք զօրոթիւն ի բարձանց» խոսքերը: «Մնացեք Երուսաղեմ քաղաքում, մինչև բարձունքներից զօրություն ստանաք»:

Հիսուսի աշակերտները համբարձումից հետո տալը օր շարունակ, ըստ տեղումնական պատվիրանի, միաբան և միախոհ հավաքվում էին Երուսաղեմ քաղաքում՝ վերնատանը, այնտեղ ոգեկոչում հիշատակը իրենց վարդապետի, սաղմունքը քաղում, աղոթքներ ասում և հաց ու գինի ճաշակում ու ըմպում ի հիշատակ վերջին ընթրիքի, երբ Հիսուս հացն օրհնելուց և բաժանելուց, ապա գինին օրհնելուց և ըմպելուց հետո ասել էր. «Չայս արարեք վասն իմոյ յիշատակի»: Այսպիսով նա հիմնել էր Ս. Հաղորդության սրբազան խորհուրդը:

Երբ Պենտեկոստի օրերը լրացան, առաքյալները համախմբ հասել

ազնիվ նպատակի իրականացման ճանապարհի սկզբին այդ նպատակը հետապնդող մարդիկ պետք է լինեն միասնական, համախոհ և միակամ: Որևէ կոտորակում պատճառ կրպտնա այդ ազնիվ նպատակի մասնակի կամ ամբողջական ձախողման:

Բագրատունյաց իշխանության կործանումից հետո, 11-րդ դարի սկզբին, հայ ժողովուրդը Արևելյան Հայաստանում շուրջ ինը հարյուր տարի կորցրեց իր պետականությունը: Այդ ինը հարյուր տարիների ընթացքում հա բազմաթիվ ոտխների արշավանքներին ենթարկվեց՝ անընդհատ կոտորակվելով: Իրենց հայրենի երկիրը թողեցին ու հեռացան հարյուր հազարավոր հայեր, հաստատվելով Արևելյան Եվրոպայի տարբեր, համեմատաբար խաղաղ անկյուններում, այնտեղ փորձեցին ստեղծել մշակույթ ու հայրենի տան ավանդական ջերմությունը: Բաժանման ու կոտորակման պատճառով բոլորն էլ ձուլվեցին ու անհետացան: Դրան հակառակ, երկրում մնացողները, հակառակ անընդմեջ բազում հալածանքների ու կեղեքումների իշխող ցեղերի և ժողովուրդների կողմից, կարողացան ազատագրական պայքարներ կազմակերպել և, իբրև արդյունք դրան, 1918 թվականին, հայ ժողովրդի պատմության ամենադառն և փորձություններով լեցուն պահին, Սարգսրապատում, Բաշ Ասարաճում և Ղարաքիլիսայում իրենց ցուցաբերած քաջության շնորհիվ ու նաև առնպատելի քաղաքական հանգամանքների բերումով կարողացան վերահաստատել հայկական պետականությունը: Ահա այդ բոլորը արդյունք էր միասնականության, համագործակցության և համախոհության:


Փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր հայ ժողովուրդը ի Հայաստան և ի ափյուռա աշխարհի ունի իր մաշը հայրենիքը, իր քաջ որդիների արյունից ծրած գեղեցիկ մի ծաղիկ: Սակայն հարկավոր է, որ քաղաքական վերիվայրումների այս դժնդակ և բախտորոշ օրերին կարողանանք մեր երկիրը պահել ապահով և անվտանգ: Այս օրերին ավելի քան երբեք կարիքն ունենք մենք միության, համագործակցության, միասնականության և սրբտակցության: Թուլակամներ ու պատեհապաշտներ չպետք է պղտորեն մեր ժողովրդի մաքուր զգացումները և հայրենասիրական ոգին: Նորելուկ հերոսներ չպետք է վրդովեն մեր երկրի ներքին խաղաղությունը: Հայրենասիրական ու մարդասիրական նույն սկզբունքներից մղված՝ անհրաժեշտ է, որ մենք դիմագրավենք քաղաքական ու տնտեսական բոլոր դժվարությունները՝ հեռու մնալով ծայրահեղ արարքներից, կործանարար մոլորություններից:

Սիրելի հավատացյալներ, որպեսզի կարողանանք մեր հայրենի տրբազան հողը մեր ձեռքում ամուր պահել, որպեսզի մեր ոտխներին մեր պալաներով չուրախացնենք, և որպեսզի ի գուր անմեղ հաշի արյուն չթափվի ոչ մեկ ժամանակ և ոչ մեկ տեղ, անհրաժեշտ է, որ լինենք միասնական, համախոհ և միասիրտ: Հայրենիքը նրան է պատկանում, ով այն սիրում է մաքուր սրտով, ով խարդախ ու կեղեքող չէ, ով սիրում է իր հայրենակցին ինչպես իր եղբորը: Հայրենիքը դու ես, ես եմ, նա է, բացի հող լինելուց:

Մաղթում եմ, որ Հոգեգալստյան այս օրը լինի հոգեպես և ներքուստ աստվածային շնորհներով զարդարվելու օր, մեզ համար լինի նաև գիտակցության օր, որպեսզի լինենք սիրով ու միաբան, միմյանց հանդեպ ցույց տանք կարեկցանք ու հարգանք, բոլորանվեր սրտով սիրենք մեր սուրբ հայրենիքը և ստահոգվենք նրա շուտափույթ վերականգնումով ու ծաղկումով:

Քիչ ցետո հոգեհանգստյան մասնավոր պաշտոն ենք կատարելու մայիսի 27-ին Երևանում զոհված մեր եղբայրների և քույրերի հոգիների խաղաղության համար: Թող Տերը քաղցրությամբ ընդունի նրանց հոգիները և մխիթարություն պարգևի նրանց հարազատներին: Նրանք հավետ կապերեն մեր շողովրդի գիտակցության մեջ:

«Օրհնությիւն ի բարձունս, երդիւն ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակս և հրաիրեցին զերկինս ի յնրկիր»․ ամեն:





ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 22-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնեց Փրկչի Պաշտասկերպության՝ Վարդավառի տոնը, որը հանդիսանում է Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը:

Այդ օրը Վիրահայոց թեմի համար եղավ կրկնակի ուրախության օր, քանի որ Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Թբիլիսիի Ս. Գեորգ Մայր եկեղեցում, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերադարյանի, կատարվեց Կարլոս սարկավագ Հարությունյանի քահանայական ձեռնադրությունը:

Նախորդ օրը, հուլիսի 21-ին, երեկոյան ժամերգությունից հետո, գերաշնորհ սրբազանի կողմից և Տ. Հովհաննես ավագ քահանա Դանիելյանի խարտավիլակությամբ, կատարվեց «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Վիրակի օրը հոծ բազմություն էր հավաքվել Ս. Գևորգ եկեղեցում: Նրանց համար ևս բաղձալի օր էր, քանզի մի հոգևորականով ևս պիտի ավելանար Վիրահայոց թեմը:

Ս. պատարագի ընթացքում նորրեմսն ճնրադիր բարձրացավ Ս. Խորան, ձեռքերը վեր բարձրացրած դարձավ դեպի ժողովուրդը՝ հրաժարվելով աշխարհից, կոչվեց «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն Սրբոյ Եկեղեցւոյ»:

Այնուհետև պատարագիչ առաջնորդ սրբազանը, դնելով ձեռքը նորրեմսի գլխին, հանդիսավորությամբ կարդաց ձեռնադրության աղոթքը. «Ես դնեմ զձեռս ի վերայ տրաւ և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան»: Դպիրները միաբերան վկայեցին՝ «Արժանի է»:

Եվ անա ձեռնադրության ամենախորհրդավոր ու գեղեցիկ պահն է. գերաշնորհն սրբազանը սրբալույս մեռնով օծում է նակատն ու ձեռքերը նորընծա քահանայի՝ վերանվանելով նրան Ս. Տաթև քահանա:

Տ. Տատև քահանան տալիս է իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղության ամենեցուն»:

Ս. պատարագի ավարտին գերաշնորհ Տ. Գևորգ սրբազանը նորընծային ներկայացնում է ժողովրդին, տալիս նրան իր հայրական հորդորներն ու մաղթանքները՝ լինել հավատարիմ և նվիրյալ զինվորը Քրիստոսի Եկեղեցու, ծառայել Հայ Առաքելական Եկեղեցուն և հալ ժողովրդին:

Տ. ՏԱԹԵՎ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1961 թ. հուլիսի 21-ին Սուխումիում (Վրաստանի Հանրապետություն):

1968—1971 թթ. սովորել է տեղի № 9 միջնակարգ դպրոցում:

1971—1978 թթ. շարունակել է կրթությունը Թբիլիսիի № 74 միջնակարգ դպրոցում:

1978—1983 թթ. սովորել և ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստանալով ինժեներ-շինարարի կոչում:

1983—1985 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1988 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1989 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:


1990 թ. ավարտել է հոգևոր ճեմարանի դասընթացը:


Մայր Աթոռում իր քառասունքն անցկացնելուց հետո, հոգևոր ծառայության կնիքն Սուխումի՝ որպես հոգևոր հովիվ:

*

Y *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծային և հույս հայտնում, որ նա կլինի աշխարհի ապաստվոր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և աշխարհապետ հալ ժողովրդի:





ԼՈՒՐԵՐ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԷՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՋԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ
ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄՈՒՄ

Շաբաթ 14 եւ Կիր. 15 Յուլիս 1990 շաբաթավերջը հոգեկան վերանորոգման առիթ էր Սիտնիի հաշտության համար:

Աստորալիոյ եւ Նոր Զելանդացի Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան եպս. Պալիօգեան, Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ քահանայ ձեռնադրեց Յակոբ Սրկ. Գարագաշեանը:

Յակոբ Սրկ.ի կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Շբ. 14 Յուլիսին, երեկոյեան կիրակնուտի ժամերգութենէն ետք: Խարտալիակի պաշտօնը կատարեց Նորայր Քհն. Բաթանեան, աղբյթերակալութեամբ Գեորգ Սրկ. Շանոյեանի եւ Յարութիւն Սրկ. Հանրմեանի:

Ընծայացուն եկեղեցւոյ դռնէն դէպի դաս առաջնորդուեցաւ շարականներու եւ աղօթքներու ընդմէջէն, որու ատարին տեղի ունեցաւ ուղղափառ դասանութեան եւ կամաւոր ծառայութեան հարցադրումը, համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ կանոններուն ու դասանութեան:

Կոչման արարողութեան ատարին, Առաջնորդ Ս. Հայրը ներկայ հաստացելոց բացատրական մը տուաւ քահանայական կոչման, ձեռնադրութեան եւ օծման մասին:

Կիր. 15 Յուլիսին, Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ Եպիսկոպոսական հանդիսատար Ս. Պատարագ մատուց Առաջնորդ Աղան Ս. Հայրը: Ս. Պատարգի երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դպրաց Դաս երգչախումբը՝ ղեկավարութեամբ Դպրապետ Վարդան Էմսաեանի:



Ձեռնադրության արարողությունից մի պահ

«Ձի ողորմած...» աղօթքէն ետք, սկիզբ առաւ ձեռնադրութեան արարողութիւնը. ընծայացուն ծնրադիր խորան բարձրանալով, Ձեռնադրիչ Ս. Հօր օրհնութիւնը ստացաւ, եւ սպաւ ժողովուրդին դառնալով «Աստուածային» երգեցողութեան ընթացքին աշխարհային կեանքէ հրաժարեցաւ: Ապա աղօթքի ընթերցման պահուն սարկաւագական ուրարը փորձարարի վերածուեցաւ ի նշան Քրիստոսի բաշցը լուծին:

Ս. Պատարագը շարունակուեցաւ մինչեւ «Ռիչուն» ուր կրկին աղօթքներու ընթացքին յաջորդաբար Փիլոն, սաղաւարտ, շորջաւ, գօտի ու քահանայական լրիւ զգեստը շնորհուեցաւ ընծայացուին:

«Առաքելոյ Աղանդ» շարականի երգեցողութեան աւարտին, Ձեռնադրիչ Ս. Հայրը Սրբալոյս Մխտոմով օծեց ընծայեալի ճակատը եւ երկու ձեռ-

քերու ակերը, Յակոբ Սրկ-ը վերանուանելով Պարթե քահանայ, Պարթե հայրապետներու յիշատակին:

Օծումէն ետք Ս. Հայրը նորընծային յանձնեց Ս. Սկիհը, անոր տալով պատարագելու իշխանութիւն, ապա նորած Պարթե քահանայ հայրը իր առաջին «Խաղաղութիւն»ը բաշխեց հաւատացեալ ժողովուրդին:

Այս հոգեպարար արարողութեան ատարտին, Առաջնորդ Ս. Հայրը խօսեցաւ հոգեշունչ քարոզ մը, նորած Պարթե քահանային վերջիշեցնելով հաւատքի ու նուիրումի ոգին, թելադրելով որ իր ծառայութիւնը մատուցանէ հայ հաւատացեալ ժողովուրդին, ընթանալով Քրիստոսի ճանապարհէն ու Պարթե հայրապետներու ուղիէն:

«Ողջոյն»ի պահուն եկեղեցական դասը Ձեռնադրիչ Ս. Հօր առաջնորդութեամբ ողջոյնը ստացաւ Նորընծայ Պարթե քահանայի ճակատէն ու ձեռքերէն: Նոյնը տեղի ունեցաւ պատարագի ատարտին՝ աշխմբոյրով, խոտներամ ժողովուրդի կողմէ:

Յատարտ Ս. Պատարագի նորընծայ Պարթե քահանան առաջնորդարանէն ներս ընդունեց եկեղեցոյ պաշտօնական մարմիններու եւ պաշտօնական անձնատրութիւններու շնորհատրանքները: Եկեղեցոյ Ատենապետ, Տիար Կարօ Սէթեան յանուն վարչութեան շնորհատրական խօսքով հանդէս եկաւ:

Ձեռնադրութեան հոգեպարար արարողութեան ներկայ եղան Արամայիս Ա. Քհն. Միրզալեանը, Հայ Աւետարանական եկեղեցոյ Հովիւ Վեր. Յովհաննէս Գարճեանը, Աստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդի ներկայացուցիչներ եւ այլ անձինք:

Պարթե քահանայի կնքահայրութեան պաշտօնը սիրալոյսով կերպով յանձն առաւ Սիտնիի եկեղեցոյ Ս. Գրիգոր Լուսատրիչ Դպրաց Դաս երգչախումբի Վարչութեան Ատենապետ, Յարութիւն Քէօթոյլանեանը, եկեղեցաւեր եւ հայրենասէր հայորդի մը:

Պարթե Զահանայ Գարագաշեան, ծնած է Պոլիս 1942-ին: Նախակրթարանի ուսումը ստացած է Պոլսոյ Եսայեան վարժարանի մէջ, որմէ ետք նետում է կեանքի ասպարէզ, այդ տարիներու ընթացքին միշտ դիմած է ինքնագարգացման, կապ պահելով հայ գրի ու լեզուի հետ:

Փոքր տարիքէն ծառայած է Պէյօղլուիի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, որ եւ ստացած է դպրոցեան եւ տարկաագոյթեան աստիճանները:

1985-ին գաղթած է Աւստրալիա եւ բնակչութիւն հաստատած Սիտնիի մէջ. ժամանման առաջին օրէն սիրով ու նուիրումով ծառայած է Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ:

Պարթե քահանայ ամուսնացած է 1969-ին ու հայր է երկու աղջիկ գաւակներու:

Պարթե քահանային կը մատենք որ ըլլայ «Մշակ առանց ամօթոյ»:

Սիտնի, Աւստրալիա,
16 Յուլիս 1990

ԴԻԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.-Ի

ՀՐԱԺԵՇԻ ՊԱՏԱՐԱԳ

Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ երկարամեայ հովիւ Արամայիս Ա. Քհն. Միրզալեան, յառաջացեալ տարիքի ու փառատողչութեան պատճա-

նով, խնդրանք ներկայացուցած էր Թեմիս Առաջնորդ Ս. Հօր, հանգստեան կոչուելու համար:

Առաջնորդ Ս. Հայրը, Թեմական Խորհուրդի եւ Սիսնիի Եկեղեցւոյ Վարչութեան հետ խորհրդակցելէ ետք, վստեքացուց Ս. Հօր խնդրանքը, զինք հանգստեան կոչելով:

Արամայիս Ա. Քահանայ Միրզայեանը իր հրաժեշտի պատարագը մատուց Կիր. 8 Յուլիս 1990-ին Սիսնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ:

Հայր Մեր-ի պահուն Առաջնորդ Ս. Հայրը իր քարոզին մէջ անդրադարձաւ ու վեր առաւ Ս. Հօր բազում տարիներու —32— ծառայութիւնը ու բարեմայլոթեց ատողջ ու երջանիկ հանգստեան տարիներ: Ս. Հայրը իր պատասխան խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Ս. Հօր, քահանայից եւ սարկաւագաց դասուն, Եկեղեցւոյ պաշտօնական մարմիններուն եւ ժողովուրդին, իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքին համար:

Յատարտ Ա. Պատարագի պատշաճ հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ Առաջնորդարանի ընդունելութեան սրահին մէջ:

Արամայիս Ա. Քհն. Միրզայեանի կը մայլոթենք երջանիկ ու առողջ հանգրստեան տարիներ:

Սիսնի, Աստրալիա,
9 Յուլիս 1990

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԽՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.-Ի

ԼՈՒԹԵՐ ԱԽՍՏՐԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ

Նատրալիոյ եւ Ն. Զ.-ի Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօգեան, Յունիս 7—15 Թեմական այցելութիւն տուա Փրքթի—Արեւմտեան Աստրալիա—փոքրաթիւ հայութեան:

Սրբազան Հայրը Կիր. 10 Յունիսին Պատարագեց ու քարոզեց Անկիլքան Ա. Հիլտա եկեղեցւոյ մէջ ու հաղորդեց մոտ 150 հաւատացեալ հայեր:

Նոյն օրը սիրոյ սեղանի շուրջ բոլորուեցան ներկաները ու հաճելի գրոյց ունեցան Ս. Հօր եւ իրար հետ:

Առաջնորդ Ս. Հայրը մնացեալ օրերուն առիթը ունեցաւ հանդիպելու գաղութի անդամներուն եւ անոնց ընտանիքներուն հետ ու կարելիութեան ներսէն չափով հասաւ անոնց հոգեւոր կարիքներուն:

Դշ. 13 Յունիսին Առաջնորդ Ս. Հայրը հանդիպում ունեցաւ Փրքթի Անկիլքան եկեղեցւոյ Առաջնորդ Փիթըր Արքեպս. Գարնիի հետ, որուն շնորհակալութիւն յայտնեց իր ու եկեղեցւոյ օգնութեան համար, Հալաստանի երկրաշարժի առիթով ցուցաբերուած վերաբերմունքին համար:

Աղան Սրբազան իր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնելու համար, Փիթըր Արքեպս.ին նուիրեց հայկական փոքրիկ խաչքար մը, հայ ժողովուրդի եւ եկեղեցւոյ վերաբերմունքը ցուցաբերելով:

Աստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդի 35-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Յունիս 29—3 Յուլիս 1990 Աստրալիոյ Ատըլէյտ քաղաքին մէջ:

Ժողովի բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյեան, եկեղեցական արարողութեամբ, որուն մաս կազմեցին հոգեւոր առաջնորդներ, ներկայացուցիչներ ու մասնակիցներ թիով 120 հոգի: Եկեղեցական արարողութեան ընթացքին օրուայ քարոզիչն էր, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նախկին ընդհանուր քարտուղար Տոքթ. Ֆիլիպ Փոլըր:

Ժողովը իր աշխատանքներուն սկսաւ շաբաթ օրը, որ տեւեց մինչեւ երեքշաբթի երեկոյեան: Թեմիս Առաջնորդ, Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօզեան, իր գործօն մասնակցութիւնը բերաւ ժողովներուն. ժողովի զօրեւոր ան ընտրուեցաւ Գործադիր Յանձնախումբի անդամ, որը վեց ևոգիներէ բաղկացած էր:

Շաբաթ օրուայ ժողովին, Աղան Սրբազան եղոյթ ունեցաւ, եւ Աստրալիոյ եկեղեցիներուն ու ժողովուրդին յաջանեց Հայ եկեղեցւոյ ու ժողովուրդի երախտագիտական զգացումները եւ շնորհակալութիւնը, 1988 Դեկտեմբերի Հայաստանի երկրաշարժի առիթով, Աստրալիոյ եկեղեցիներու եւ ժողովուրդի ցուցաբերած բարոյական եւ նիւթական օգնութեան համար: Սրբազան Հօր եղոյթը ընդունուեցաւ խոր գնահատանքով:

Իսկ Գշ. Յ. Յուլիսին ժողովականներուն ներկայացուց Աստրալիոյ մէջ գտնուող Ռումէն եկեղեցւոյ պաշտպանութեան ի խնդիր ստաւարկութիւն մը, որը միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Աստրալիոյ եկեղեցիներու Խորհուրդի ղեկավար մարմինը կը նկատուի Աստրալիոյ քրիստոնէական գործունէութեան յանձնախումբը. Աղան Սրբազան լաուաշիկայ չորս տարուայ համար վերոյիշեալ յանձնախումբի անդամ ընտրուեցաւ:


Առաջնորդ Ս. Հայրը Ատրլէյտ գտնուած օրերուն, նստել առիթը ունեցաւ մօտէն կապ հաստատելու եւ հանդիպելու տեղւոյն փոքրաթիւ հալութեան հետ:

Կիր. 1 Յուլիսին 50-ի հասնող հաղորդիներու ներկայութեամբ Ս. Պատարագ մատուց եւ քարոզեց ու ապա հաղորդեց բոլոր ներկաները:

Աստրալաիա եկեղեցական կեանքի եւ Ատրլէյտի փոքրաթիւ հալութեան համար, Առաջնորդ Ս. Հօր աչքեութիւնը Ատրլէյտ ու հոն անցուցած օրերը, ճշմանակալից ու անմոռանալի օրեր կը մնան:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.-Ի





«ԷԶԵՐ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐԻՔԻ ՕՐԱԳՐՈՒԹԵՆԷՆ»

Հատոր Ա. 1935—1944

(Գրախոսական)

1989 թ. Ստամբուլում լույս տեսավ հոգեկույն Պատրիարքի օրագրությունների առաջին հատորը, որն ընդգրկում է նրա հոգևոր ծառայության սկզբի տասը տարիները: Սույն հատորը խմբագրել և ընթերցող հասարակությանն սեղանին է դրել պորաֆալ մտավորական, հայոց լեզվի ուսուցչուհի և «Մարմարա» օրաթերթի փոխխմբագիր Մաքրուհի Պ. Հակոբյանը:

Սույն հատորի վերջին էջում տրված երեք տողանոց հայտարարությունից հալոսի է դառնում, որ 1986—88 թթ. սույն աշխատությունը հոդվածաշարի ձևով նախօրոք լույս է տեսել Ստամբուլում հրատարակվող «Մարմարա» թերթում:

Այս գիրքը հարուստ է բազմաթիվ սև-սպիտակ և գունավոր լուսանկարներով: Լուսանկարների մեծագույն մասը ներկայացնում է Շնորհք Պատրիարքին, ինչպես նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մայրավանքը, տեղի քրիստոնեական արքատեղիները և վերոհիշյալ տասնամյակում ապրած ու գործած հայ հոգևորականությունը:

Շնորհք Պատրիարքի այս աշխատությունը թեպետև ամբողջությամբ հյուսված է իր անձի շուրջ, սակայն այն կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, որովհետև ամբողջ բովանդակությունն առնչվում է և ուղղակի կապ ունի մեր ազգային-եկեղեցական ցավերի, թերությունների ու պակասությունների հետ:

Հանգուցյալ Սրբազանն իր համատ կամքով և աշխատասիրությամբ, հսկայական իր բազմազբաղության և իր ունեղի վրա ծանրացած դժվարին և պատասխանատու բեռին, գրեթե ամեն օր ժամանակ է գտել, ալելի բան կեն դար, հոթագրելու օրվա կարևոր անցուդարձերը, թղթին հանձնելու իր մտորումները, դատողություններն ու եզրակացությունները: Նրա արձանագրած եկեղեցական, ընկերային և փոխադասական մտորումները համազգային հնչեղություն ունեն: Շուրջ կես դար առաջ նրա կատարած դատողությունները կարծեք աչքովս իմանք ե՞ն գրված միևնույն ժամանակ: Որով այս հատորի բարոյական արժեքը կրկնակի չափով բարձրանում է ընթերցողի աչքին:

Նախ կանգ առնենք հոգեղույս Ծնորճք Պատրիարքի համառոտ կենսագրության վրա: Նա ծնվել է 1913 թ. Թուրքիայի Յոզկատի շրջանի Իյդե մախլիկի հալաբնակ գյուղում, տեղի հարուստ և ազդեցիկ բնուսանիքներից մեկի՝ Միհրան Գալուստյանի հարկի տակ: 1915 թ. զոհվել է հայրը, և նա մնացել է որբ: Վաղամեծիկ են նաև մեկ բույրն ու եղբայրը: Մնացել են միայն մայրն ու երկրորդ բույրը: Արշակը, որ հետագայում դառնալու էր Թուրքիո հայոց Պատրիարքը, կյանքի առաջին տարիներին ապրեց շատ տխուր օրեր, մնալով նախ Թալատի (Կեսարիա), ապա Օհպեյլի (Լիբանան) և վերջում Նազարեթի (Պաղեստին) որբանոցներում: 1927 թ., 14 տարեկան հասակում, նա ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, երբ իր կյանքն արդ օրվանից նվիրում է ծառայելու հոգևոր սպասավորության: 1932 թ. ավարտելով սույն վարժարանը, նա ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1935 թ. Թուրգոմ Պատրիարքի ձեռամբ Արշակ սարկավագը ձեռնադրվել է կուսակրոն քահանա, վերանվանվելով Տ. Ծնորճք արքեպ: Նրա առջև բացվում է հոգևոր ծառայության լայն ասպարեզ և զբաղեցնում զանազան պաշտոններ՝ վանքում և այլուր: Այսպես նա դառնում է նախ Պատրիարք Հոր գավազանակիրը, ապա հայոց վանքի տպարանի տեսուչը, Հալֆա քաղաքի հայոց համայնքի հոգևոր հովիվը, 1941—44 թթ. Աշանակվել է Անթիպիայի դպրեվանքի տեսուչ և դասախոս, որից հետո նա հրավիրվել է Լոնդոն (1945—48) և ապա Միացյալ Նահանգների Նյու Ջերսի (1948—52)՝ որպես հոգևոր հովիվ տեղի հայության: 1952-ին Ծնորճք վարդապետն ընտրվել է Կալիֆոռնիայի հայոց թեմի առաջնորդ: 1955 թ. սեպտեմբերի վերջին Ա. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Վազգեն Ա. Հայրապետի: 1957 թ. Ծնորճք եպիսկոպոսը Աշանակվել է Երուսաղեմի վանքի լուսարարապետ, իսկ 1961 թ. ընտրվել է Թուրքիո հայոց Պատրիարք:

Հակառակ ներքին և արտաքին բազում դժվարություններին, Ծնորճք Պատրիարքն իր ջանասիրության և իմաստության շնորհիվ ծաղկեցրել է Կ. Պոլսի Պատրիարքական պատմական Աթոռը, արդյունավորելով շուրջ երեսուն տարիների իր պատրիարքության տարիները՝ սիրված իր ժողովրդի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից, միշտ հարգված Թուրքիո պետական բարձրագույն իշխանությունների կողմից:

«Ամենապատիվ Տ. Ծնորճք արքեպիսկոպոսը մեծապես բարձրացրեց Պոլսո պատրիարքարանի հեղինակությունը, շուտով դարձավ քրիստոնեական աշխարհի անաչված և հարգված դեմքերից մեկը», գրված է նրա մահախոսականում («Հայրենիքի ձայն» 14 մարտի 1980 թ.):

Հոգեղույս Արքագանը «մեր շնորհալի և հավատավոր հոգևորականներից մեկն է: Պարկեշտ, կարգապահ ու մաքրակենցաղ եկեղեցական է նա, որ սրտառույ իմաստասրությամբ ծառայել է իր ժողովրդին և եկեղեցուն, բարձր կանգնած լինելով իր հոգևորականի կոչման և պարտականության դիրքերում, օրհնակելի՝ իր նախանձախնդրությամբ և բժախնդրությամբ, իր բարեմուն և հեզահամբույր բնավորությամբ» (տես «Էջմիածին» ամսագիր, 1955, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 95), գրված է Մայր Աթոռի պաշտոնաթերթում, նրա եպիսկոպոս ձեռնադրության առթիվ:

«Մեր եկեղեցին ու համայն հայությունը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի Ձեր բարձր անձին մեջ հիսուն տարիներն ի վեր՝ տեսած են և զնահատած բարի հովիվը, նվիրյալ հոգևորականը, լուսամիտ դաստիարակը, եկեղեցվո ազնիվ սպասավորը միշտ մաքուր հոգիով, միշտ մաքուր ձեռ-

քերով, Ձեր պաշտոնավարությանը ընթացքին, հեղուսաղեմ, ի Լոնդոն, հԱ-մերիկայի Միացյալ Նահանգներ և վերջին քառորդ դարում հայոց Պատ-րիարքական Աթոռին վրա ի Ստանբուլ», գրում է Վազգեն Ա Հայրապետն իր 22 հոկտ. 1985 թ. հայրապետական սրբատառ կոնդակում (№ 1400), ուղղված հոգեղույս Ծնորհք Պատրիարքին՝ նրա հիսնամյա հոգևոր ծառա-յության առթիվ:

Տ. Ծնորհք Պատրիարքի գրիչը շատ բեղմնավոր է եղած: Նա հեղինակ է շուրջ երկու տասնյակ արժեքավոր հոգևոր բնույթի գրքերի, որոնք ունեն ևկեղեցական, աստվածաբանական, կրոնա-քարոզական և հայ ու օտար-ազգի սրբերի կենսագրական թեմաներ: Նա հեղինակ է նաև բազմաթիվ բանասիրական, գրական, ուղեգրական, հուշագրական և այլ տեսակի հոդ-վածների:

Տ. Ծնորհք Պատրիարք իր 55 տարվա հոգևոր բարվոք ծառայությանը ընթացքում ստացել է մի շարք պարգևատրումներ, այսպես օրինակի հա-մար արժանացել է Վազգեն Ա Հայրապետի և Մոսկվայի ու Համայն Ռու-սիո Պիմեն Պատրիարքի պանակեներին, Վատիկանի Հովհաննես-Պողոս Պապի, Կ. Պոլսի Աթենագորա Տիեզերական Պատրիարքի, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի և Ատրիների Պատրիարքի խաչերին, Սեն Լագար Աս-պետական կազմակերպության շքանշանին և այլն:

Թուրքիո հայոց Ամենապատիվ Տ. Ծնորհք Արքեպիսկոպոս Գալուստ-յանը 1990 թ. մարտի 7-ին ողբերգական և անակնկալ մահով վախճանվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ուր ժամանել էր մի քանի օր առաջ միայն: Հայոց Եկեղեցին մեծ կորուստ կրեց: Հակառակ իր 77 տարիքին նա դեռ առողջ էր, և Հայ Եկեղեցին տակավին մեծապես կարիքն ուներ Սրբազան Պատրիարքի ծրագրած գործունեության: 20-րդ դարի երկրորդ կեսին նա հանդիսանում էր մեր Եկեղեցու ամենապայծառ դեմքերից մեկը, որպես մաքուր հոգևորական, լավ քարոզիչ, իրավ ու ջերմեռանդ հալստացյալ, անկեղծ ազգասեր ու Էջմիածնասեր:

Օրագրության այս հատորը հագեցած է հոգեղույս Սրբազանի կենսա-գրության իրադարձություններով՝ սկսած իր վաղ տարիքից մինչև 1944 թ.: Անձամբ միշտ դեմ է եղել շռալ կյանքին և աշխարհիկ վաղեքներին: Այս տեսակետից նա ճշել է, որ հաճախ վեճի մեջ է եղել իր անմիջական ըն-կերների և շրջանակի հետ: Նա եղել է կայուն նկարագրի տեր մի անձնա-վորություն: Նա հեռու է կանգնել կեղծավորությունից ու շողոքորթությունից, նյութապաշտությունից ու փառամոլությունից: Բայց միևնույն ժամանակ անկեղծորեն նա խոստովանում է, որ «ընդհանրապես սիրած է ընկերու-թենեն կամ հավաքություններն հեռու ապրիլ: Այս միտումն կյանքիս վրա մե-ծապես ազդած է: Ատոր իբր հետևանք նա եղած է ավելի անհամարձակ, ավելի ինքնամոխի, ինքնակեղրոն» (Էջ 41):

Դեռ երիտասարդ՝ 22-ամյա Տ. Ծնորհք արեղան իր օրագրություններում գրում է իր մտածումների, հոգեկան վիճակի, ներաշխարհի, ցանկություն-ների, որոնումների, կրոնական վիճակի, փիլիսոփայական և ընկերային հարցերի մասին: Խոսելով նյութապաշտության և քրիստոնեության տար-բերության մասին, 1935 թ. հոկտեմբերի 24-ին նա գրում է հետևյալը. «Ար-դարև, իմ փորձառությամբս ալ կհասկանամ, թե եկեղեցական Երկա դրու-թյունը բոլորովին հեռու է հոգեկան բարձրագույն ձգտումներում և պա-հանջքներում գոհացում տալ» (Էջ 86):

Հայր Ծնորհքը, որպես հոգևոր զինվոր Հայ Եկեղեցու, մեկ ձեռքին

խաչ ունի բռնած, իսկ մյուսին՝ գրիչ: Խոսելով օրը-օրին գրած իր օրագրության բնութի մասին, հետևյալն է գրում նա.

«Այս օրագրությունը գուտ և ամբողջովին անձնական հանգամանք ունի և կգրեմ միայն ու միայն ինձի համար: Աստղի համար համարձակ է հոս արտահատությունն իմ մասին: Երբեմն ներքին կյանքիս ամենեւ գաղտնի ծաղերն իսկ չեմ քաշվիր պարզելե այս էջերում վրա, որպեսզի կարեւոր աղ կերպով իբրե հաշելի մը ընդմեջեն ավելի աղէկ նշմարել հոգիս և ավելի դրական գաղափար մը կազմել անոր մասին: Որով այս էջերը օրագրությունն են ավելի հոգեկան կյանքիս, քան ասորյա կյանքիս: Մյուս կողմէ, կանդարաւորումս պատահած այս դեպքերում վրա, որոք կշահագորգոնեմ զիս և անոնց վրա կնայիմ իմ անձնական տեսակետես, ինչ որ ավելի կշէշտե այս գրություններու անձնական հանգամանքը» (էջ 92):

Ընթերցասեր է Տ. Շնորհք Բեդլան (էջ 125): Շատ շահեկան և հետաքրքրական մտքեր ու խոհեր ունի իր օրագրություններում: Բարոյախոսական խորհուրդներ է տալիս և միշտ առաքինի հոգևորականի կերպարի մասին մտահոգվում:

Այսպես, Ժառանգավորացի սովորողների համար տալիս է հետևյալ խրատը. «Ազնիվ, սիրալիր և անկեղծ ըլլալ ընկերներուն նկատմամբ. հարգալիր, սիրալիր և փոթկոտ մեծերու նկատմամբ. պարտաճանաչ և փութաշան իրեն տրված գործերուն մեջ: Ամեն ինչ, որ կհանձնարարվի իրեն, կարելի իր լավագույնով ի գործի հանել զայն, անթերի և խնամքով: Զանաւեր և համա՝ իր դասական աշխատությանց ընթացքին, յուրջ, երկշունչ և քաբեպաշտ՝ իր կրոնական պարտականությանց մեջ. ամեն բանէ ավելի՝ կրոնասեր, եկեղեցասեր, ալսինքն Աստվածասեր ըլլալ: Այս բոլորին վրա իշխող առաքինությունը պետք է ըլլա անկեղծությունը, ողորամտությունը և փութաշանությունը: Ասոր պես բան մը պետք է ըլլա, ըստ իս անշուշտ Ժառանգավորաց աշակերտը» (էջ 121):

Իսկ ինչպիսին պետք է լինեն սարկավագները, որոնց մասին հետևյալն է գրում նա. «Իսկ սարկավագները, վերջ համրվածներուն առնթեր. պետք է ունենան նաև իրենց սքեմին ծանրությունն ու սրբությունը: Երբեք անվաւել խոսք, և կատակ չընեն աշակերտներու հետ: Պետք է ուսմն օրինակներ, տիպարներ, որոնց նմանի ջանկան աշակերտներու: Իրենց քաղցր, սիրալիր և դուրամատչելի վարմունքով փայլեցնեն սքեմի սրբությունն ու կարգին նվիրականությունը իրենց վրա: Վերջապես՝ գրափչ վարքով մը ողորմակի կամ անողղակի հրապուրեն Ժառանգավորաց տղաք իրենց ետեվեն գալու» (էջ 121):

Իսկ ինչպիսին պետք է լինի Ժառանգավորացի փոխտեսուչը, որի մասին հետևյալն է գրում Նորրնձա 23-ամյա Շնորհք Բեդլան. «Իսկ փոխտեսուչը ... ինչ կատարելություն, ինչ մեծ հատկություններ, ինչ խոր հրմտություններ պետք է ունենա: Ոչ ծեր, այլ երիտասարդ մը, 25—35 տարեկան: Եթե ոչ գրավիչ՝ գեթ ներկայունալի ըլլա արտաքինով. մաքուր և կուկի հագնված միշտ, առանց սեթևեթի, ժպիտը միշտ դեմքին, եռանդուն, հանդարտ, անկեղծ, մաքուր հոգվով և մարմնով. տիրական՝ առանց խիտ և բուռն ըլլալու: Զափազանց համբերատար և հարատևող, հուսալքվի չգիտցող, երբեք խոժոռ և տխուր, հաճախ յուրջ, մանավանդ պաշտոնի վրա, գործունյա, ընկերական, առանց տղայանալու: Մանավանդ փորձառու, հոգեբանութենէն հասկցող, եթե ոչ սող գիտությանց մասնագետ, տղոց մոտեցող, խոսող և շարունակ խոսող: Զանազան նյութերու պատմությանց

մասին պաշար ունեցող, բնական բարձր ընդհանուր զարգացում ունեցող, գործին լիովին և ամբողջ սրտով նվիրված: Մեր և հարգանք պարտադրող, առանց բովնոյ միջոցներու: Ժամանակին մեծ մասը տոյց հետ անցնող: Հստակ միտք ունեցող, կացութիւնը անմիջապէս ըմբռնող և ըստ այնմ կարգադրութիւն ընող. ձեռնարկութեանց շատ չկապվող և յորաքանչյոք պարագային համաձայն կարգադրութիւն ընող, և վերջապէս՝ օժտված ըլլալ այն բոլոր կատարելութիւններով, որոնք անհրաժեշտ են փայլուն դաստիարակ մը կազմելու համար: Վասնզի, այդ իսկ է իր գերագույն պաշտոնը և կոչումը.—դաստիարակել աշակերտները» (Էջ 121—122):

Ահա երիտասարդ Շնորհք արեղայի նախատեսած պայմանները և պատկերանները Երուսաղէմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանի սաների, տեսուչների և ինչպէս նաև բոլոր մանկավարժների համար: Սրանք գրված են ավելի քան կես դար առաջ, որոնք այսօր ևս ի գորտու պէտք է լինեն լիովին Ժառանգավորացի, ինչպէս նաև Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի և Անթիլիասի Դպրեվանքի համար, ուր մեր Եկեղեցու համար հոգևոր սպասավորներ են պատրաստվում: Հայոց Եկեղեցին այսօր մեծ կարիք ունի հոգևով և սրտով, մտածմունքով և ձեռքով մաքուր ու նվիրյալ հոգևորականների, որոնք պէտք է բարի օրինակ հանդիսանան համայն մեր ժողովորդին, խաղաղութեամբ և խելամտությամբ հովվեն ու ղեկավարեն մեր ժողովորդին ի հաշտեմիս և ի սպիտակ աշխարհի: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր հիմնադրութեան 1700-ամյակը շուտով նշելու է ի գլուխ ունենալով հավատացյալ հայ հոգևորականությունը, որ լիովին պէտք է գիտակից լինի իր սուրբելության և ամբողջական պարտքը հանդէպ իր ժողովրդին:

Օրագրութեան հեղինակը գտնում է, որ կյանքում հաշտության բանալին գտնվում է աշխատասիրութեան մէջ: Նա գրում է, որ պէտք է «պալքարի ծովութեան դէմ, որ մեծագույն թշնամին է մարդ Էսկին հաշտության» (Էջ 155):

Շնորհք վարդապետ ինքն իր հետ խորհրդածելով գրում է, որ «բարյացակամ ըլլալ ուրիշներու, մասնավորաբար տկարներու, ինկածներու և աշխարհէն արհամարհվածներուն նկատմամբ» (Էջ 103): Այսպիսով նա ընթերցողներին բարի խորհուրդ է տալիս լինել բարեգութ, աղքատասեր և գթասիրտ, որ հիմքն ու խարիսխն է քրիստոնէական կրոնին:

Ինչպէս հայտնի է, օրագրութեան հեղինակի հայրը, քույրը և եղբայրը շուտ են մահացել: Վաղածամ գրկվել է նաև մաքրական խնամքից, որով նա առիպված ընկել է որբանոցներ, որպէս իրոք մանկություն չունեցող մի պատանի, գրկվել ծնողական գորգուրանքից ու սիրով: «Ունեի իդէալներ կյանքի իրականության մէջ. հօգս ցնդեցան. զարնկեցան կյանքի բիրտ կարծրության և փշուր-փշուր եղան և ես մնացի առանց սիրո», գրում է նա սրտի մեծագույն մորմոքով (Էջ 105): Անշուշտ այս բոլոր ստատպանքները, նաև նկատի առնելով Մեծ եղեռնը, իր ծննդավայրի ավերումը, աքսորն և այլն, սուկայի կերպով ազդել են որբ պատանու հոգեկան աշխարհի, նկարագրի ու բարոյականի, նրա կյանքի հետագա տարիների ընթացքի վրա, ինչպէս նաև իր հետագա գործունեության և հոգևոր կյանքի առաքելգի ընթացքում ձեռք բերած հաշտությունների ժամանակ:

Հոգևորականի նոր առաքելգ մտած երիտասարդ վարդապետը մեծ գայրություն գրում է հետևյալ տողերը. «Արդարև, շրթունքով միայն կպաշ-

տեճք զԱստված և սրտով հեռու ենք անկե ... փտությունը, հոգևոր փտախտը կծավալի ամբողջ մարմնի վրա և կսպառնա անոր կյանքին» (Էջ 35):

Մի այլ տեղ նա գրում է. «Եկեղեցականեն կպահանջվի ոչ թե զարգացում (եթե կա, անշուշտ ավելի աղել) այլ կենդանի հավատք, ջերմեւունքություն, հոգևորականություն և վերջապես հնազանդության ոգի: Եթե ասուք: կպակսին մեկու մը մեջ, թող անիկա ուզածին չափ զարգացած, կրթված, նրբացած ըլլա, ուզածին չափ գիտնական կամ վարչագետ ըլլա: Ասեն բան կրնա ըլլալ, բայց ոչ եկեղեցական կամ հոգևորական: Անոնցմէ պահանջվածը տարբեր բան է» (Էջ 43):

Շնորհք վարդապետը գտնում է, որ հոգևորականները պետք է միախառնեն բանտերում գտնվող հանցագործներին, հիվանդանոցներում պառկած մարդկանց, նյութական և հոգեկան անձկություններով տառապողներին և այլն: «Ինքզինքը մոռնալ ուրիշին համար, ձեռք կարկառել ինկածին, նամբու բերել մոլորածը, վշտակցիլ և ցավակից ըլլալ սգավորին և վրշտագնալին: Վսեմ է այս ասպարեզը երբ վերը հիշվածները մարմնացած կերևին եկեղեցականին մեջ» (Էջ 58):

Նա իր ամբողջ կյանքում էլ միշտ մնաց համեստ, խորշեց փառասիրությունից և որքան բարձրացավ՝ ավելի պատասխանատու պաշտոններ և աթոռներ գրավելով, նա մնաց նույն համեստ ու ներամոփի հոգևորականը, որով նա հավատարիմ մնաց 22 տարիքում իր դավանած հավատամքին:

Օրագրության գրքի հեղինակ երիտասարդ վարդապետը, կարդալով պատմիչ Առաքել Դավրիժեցու գիրքը, ուր արդարացի կերպով գրված է, թե մեր ժողովրդի պահպանությունը հիմնված է Լուսավորչի Աջին վրա, գտնում է, թե այն «նշանակ է Հայրապետական Աթոռին: Ատիկա կհիշեցնեն Հայրապետին, թե ինք հաջորդն է Ս. Լուսավորչի: Անիկա կապող օղակն է մեր անցյալին»:

Նա եղավ բարի ու ազնիվ մի հոգևորական, որ իր հայրական խրատներով և ծանրակշիռ քարոզներով, հողվածներով և գրքերով մեծ օգուտ տվեց իր ժողովրդին ու հայ եկեղեցական գրականության: Այս տեսակետից նա մեծ վաստակի տեր է: Իր սեփական կյանքով նա բարի օրինակ հանդիսացավ մեր ժողովրդին, հայ հոգևորականության և ամբողջ մեր հասարակության:

Շնորհք Պատրիարքը այս նոր գրքով կրկնակի սիրելի ու շնորհալի մի անձնավորություն է դառնում թուրքահայ իր հոտին, ինչպես նաև հավատացյալ ամբողջ հայ ժողովրդի սրտում և հիշողության մեջ:

Վերջացնելուց առաջ այս մտորումները, ցանկալի և խիստ անհրաժեշտ ենք գտնում, որ պոլսահայությունը և տեղի հայ մտավորականությունն աշխատեն հրատարակելու նաև այս օրագրությունների շարունակությունը, ինչպես նաև հանգուցյալ Ս. Շնորհք Պատրիարքի դեռևս անտիպ մնացած մյուս բոլոր ձեռագրերը:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

տեճք զԱստված և սրտով հեռու ենք անկե ... փտությունը, հոգևոր փտախտը կծավալի ամբողջ մարմնի վրա և կսպառնա անոր կյանքին» (Էջ 35):

Մի այլ տեղ նա գրում է. «Եկեղեցականեն կպահանջվի ոչ թե զարգացում (եթե կա, անշուշտ ավելի աղել) այլ կենդանի հավատք, ջերմեւունքություն, հոգևորականություն և վերջապես հնազանդության ոգի: Եթե ասուք: կպակսին մեկու մը մեջ, թող անիկա ուզածին չափ զարգացած, կրթված, նրբացած ըլլա, ուզածին չափ գիտնական կամ վարչագետ ըլլա: Ասեն բան կրնա ըլլալ, բայց ոչ եկեղեցական կամ հոգևորական: Անոնցմէ պահանջվածը տարբեր բան է» (Էջ 43):

Շնորհք վարդապետը գտնում է, որ հոգևորականները պետք է միաթարեն բանտերում գտնվող հանցագործներին, հիվանդանոցներում պառկած մարդկանց, նյութական և հոգեկան անձկություններով տառապողներին և այլն: «Ինքզինքը մոռնալ ուրիշին համար, ձեռք կարկառել ինկածին, նամբու բերել մոլորածը, վշտակցիլ և ցավակից ըլլալ սգավորին և վրշտագնալին: Վսեմ է այս ասպարեզը երբ վերը հիշվածները մարմնացած կերևին եկեղեցականին մեջ» (Էջ 58):

Նա իր ամբողջ կյանքում էլ միշտ մնաց համեստ, խորշեց փառասիրությունից և որքան բարձրացավ՝ ավելի պատասխանատու պաշտոններ և աթոռներ գրավելով, նա մնաց նույն համեստ ու ներամոփի հոգևորականը, որով նա հավատարիմ մնաց 22 տարիքում իր դավանած հավատամքին:

Օրագրության գրքի հեղինակ երիտասարդ վարդապետը, կարդալով պատմիչ Առաքել Դավրիժեցու գիրքը, ուր արդարացի կերպով գրված է, թե մեր ժողովրդի պահպանությունը հիմնված է Լուսավորչի Աջին վրա, գտնում է, թե այն «նշանակ է Հայրապետական Աթոռին: Ատիկա կհիշեցնեն Հայրապետին, թե ինք հաջորդն է Ս. Լուսավորչի: Անիկա կապող օղակն է մեր անցյալին»:

Նա եղավ բարի ու ազնիվ մի հոգևորական, որ իր հայրական խրատներով և ծանրակշիռ քարոզներով, հողվածներով և գրքերով մեծ օգուտ տվեց իր ժողովրդին ու հայ եկեղեցական գրականության: Այս տեսակետից նա մեծ վաստակի տեր է: Իր սեփական կյանքով նա բարի օրինակ հանդիսացավ մեր ժողովրդին, հայ հոգևորականության և ամբողջ մեր հասարակության:

Շնորհք Պատրիարքը այս նոր գրքով կրկնակի սիրելի ու շնորհալի մի անձնավորություն է դառնում թուրքահայ իր հոտին, ինչպես նաև հավատացյալ ամբողջ հայ ժողովրդի սրտում և հիշողության մեջ:

Վերջացնելուց առաջ այս մտորումները, ցանկալի և խիստ անհրաժեշտ ենք գտնում, որ պոլսահայությունը և տեղի հայ մտավորականությունն աշխատեն հրատարակելու նաև այս օրագրությունների շարունակությունը, ինչպես նաև հանգուցյալ Ս. Շնորհք Պատրիարքի դեռևս անտիպ մնացած մյուս բոլոր ձեռագրերը:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Անհայտ հայ նկարիչ, (XVIII դ. վերջ—XIX դ. սկիզբ) Աստվածամայրը
մանկան հետ: Հատված: Վերականգնումից առաջ



Աննայո Բայ Եկարիչ, Աստվածամայրը մանկան հետ:
Վերականգնման ընթացքը



Սննդոտ հայ նկարիչ, Ստովածամայրը մանկան հետ:
Վերականգնման ընթացքը

իրերի պահպանության, մաքրության և երկարակեցության համար: Մի գործ, որը պահանջում է ամենօրյա հսկողություն:

1983-ին, Գանձատան հիմնադրման առիթով, նոր ցուցադրություն կատարվեց նաև Մայր Տաճարին կից թանգարանում (Թ—ԺԹ դդ. բազմաբնույթ կիրառական արվեստի նմուշներ), Հին վեհարանում (կրոնածիսական արժեքներ), Նոր վեհարանում (դասական և ժամանակակից գեղանկարչություն), թանգարանների ցուցադրության կազմակերպչական աշխատանքներին մասնակցեց Ա. Անտոնյանը:

1983—1985 թթ. Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ ցուցակագրվեցին ու նոր համարակալումներ ստացան Մայր Աթոռի հարստությունները (գեղանկարչություն, կիրառական արվեստի ստեղծագործություններ, գրաֆիկա): Այդ աշխատանքներին մասնակից էր նաև Ա. Անտոնյանը, որը հնարավորություն ունեցավ հաղորդակից դառնալու յուրաքանչյուր իրի պատմագեղարվեստական բնութագրումներին:

Վանքի հարստությունների որոշ ստեղծագործություններ մաքրման ու վերանորոգման կարիք ունեին: Ա. Անտոնյանը մի քանի անգամ գործուղվեց Մոսկվա՝ Վերանորոգման գիտահետազոտական համամիութենական ինստիտուտ, ուսումնասիրեց հատկապես ֆալանկարչական ստեղծագործությունների վերանորոգման սկզբունքները:

Մոսկվայում, ուսումնասիրության շրջանում, Ա. Անտոնյանին հանձնարարվեց վերանորոգել ԺԷ դ. ռուսական մի սրբանկար՝ «Աստվածամայրը մանկան հետ», Մոսկվայի մոտ գտնվող Զարայսկի թանգարանից: Ա. Անտոնյանը վերամրացրեց կտավը, յուղաներկի շերտը, լրացրեց թափված մասերը, մշակեց ընդհանուր մակերեսը: Սրբապատկերը տեղ գտավ իր նախկին սրահում: Նոր կյանք ստացավ նաև նույն թանգարանի մեկ այլ աշխատանք. Անհայտ ռուս նկարչի «Ն. Մելիվանովայի դիմանկարը» (ԺԸ դ.):

Առաջին աշխատանքը, որի վերանորոգմանը ձեռնամուխ եղավ Անդրանիկ Անտոնյանը, Էջմիածնի վանքում ԺԸ դ. վերջի—ԺԹ դ. սկզբի Անհայտ հայ նկարչի «Աստվածամայրը մանկան հետ» աշխատանքն էր: Երկար տարիներ այն գտնվում էր Գանձատան պահեստում: Երևում էին միայն Աստվածամոր դեմքը, աչք ձեռքը, մանկան գլուխն ու մի ոտքը: Նկարը ծայրահեղ վատ վիճակում էր. կտավը պատռտոտված էր, ներկի շերտը թափված, չորացած ու պոկված: Անտոնյանը հատուկ լուծույթներով փափկացրեց յուղաներկի շերտը, կենդոտված ու պատռտոտված կտավի հատվածները: Յուղաներկի շերտի վրա, ձկան տսնձի միջոցով, ամրացրեց թափանցիկ թուղթ: Սա անհրաժեշտ էր նկարը նոր կտավի վրա ամրացնելու համար: Նկարի հին կտավի որակին ու գործվածքին համապատասխան նոր կտավի որոնումներով էր պայմանավորված վերականգնման ընթացքի հաջողությունն ու նկարի երկարակեցությունը: Նկարի ետևի կողմի համապատասխան մշակումից հետո, նկարն ամրացվեց նոր կտավի վրա: Ամրացվեց ներկի շերտը, լրացվեցին «կորած» հատվածները, պահպանելով ներկերի համապատասխան համակարգը: Նկարում Աստվածամայրը պտուկերված է ծնկներից, կանգնած վիճակում, Մանուկը փարվել է Մորը, այտը դրել նրա երեսին (հորինվածքի այս ձևը հայտնի է «Գորովագին» անվան տակ): Նա մերկ է, ամոթը ծածկված դեղնագույն շորով: Մարիամը կարմիր զգեստով է, կապույտ թիկնոցով, որի երիզներն ընդելուզված են «ոսկեկար» գույս գադյանախշերով: Նկարի շրջանակը, որն առանձնացել էր կտավից, նույնպես քաջալված էր: Դա մի մեծ արժաթե շրջանակ էր, որը

ծաղկազարդ երկու պուն էր ներկայացնում, վրան դրվագված ոլորապտույտ զարդանավաշերով: Վերևում, շրջանակի մեջ, ներկայացված էր փոքրաչափ մի պատկեր. Աստված, սբ. Հոգին ամպերի մեջ: Շրջանակի ոլորապտույտ տերևները ներկայացված են ոսկեգոծ և շագանակագույն ներկված հատվածներով, որոնք լուսաստվերային և գունային շքեղ անցումներ են ստեղծում: Այս տպավորությունը շրջանակից՝ Անտոնյանի վաստակն է, որը մաքրեց, ամրացրեց կոտրված հատվածները: Շրջանակի ցածում, սրածայր բուսական շրջանակի մեջ ընթերցվեց արձանագրությունը. «Յիշատակ ընծայ գեղշուք պատկերս սուրբ Աստուածածնի սրբոյ Էջմիածնի վանքին... ձեռն Մարտիրոս արքեպիսկոպոսին Կեսարիոյ Ժողեան Զմիռնոյ քաղաքի բարեպաշտոնի կանանց միություն»: Շրջանակն ու արձանագրությունը ուշ շրջանի են: Կտավը շատ ավելի վաղ ծագում ունի: Նրա գեղանկարչական սկզբունքներում գուգորդված են բյուզանդական ուշ սրբապատկերների և ժամանակի հայ արվեստի պահանջներից թերադրված առանձնահատկությունները: Այստեղ մենք ունենք ազդեցությունների հետաքրքիր գուգորդում:

Ա. Անտոնյանը վերանորոգեց նաև Հովնաթան Հովնաթանյանի (1730?—1801/2) «Աստվածամոր թագադրունը» նկարը, որը արվեստագետը ստեղծել էր 1780-ական թթ., Էջմիածնի տաճարի հիմնավոր ձևավորման ժամանակ: Պատկերը ներկայացնում է բազմաֆիգուր հորինվածք, բազմազան գունային հարստության առկայությամբ: Հայր Աստծո, Քրիստոսի, Աստվածամոր զգեստների գունային կառուցվածքների նրբագույն անցումները, նրանց նյութականությունը, կերպարների, ինչպես նաև հրեշտակների մարմինների ձևերի մուրք մոդելավորումը Հովնաթանյանի նկարչական բարձր կարողության վկայություններն են: Այս նկարը նույնպես մոր կյանք ստացավ Ա. Անտոնյանի երկար աշխատանքի շնորհիվ: Նկարիչը վերանորոգեց նաև Նոր վեհարանում պահպանվող իտալական նկարչական դպրոցի մի քանի գործեր. «Ժաշից իջեցում», «Աստվածամայրը մանկան հետ», «Մարիամ Մագդաղենացին» և մի քանի աշխատանքներ, որոնք այսօր արդեն բոլորովին այլ արտահայտչականություն ունեն: Մայր Տաճարում են պահպանվում Ա. Անտոնյանի վերանորոգած «Հովնանեն Մկրտիչը», «Մկրտությունը», «Սբ. Ստեփանոսը» և այլ աշխատանքներ:

Վանքի ասեղնագործական արժեքների մեջ առանձնակի տեղ է գրավում Մայր Տաճարի Ավագ խորանի երբեմնի վարագույրը: Այն ասեղնագործվել է 1705—1714 թթ. Կ. Պոլսում, Էջմիածնին է նվիրաբերվել տեղի աստաֆների (ղրամախոխ) ու արևելյան երկրներից եկած հայ վաճառականների կողմից:


Վարագույրի հորինվածքը բարդ է, բազմանյութ, բազմակերպար և ներկայացնում է Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին, Աշխենին ու Խոսրովադուխտին: Ասեղնագործության մեջ տեղ են գտել նաև առաքյալների, ասենտարանիչների կերպարները, հրեշտակների պատկերումներ և այլն: Վարագույրի հորինվածքի նկարիչն է Կ. Պոլսի անվանի նկարիչ ու հրատարակիչ Գրիգոր Մարգվանեցին: Ասեղնագործության զգալի մասը արձաթաթել գործվածք է: Դարերի ընթացքում ասեղնագործությունը կեղտոտվել էր, արձաթյա հատվածները սևացել էին, նկարը կորցրել էր իր արտահայտչականությունը: Ա. Անտոնյանը մաքրեց ասեղնագործության տարածքը, «լվաց» հատուկ լուծույթով և վարագույրը ստացավ իր երբեմնի գեղեցկությունը:


Ա. Անտոնյանի գործունեության մեկ այլ բնագավառը նկարչությունն է:

Անցած տասնամյակների ընթացքում ոչնչացել էին հայոց եկեղեցիների խորանները, հատկապես Ավագ սեղանների խաչկալներին փոխարինող սրբապատկերները: Վերջին տարիներին ինչպես կանգուն, նույնպես և նորաստեղծ եկեղեցիներում դրվելիք սրբապատկերների կարիք առաջացավ: Ա. Անտոնյանը նկարեց մի քանի տասնյակ սրբապատկերներ, հատկապես «Աստվածամայրը մանկան հետ» բովանդակությամբ, որոնք դրվեցին Արցախի, Սյունիքի, Ուտիքի, Երևանի և այլ եկեղեցիներում: Այս սրբապատկերները, ինքնուրույն ստեղծագործություններ լինելով, միաժամանակ, իրենց գեղանկարչական արմատներով խարսխված են Հովնաթանյան տոհմի նկարչական դպրոցի արվեստի վրա: Այս առանձնահատկությունը հնարավոր է դարձնում հայոց եկեղեցիների նկարչական արվեստի միասնականությունը Մայր Տաճարի ավանդական հարդարանքի հետ:

Գանձատան երկրորդ հարկում գտնվող Ա. Անտոնյանի արվեստանոցում անավարտ կտավներ կան, նոր աշխատանքների նախանկարներ:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ





ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՍՐՔԱԳՐՈՒՄՆԵՐ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔ


1989 թ. հունիսին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նշանակվելով Արցախի թեմի Գանձաասարի վանքի վանահայր, ձեռնասուրս եղանք վանական համալիրի վերանորոգչական և բարեկարգչական աշխատանքներին, որոնք 1990 թ. աշնանը լայն թափ ստացան:

Գանձաասարի վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գավթի վերանորոգման ընթացքում հայտնաբերվեցին մինչև այժմ անհայտ երկու արձանագրություն:

Սուաչիներ բացարձակապես անհայտ էր, ծածկված հաստ աղաչերտով և ամբողջովին աննկատելի: Բանդման-վերաշարման աշխատանքների ընթացքում մի քանի տեղերում աղաչերտը թափվեց և տակից տատեր հայտնվեցին: Բարերը մաքրվեցին աղաչերտից, և արձանագրությունն ընթերցվեց: Սույն արձանագրությունը գտնվում է գավթի հյուսիսային մուտքի վերևի աջ անկյունում: Բովանդակությունը հետևյալն է.

ԿԱՄԱԻ(Ն ԱՍՏՈՒԾՈ)Յ ԵՍ ԱՇ(Ո)
Տ ՈՐԴԻ ՏԻԱՆԱ ՄԻ(ԱԲԱ)
ՆԵՅԱ ՍՈՒՐԲ ՈՒԽՏ(ԻՍ)
ԵՒ ՍՈՔԱ ՏՎԻՆ ՀԱՄԲ
ԱՐՁՄԱՆ :Ա: ՊԱՏԱՐԱ(Գ)

Այս արձանագրությունից ներքև աղաչերտի տակից հանվեց ևս մի արձանագրություն, որի միայն վերջին չորս տառերը Ս. Բարխուդարյանը ընթերցել և հրատարակել էր «Հայ վիմագրության դիվանի» Ե պրակտում, 171ա համարի տակ (էջ 63): Իր ամբողջության մեջ արձանագրությունը հետևյալ տեսքն ունի.



ԵՍ ԱԹՈՐԱԿ
ԱԼ ՊԵՏՐՈՍ
ՎԱՐԴԱՊ(ԵՏ)Ս
ՆՈՐ/Ո/Բ(Ե)Ց ՌՄ Թ. (1751)

Սույն արձանագրությունից հայտնի է դառնում, որ Գանձատարի վանքը պատմությանը հայտնի երեք վերանորոգումներից (1551, 1781, 1907) բացի ենթարկվել է ևս մեկ նորոգման՝ 1751 թվականին, որի ընթացքում են հավանաբար վերաշարվել գավթի հյուսիսային մուտքին հարող պատերը:

Այս երկու նորահայտ արձանագրություններից բացի մեզ հաջողվեց նաև երկու հայտնի արձանագրությունների մեջ որոշ ուղղումներ կատարել: Այսպես, Ս. Բարխուդարյանի «Դիվանում» հրատարակված 144 համարի արձանագրությունը (էջ 57) թերի էր, իսկ անձնանունները պալա էին վերականգնված: Աղաշերտի մաքրումից հետո արձանագրությունը ամբողջովին վերականգնվեց: Այն այսպիսին է.


ՅՈՒՍՈՒՎՆ ԱՆՄԱՀԻՆ Ա(ՍՏՈՒԾՈՒ)Յ ԵՍ (ԳԵ)
ՐԳ ՉԱՐԱԲԵՐԴԵՑԻ ԱՆԱՐԺ
ԱՆ ՔԱՀԱՆԱ ՈՐԴԻ ԾԵՐԱ
ԲԱՆՈՒԱՆԱ ՏՎԻ ԶԻՄ ՀՈԳ
Ո ԲԱԺԻՆ Ի Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏՍ ՍՈՔԱ (:Բ: Ժ)
ԱՄ Տ(ԵԱՌ)ՆԴԱՌԱԶԻՆ ՏՎԻՆ ԻՆՁ Ե(Ի ԾՆ)
ՈՂԱՑ ԻՄՈՑ ԿԱՏԱՐԻԶԶՆ ԱԻՐՀՆԻՆ (ՅԱՍՏՈՒԾՈՅ)


Հաջորդ արձանագրության մի մասը չի պահպանվել, իսկ մնացած մասն էլ ծածկված էր աղաշերտով: Ժամանակին սրտ պահպանված մասը ընթերցել էր Հ. Օրբելին, արձանագրություն, որի մի մասը հետագայում ջարդոտվել է: Աղաշերտի մաքրումից հետո այս արձանագրությունը, որը հրա-

տարակված է «Դիվանում» 164 համարի տակ (ԼՋ 62), հետևյալ տեսքն ունի.

(Ե)Ս ԳՐԻԳՈՐԷՍ Ե(Ի ԵՂԲԱ)
 ՅՐ ԻՄ ԱԴԱՄ ՄԻ(ԱԲԱՆ)
 ԵՅԱ Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽ(ՏԻՍ ԵԻ ՍՈ)
 ՔԱ ՏՎԻՆ :Բ: ԺԱ(Մ ՓՈԿԱՍ)
 ՈՒ ՏԱԻՆԻՆ ԶԻՄ ԱՂԲԱԻՐ ՈՐԳԻՆ
 ՀԱԻԱԴԵՂԻ ԿԱԹՈՂԻԿԻՆ ՏՎԱԻ

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆ





ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

ԻՆՉ ԱՐԲԵՅՈՒԹՅԱՄԲ

Միապ Մեծարենցի ծննդյան իննսունամյակն էր 1976-ին: Անակնկալի զգացողությունն էր ինձ խոփել հանկարծ, զարմանքը. հայերժ պատանի Մեծարենցը իննսունամյա ծերունի՞, եթե ողջ լիներ: Բայց նաև՝ ընդամենը իննսուն: Վեց տարի առաջ պատկառանքով ու երկյուղած խանդաղատանքով համբուրել էին Մարտիրոս Սարյանի նահապետական ձեռքը՝ նրա իննսունամյակին: Մեծարենցի մահից անցել էր համարյա յոթանասուն տարի, բայց նրանից, ուրեմն, վեց տարով մե՛ծ է եղել Սարյանը, որի ամբողջ երկարամյա ստեղծագործությունը իր ոգով ալնքա՞ն մեծարենցյան է՝ նույն բանաստեղծական աշխարհը գեղանկարչության լեզվով: Ու նաև այդ օրերին, ուրեմն, իր իննսունն էր բոլորել իմ պատանեկության սիրելի ուսուցիչը՝ իր խոր ծերությունը Փարիզում ապրող մեծ մանկավարժ Պողոս Գեփորգյանը, որ Մեծարենցի տարեկիցն էր և Պոլսում նրա դասընկերն է եղել ժամանակին: Տասը տարի առաջ եկել էր Երևան. մի առիթով հիշել էր իրենց աշակերտական կյանքը և պատմել, թե ինչպես Միապն իր առաջին բանաստեղծությունների տետրակը վարանոտ ներկայացնում էր իրենց ուսուցիչ Հրանտ Ասատուրին, պատմել նույնիսկ, թե ինչպես բավում խաղում էին միասին և ինքը լինում էր աշխույժ Միապի խաղընկերը:

Իսկ իմ սերունդը սովելի քան կես դար, դեռ դպրոցական նստարանից, Մեծարենցին գիտե որպես փայլուն աստղ մեր դասականների համաստեղության:

Տարօրինակ ու խորհրդավոր են թվում սերունդների ոգեկան ժամանակի այս տարբեր չափումները՝ օրացուցային ժամանակի անշեղ, անտարբեր հոսքում: Բայց գուցե դա, մի ուրիշ տեսանկյունով, այն նույն խորհրդավորությունն է, որ զգում ենք, երբ կյանքի գործությամբ լի՝ փորձում ենք ըմբռնել մահվան ստեղծվածը և հանգում անմահության սովելի ևս ստեղծվածային գաղափարին, որ միշտ էլ հուզել է մարդուն: Իննսուն տարին երկարակյաց կյանքի տևողություն է, բայց Մեծարենցը ապրեց դրա միայն

քանակերկու տարին: Իսկ այդ կարճ ժամանակամիջոցը, մի ծնունդի և մահվան միջև ամփոփված, հանճարի ոգեկան չափումով դարձավ անմահություն, որ անցյալի մեջ խորանում է մինչև «Երկներ երկին և երկիրի» արեվապաշտ աշխարհագրացողության ոլորտները, իսկ ապագայի մեջ...

Այսօր արդեն անկարելի է տարակուսել, որ Մեծարեցը միշտ էլ, քանի կյանքն ու ոգին կծաղկեն այս երկրագնդի վրա, հրաշալիորեն կենդանի ապրում կլինի բոլոր նրանց համար, ովքեր բախտ կունենան հաղորդվելու նրա ստեղծած բանաստեղծական աշխարհին, որ իբրև երջանկության անշեշտ լույս կմնա նրանց հոգում:

Ամենալայն ու ամենախոր առումով լիակատար բանաստեղծական աշխարհ՝ սկսած առաջին քերթվածներից, որոնք ամփոփված են «Բաբախումներ» վերնագրի տակ, մինչև կատարյալ գլուխգործոցների մշտադալար բուրաստանը, որի վերևում կարծես ծիածանվում է մի ընդհանուր վերնագիր՝ «Ի՛նչ արքեցոյաւմք»: Զգիտես ինչու ունանք «թույլ» են համարել այդ առաջին բաբախումները, որոնց մեջ արդեն կանխահաս տաղանդի սիրտն է տրոփում, բայց կարելի է հասկանալ այդ պայմանական դժվարահաղությունը, որ Մեծարեցին համեմատում է Մեծարեցի հետ ու շվարում է զարմացած, շշմում, թե ինչպես հանկարծ, մեկ օրից մյուսը, տաղանդի կոկոնից հորդեց շողշողուն հանճարը, այն էլ փովին հասուն, անթերի արվեստով:

Ոչ մի արտաքին-նկարագրական տող, ոչ մի ավելորդ-անկենդան բառ, ոչ էլ որևէ ոճական շպար, որ քերթողական արվեստի լոկ ձևական մոտահոգություն մատնի: Ամեն մի քերթվածի մեջ, ծայրեծայր, աստվածատուր բանաստեղծության հրաշագործ ոգին է շնչում: Բառերը թրթռում են կյանքով, ծաղկում են, աճում կենդանի էակների նման: Եթե երբեմն հազվագյուտ ու փնտրված են թվում, այդ նշանակում է, որ արտահայտված զգացումը կամ միտքն է շատ նուրբ կամ խորունկ: Տող առ տող, քերթված առ քերթված ստեղծվում է մեծարեցչյան աշխարհը, որ իր պանթեիստական ապրումներով տիեզերքն է ընդգրկում, սովերից դեպի լույսը ձգտելով միշտ: Տրսմոլություններից անգամ ուրախություն է ցայտեցնում Մեծարեցը, իսկ ուրախություններն ապրում է իբրև ցնծագին արքեցոյուն: Եվ հասնում է կենսասիրության ու մարդասիրության ամենապայծառ բարձունքին: Դա ոչ թե մակերեսային, քաղցրմեղցր, այլ անդունդ տեսած կենսասիրություն է, չարը ճանաչած մարդասիրություն: Գիտակից, ամբողջական կենսափիլիսոփայություն է դա, որի խորքում բնավորության, նկարագրի ամբողջականությունն է պարագծվում: Ինքը մահվան շեմին կանգնած, նեղմիտ ու չարական բնադաշտներից հնգածվող, բայց իր նշմարության ուժով նրանց դառ տվող պատանի բանաստեղծ, իր ժողովրդի ստապանքներն էլ խորապես տեսնող հայ մարդ՝ նա շատ լավ գիտե կյանքի դաժան կողմերը, բայց համոզված է իր հանճարի պայծառաստեղծությամբ, որ բուն կյանքը ապրելու համար պետք է հոգին ուղղել դեպի լույսը, մարդկանց էլ օգնել ապրելու՝ դեպի լույսը տանելով:

Բնական է, որ վաղամեռիկ Մեծարեցի անունը միշտ զուգորդվում է մեր մյուս վաղամեռիկ հանճարեղ բանաստեղծ Դուրյանի անվան հետ: Եվ հաճախ համեմատում են նրանց. առաջինի մեջ տեսնում են քնքշություն, մեղմություն, երկրորդի մեջ՝ թափ, ուժ: Մտածում են. երկուսն էլ նույնքան քնքուշ են, որքան ուժեղ, խառնվածքներն են տարբեր: Դուրյանի ուժը ներքուստ եռում է և արտահայտվում է զգացումների մերթ գունագեղ հրավա-

նությանը, մերթ սևահոն դրդումով, իսկ վերջին պահին պողթկաց հրաբխային ժայթքումով՝ իր նակատագրի ու Աստծո դեմ: Մեծարենցի ուժը իր զարմանալիորեն ամբողջական կենսափիլիսոփայության մեջ է, իր «արքայությանը» ծիսականվող ապրումների անսահմանության մեջ, նրա համար երջանկություն է «տերևի մը խարշափին մեջ տեսնել տիեզերական գործության գաղտնիքը, ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի անհունը»:

Նրա հոգին ընդգրկում է
բոլոր ձևերն ու երանգներն ամեն
բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն
իր մեջ անդրադարձ ծիսականումեն՝
Աստվածն՝ որ եկավ՝ չե՛ս գիտեր ուրկե՛...

Հախտուն է Մեծարենցը, հզոր. ոչ միայն բանաստեղծական հորդաբուն բնագրն է խոսում նրա շրթներով, այլև բարձր իմացականությունը, որի մեջ ներդաշնակորեն միաձուլված են խորապես գիտակից արվեստագետն ու իր աշխարհայացքի կենսաբարբախ նշարտությունը՝ տոգորուն իմաստասերը:

Եվ այս բոլորը՝ բաներկու տարի ապրած պատանո՛ւ հոգում: Հանճարի խորհուրդն է: Ոչ թե սովորական, օրացուցային, այլ կարծես երաժշտական ժամանակով է լցված նրա կարճատև կյանքը. սիմֆոնիա, որ քառասուն րոպեի մեջ մի ամբողջ ներդաշնակ աշխարհ է խտացնում իր ամբողջ ելևէջուն բազմաձայնությամբ:

Բանաստեղծական լուսատառ, սիրառատ արքեցույթայն լի այդ աշխարհը շողշողացել է Վոսփորի գեղածիծաղ ափերին, բայց արյունոտ սուլթանի բռնապետության խավար մթնոլորտում: Երբ մտածում ես, հենց այդ մթնոլորտում էլ այդպիսի շողշողումը տարօրինակ մի զգացողություն է տալիս, թվում է գրեթե անելովածային երևույթ, որի մեջ խորհրդանշական իմաստ ես զգում. իմաստ, որ լայնորեն առնչվում է անհատական, ազգային և ընդհանրապես մարդկային տոտալալից նակատագրի գոյութենական խնդիրների հետ:

Այդ հիվանդ հասարակության մեջ, ուր տիրում էր մահվան ուրվականը, մահավանդ կոտորածների արյունաբքու մահվան, որի ճիրանները կախված էին միշտ հայոց գլխին, քսանամյա բանաստեղծը նաև ֆիզիկապես մահացու հիվանդ էր թոքախտով, զգում էր իր մոտալուտ վախճանը: Հենց այդ նախազգացումն իսկ խթան չի՝ եղել արդյոք իր ստեղծագործ հանճարի այդպիսի կանխահաս, պողթկուն ծաղկման: Ստեղծագործության բուն էությունը, վերջին հաշվով, մահվան հաղթահարումն է, անէություն ժխտումը: Եվ ամենախիսկական ստեղծագործությունն է մեծ արվեստը, որի գոյության բուն իմաստը կյանքի հաստատումն ու հավերժացումն է եղել ի սկզբանե, հար ընդմիշտ: Իսկ արվեստագետի խառնվածքը, որ անխմանալի խորհուրդն է անհատականության, ամեն մի ստեղծագործական աշխարհում ուրույն էրանգ, ուրույն գունավորում է տալիս կյանքի միշտ նույն հաստատմանն ու հավերժացմանը: Նկատելի է նաև մի երևույթ, որի մեջ գուցե թաքուն օրինաչափություն կա. ստեղծագործական հանճարը, կարծես իր ամբողջ եռանդով խտացնելով ծայրահեղ լարվածության մեջ, բուռն պողթկունով արտահայտվում է ճգնաժամային պահերին, երբ անմիջականորեն է սպառնում մահվան ուրվականը՝ լինի ֆիզիկական, լինի հոգեկան մահվան, սպառնում է մահավանդ նոր ծաղկող կյանքին...

Ուրեմն, որքան էլ առաջին հալացքից զարմանալի թվա, բնական էր այնուամենայնիվ, որ Մեծարենցի համնարը պոռթկաց այդպես ու շողշողաց անակնկալորեն հասուն, մեծ արվեստի լուսատու գործությամբ։ Եվ նույնիսկ ավելի ուժգնորեն, քան մեծ արվեստը կարող է իրագործել սովորական պայմաններում, արդեն տարիքով միայն պատանի բանաստեղծը հաղթահարել է, իր այդ գործությամբ, կեցության դաժան հակասությունների անդունդը տեսնողի տրտմությունը, հաղթահարել է բուն իսկ մահվան անը, և իր պահթեխտական բնութեհասկառու, լուսապաշտ խառնվածքից էլ մղված՝ կյանքի հրաշքն է երգել ամենահրաշալի ձևով, գոյի տիեզերական խորհուրդի ցնծությամբ է թրթռացել իր ամբողջ էությամբ։ Սքանչացման ու սարսափի, հույսի և հուսալքության, ուրախության և տխրության ճակատագրական խառնուրդում, որ վիճակված է ապրել մարդ էակին մանավանդ, նաև առհասարակ բոլոր կենդանի էակներին գուցե, նա բանաստեղծական անկրկնելի դյուրանքով ջատագովել է սքանչացումը, հույսը և ուրախությունը, ջատագովել է առանց դույզն ինքնախաբեկության, առանց պատրանքների տակ թաքնվելու վաղահաս մահվան ուրվականից, որ սև թևերը տարածում էր իր վրա, կարծես նույնիսկ արհամարհել է նրան և կամ, ավելի ճիշտ, բանաստեղծական իր յուրահատուկ ժպտուն և նույնքան դյուրթիչ թափիծով է դիտել սարսափը, հուսալքությունը և տխրությունը։ Ամեն անգամ իր շրթունքները բացել է ոչ թե նակատագիրն անիծելու, այլ կյանքը օրհներգելու համար։

Եվ ավելին։ Զգալով ամեն մի կենդանի էակի և նույնիսկ բնության տարերքի «արբեցության» թրթիռը, զգալով, թե ինչպես «համբույրներ կուգան հովեն ու ծովեն», թեպետ «լույսն իմ հոգվույս բիշ-բիշ կմաշի», նա տենչացել է «անանձնական ուրախություն»։

Անանձնակա՜ն ուրախություն։ Ի՜նչ է դա։ Լուսավոր անհունագագացության միտիկ զգացում։ Անձի անհուն ընդլայնումը, որով հոգին անանձնանում է և ընդգրկում «բոլոր ձևերն ու երանգներն ամեն բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն», համերաշխվում այդ բոլորի հետ և Աստծո ներկայությունն է զգում իր մեջ։ Ա՜յդ է։ Ա՜յդ է ամենից առաջ, կասի որե՛կ ոք, որ իր խառնվածքով եղբայր է Մեծարենցին։ Բայց նաև, հենց այդ իսկ լինելով, անմիջականորեն համամարդկային մեծ ու խորագույն իմաստ ունի Մեծարենցի անանձնական ուրախությունը. դա համընդհանուր սուրբ համերաշխությունն է մարդկանց միջև, այդպիսով նաև մարդկանց ու բնության միջև, այն մեծագույն համերաշխությունը, որ մարդկության մեծերի երազանքն է եղել միշտ։

Եվ ահա Մեծարենցը երգում է անանձնական ուրախության Աղոթքը, ստեղծելով բանաստեղծական հանճարի ամենագեղեցիկ, ամենասուրբ մի էջը համաշխարհային գրականության մեջ։ Այդ զարմանալի Աղոթքը նա կոչել է «Արդի մարդուն Հայր մերը»։

Այո, համաշխարհային գրականության մեջ, որքան փնտրել եմ, չեմ գտել կենսասիրության, մարդասիրության և, ավելի տիեզերականորեն, գոլասիրության մի այնպիսի ոսկերույս Աղոթք, ինչպես Մեծարենցի այս բանաստեղծությունն է՝ իր հղացքով իսկ գրականության ուղեծրից անդր սլացող մի մարգարեական երկ, որի տասնհինգ եռատող տներից յուրաքանչյուրն սկսվում է նույն սաղմոսային օրհներգական աղերսանքով.

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական...

Բանաստեղծությունն: Երբեմն նույնիսկ անհավատալի է թվում, որ պարզապես բանաստեղծություն է դա՝ լինի թեկուզ հանճարեղ մարդու ստեղծագործություն: Բիբլիական դարերում պիտի աստվածաշունչ գրություն հասարեին այդ քերթվածը, իսկ հեղինակը սրբության լուսապսակով պիտի պատկերանար մարդկանց: Դա մարդկային ոգու այն գերագույն արտահայտություններից է, որով Արվեստը իրագործում է իր գերխնդիրը՝ երբեմն կենցության պարսպի մեջ անիմաստ գահավիժում թվացող թոհոբոհում հոգու հենարան լինել ու թռիչք տալ մարդուն դեպի կյանքի լիություն, դեպի իդեալ, այս աշխարհում ապրելու հոգեկան «շրջասփյուռ բազմազեղումով»:

Մեծարենցի անմահ հոգու հանդեպ խորին սրտաբուխ երախտագիտությանը ասեն՝ ինձ համար երջանկություն էր, որ մանկության օրերից հաղորդվեցի հենց իր՝ բանաստեղծի հոգու հրաշալի բազմազեղումին: Դեռ նախակրթարանում, ինը կամ տասը տարեկան, որպես հերթական դաս պետք է «գոց» սովորեինք, այսինքն անգիր անեինք մի փոքրիկ ոտանավոր և պատմեինք, թե ինչ «տեսանք» մեր մտքում, թե ոտանավորը «ինչ ըսել կուզե»: Դա «Հյուրը» բանաստեղծության առաջին տունն էր, որ անգիր անելու էլ կարիք չկար, գրեթե առաջին իսկ ընթերցումից տպավորվեց ու մի պարզ, գեղեցիկ երգի նման, կարծես ինքնիրեն, կրկնվում էր մտքումս.

Դաշտի ճամփու մը վըրան,
կամ ըստորոտը լեռան,
ողևորին ժամանման
ըսպատող հյուղն ըլլալի:
Ու գգվանքիս կանչեի
ես ճամփորդներն անժաման,
ու ճամփուն վրա մենավոր,
ու ճամփուն վրա ոսկեման,
եկվորներուն դիմավոր՝
ծըխանիս ծովսն ամպեի:

Օրհնյալ լինի հիշատակը մեր պարոն Արիս Գալֆալանի, մեր սպիտակահեր, գորովայից ուսուցչի, որ թելադրեց մտածել, թե ոտանավորն «ինչ ըսել կուզե»: Մինչև հիմա մնացել է մեջս այն զմայլված զարմանքի զգացողությունը. ոտանավորը հանկարծ հուզեց Հիտուսի պատմած ավետարանական պարզ առակների նման, այնպես է կենդանի տեսա այդ կանչող հյուղը՝ դաշտում երկարող ճամփու հեռանկարում լեռան ստորոտին, տեսա ծխացող ծխանի տակ մտերմիկ ջերմությունը սլնտեղ, իսկ այդ հյուղն «ըլլալու» տարօրինակ ցանկությունն էլ հանկարծ զգացի անձնապես, կարծես ինքս լինեի թե՛ կանչողն այնտեղ, թե՛ հոգևած ճամփորդը, որին դիմավորում էի գգվանքով: Դա ոչ միայն հալոց լեզվի դաս էր պարզապես: Չեմ վարանում ասելու, որ դա նման էր սուրբ հաղորդության. բանաստեղծության սկիհից հաղորդվում էի մարդասիրության մեծ խորհուրդին՝ Մեծարենցի ձեռքով, թեկուզ մանկական դեռ կիսագիտակից սքանչացումով միայն:

Այդ հաղորդությունը, խորացող գիտակցությամբ, ոչ թե պարզապես շարունակվեց, այլ մեծարենցյան ապրումների գգվիչ ծաղկում դարձավ իմ հաջորդ դպրոցում՝ Մեղգրնյանում, որ հատկապես Մեծարենցի պաշտա-

մունք կար ամբողջ պատանեհասակ աշակերտության մեջ, շատերն ունեին մի նվիրական տետրակ, որի մեջ մարգարտաշար տողերով արտագրում էին նրա բանաստեղծությունները: Անշուշտ, ես էլ ունեի: Եվ իմ տետրակում հատուկ «լուսապսակով» էի գարդարել հենց «Ի՛նչ արբեցությանք» և «Արդի մարդուն Հայր մերը» քերթվածները, որոնք հոգեհարազատ հալոնություն էին եղել ինձ համար՝ լույսի ճամփա դեպի տիեզերական սիրո արբեցությունը, դեպի անանձնական ուրախության աստվածային Հյուսիս:

Մինչև այսօր էլ, հակառակ բոլոր հիստոփոթություններին, և այն պահերին մանավանդ, երբ հոգի չարչրկող թոհուբոհ վիթխարի անհեթեթություն է թվում և խոր տխրության խոնջեմքն է ստվերում ճամփաս, իր զրրգանքին է կանչում Հյուսիս և դիմավորում իր հաղորդության սկիհով, որից ճառագայթում է միշտ ոսկեկույտ այդ Աղոթքը, տուն առ տուն ծավալելով բանաստեղծական այնքա՛ն գեղեցիկ ու խորիմաստ պատկերների բուրմունքը և թարմացնելով հոգին, ընդլայնելով, բարձրացնելով մինչև ավարտական տների մեծ ու վճիտ զգացումը, մինչև պանթեիստական ապրումի անհուն ընդհանրացումը, ուր ամբողջ մարդկությունն ու բնությունն են ընդգրկված:

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական.
զայն իբր անձրև ցողեմ ամեն դաշտի վրան,
զայն իբր արև բաշխեմ ամեն հորիզոնի:

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական.
զայն ընդգրկած իդեալին ըլլամ որական.
զայն լաստ ըրած՝ ես Լույսերու նավորդն ըլլամ:

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական՝
ժողվել՝ հոգվույն մեջ ծերերուն, կույսին, մանկան,
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին:

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական՝
ժողվել՝ հոգվույն մեջ ամենո՛ւն, համայնական
հոգվույն ամեն մասնիկներուն մեջ՝ ամեն ժամ:

Մամիաներե՛ն, ու գետերե՛ն, ու դաշտերե՛ն,
անտառներե՛ն, ու լեռներե՛ն, ու ձորերե՛ն,
տանիքներե՛ն, ու տուններե՛ն, ու դուռներե՛ն՝

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական:

Այս քաներորդ դարի առաջին իսկ տարիներին, օսմանյան այդ արյունաքրու բռնության տակ, ինչպե՛ս է քանամյա մարգարեն կանխագագեել այն, ինչ արդի մարդու մեծագույն խնդիրն ու տենչն էր դառնալու մեր տագնապահար ժամանակներում, հենց մեր այս օրերին մանավանդ: Արդարև, էթե բանաստեղծական ընկալումով արտահայտեինք այդ մեծագույն խնդրի ու տենչի բուն բարոյական էությունը, պիտի ասեինք՝ անանձնական ուրախությամբ սրբագործված համամարդկային համերաշխության հրամայականն է դա, երբ այլևս, անցյալում երազված ուտոպիստներից հետո, այլ գործնական ճանապարհ չի մնացել փրկության համար՝ համամարդկային կործանման կամ վերածննդի շեմին հասած մեր ճգնաժամային դարում,


որ մահվան ուրվականն իր սև թևերն ապառնայից տարածել է ամբողջ երկրագնդի վրա, իսկ դրա դեմ պետք է ունենալ սերն ու բարիքը ջատագովելու արդար կորովն ու արիությունը՝ հանուն մարդկային ցեղի անմահության:

Բնական է ցավել ու ախտալ, որ Մեծարեցը այնքան շուտ է մահացել՝ ընդամենը բաձերկու տարեկան: Բայց զարմանալիորեն ամբողջական է նրա թողած ժառանգությունը՝ բանաստեղծական մի արտաձայագործն գունագեղ, բուրումնայից, կենսաթրթիտ աշխարհ, կենդանի իրականությունն արտացոլող քնարական սպրունների անսպառ ճշմարտությամբ բաբախուն, երբեք չթառամող պատկերների անհուն նրբություններով հարուստ: Եվ այդ աշխարհը, ինչպես որևէ ամբողջական ստեղծագործություն, իր գագաթնակետն ունի՝ իր ամենացատուն բարձունքների շարքում: Դա հենց «Արդի մարդուն Հայր մերը» քերթվածն է՝ շողշողուն գագաթ, որից ճառագում են այդ աշխարհի բոլոր բանաստեղծային խոփաչակն սրժանիքները և ավելին՝ մեծ բանաստեղծի լուսաճաճանչ պատգամը:

Ցնցիչ անակնկալ էր ինձ համար, խորախորհուրդ մի հայտնություն, երբ այս մտորումներից հետո տեսա շատ թանկագին մի մասունք, չափազանց նշանակալից՝ ոչ միայն իբրև Մեծարեցի կենսագրության հետ առնչվող իրեղեն արժեք պարզապես, որքան էլ նվիրական լինե՞ր հենց այդ հանգամանքով իսկ, այլև մանավանդ ոգեկան խորք բացահայտող փաստացի մի իրողություն, որ առնչվում է նրա ամբողջ բանաստեղծական աշխարհի հետ՝ ակունքներից մինչև պատգամը: Նրա մոր մատանին էր, որի երեսին մեծատառ փորագրված է երկու տող.

ԿԱՏԱՐԵԱԼ ՍԷՐ
ՄԵՐԺԷ ԶԵՐԿԻՆՂ

Կարելի՞ է արդյոք ավելի կոտ, ավելի սպառիչ բնորոշել Մեծարեցի ամբողջ ստեղծագործության բուն ոգին, ուստի նաև նրա պատգամը: **Կատարյալ սեր և մերժիք երկյուղը.** երկու պատվիրան, որոնք պայմանավորում և լրացնում են իրար, կազմելով անբակտելի ամբողջություն, բայց ինձ էական թվաց ու ցնցեց հատկապես երկրորդը, որովհետև հենց երկյուղն է. վախն է խանգարում սիրո կատարելությանը և նույնիսկ լրիվ քայքայում, սպանում է սերը, երկյուղ՝ թե՛ առօրյա հոգեբանական իմաստով, թե՛ մանավանդ փիլիսոփայական լայն ու խոր, գոյութենական իմաստով: Բնական է պատկերացնել, որ մահուկ Միսաքի դիտող, զգայուն աչքը մոր ձեռքին ոչ միայն նկատել է, այլև, ինչպես շատերս ենք արել մեր ծնողներին պատկանող իրերի նկատմամբ, ֆետիշացրել է այդ պատգամող մատանին, որ ամենայն հավանականությամբ, ըստ սմոուսական բարբերի, հոր նվերն է եղել իր կողակցին՝ բարոյական բարձր սկզբունքը որպես հմայախոսք վրան փորագրված: Ուրեմն բնական է նաև ենթադրել, որ իր ժառանգած գեների հետ հայրենի «իմքենին համակ բանաստեղծություն» Բիկկյան գյուղից մանկական տպավորությունների հետ, Մեծարեցը դեռ իր ենթագիտակցության մեջ ընկալել է իր ծնողներից այդ պատգամը և հաղորդել աշխարհին՝ իր հանճարեղ ստեղծագործությամբ:



ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎՐԱՅ ԴԱՎԻԹ ԱՐՔԱՅԱԶՆԻ ԷՐԶՐՈՒՄԻ ԲԱԹԹԱԼ
ՀՈՒՍԵՅՆ ՓԱՇԱՅԻՆ ԳՐԱԾ ԹՈՒՐԳԵՐԵՆ ՆԱՄԱԿԻ
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հուկա Կարնեցու մահվանից հետո (1799 թ. դեկտեմբերի 27) Էջմիածնում կաթողիկոսական թեկնածուների ընտրության շուրջ առաջացած շփոթը հալոնի է Դավիթ-Դանիելյան վեճ անվամբ: Մի վեճ, որի համար երկու կողմերն էլ գործել են ապշեցուցիչ եռանդով՝ վատնելով մեծ ժամանակ և դրամական զգալի միջոցներ:

Վերը նշված փաստը հաստատելու համար՝ բազմաթիվ օրինակներից քերենք միայն մեկը: Կաթողիկոսական թեկնածու Դավիթ Ղորղանյանի հավատարմատար Դավիթ քահանա Տեր-Օհանյանը մի գրությանը տեղեկացնում է իր պաշտպանչալին, որ ինքը լավ է աշխատում և միջոցներ չի խնայում, ու խորհուրդ է տալիս Դավիթ արքեպիսկոպոսին, որ գործը գլուխ քերելու համար փող չխնայի¹:

Կաթողիկոսական թեկնածուների համախոհները ջանք չէին խնայում բոլոր հաղթանակ վայրերը հեղեղելու իրենց թղթերով, մասնավոր ու պաշտոնական գրագրություններով, իշխանություն ունեցող անձերին (թե հայ և թե օտար), եղյուխի սուլթանին, շահերին, կապրերին իրենց կողմը գրավելու համար: Երևանում, Կ. Պոլսում, Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում և այլուր գործել են հարյուրավոր մարդիկ: Այս համառ ու կատաղի պայքարից հսկայական քանակությամբ գրավոր ելույթներ են մնացել, որոնցով ողողված է Մատենադարանի կաթողիկոսական դիվանը:

Հուկա Կարնեցին, իր հայրապետության օրոք վարում էր չափավոր քաղաքականություն: Նա ազատագրական ձգտումների նկատմամբ իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու նման զգուշավոր վերաբերմունք ուներ, և հակառակ դրան ինքը ևս ձգտում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու

¹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. № 45;

تذکره

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

تذکره شاعران
صالحی است که غنای او در کمال است و غنای او در کمال است و غنای او در کمال است

օտար լծից, սակայն միևնույն ժամանակ ծանր հետևանքներից զերծ մնալու համար՝ աշխատում էր չբացահայտել իր նպատակները իրանական տիրապետող շրջանների մոտ: Այդ իսկ պատճառով, նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ, Էջմիածնի միաբանները հաշվի առնելով Ղուկաս Կարնեցու վարած քաղաքականությունը և դեպքերի հետագա աննպաստ զարգացումից խուսափելու համար՝ Հովսեփ Արղությաննի անունը չմտցրին թեկնածուների ցանկի մեջ, այլ՝ կանգ առան Կ. Պոլսի պատրիարք Դանիելի վրա²:

Դա բացատրվում է նրանով, որ Հովսեփ Արղությանը, լինելով Ռուսաստանի հայոց առաջնորդը, հանդես էր գալիս որպես ռուսական պետության պաշտոնյա: Նա տարիներ շարունակ ռուսական պաշտոնական շրջաններում էր ապրել, և շատ անգամ ռուսաց զորքերի հետ պատերազմի էր գնացել օսմանցիների և պարսիկների դեմ: Ուստի և նրա ներկայությունը Էջմիածնում, այն էլ որպես կաթողիկոս, անհանդուրժելի կլիներ թե Թուրքիայի և թե Իրանի համար: Դա հավասարազոր էր երկու տիրապետող տեությունների դեմ պատերազմ հայտարարելուն³:

Այդ հանգամանքը չէր մտահոգում Հովսեփ արքեպիսկոպոսին: Նա մեծ եռանդով գործի է անցնում և դիմելով Ռուսաստանում գտնվող իր բարեկամներին՝ կարողանում է ձեռք բերել ռուսաց կայսեր հրովարտակը⁴, և ապա հենց Ռուսաստանի օգնությամբ՝ սուլթանական բերաթը⁵ ամենայն հույսով կաթողիկոս դառնալու համար:

Նա մեծ հանդիսավորությամբ ճանապարհ է ընկնում Թիֆլիս, որտեղ նրան Մայր Աթոռ ողեկցելու համար՝ Էջմիածնից դիմավորելու էին եկել չորս եպիսկոպոսներ⁶:

1891 թ. փետրվարի 11-ին Արղությանն արդեն Թիֆլիսում էր: Այնուհանդերձ, Դանիելը, որը մինչ այդ առաջել էր Էջմիածնի հրավերը, ուղեվորվում է դեպի Մայր Աթոռ՝ օծվելու որպես ամենայն հայոց կաթողիկոս: Սակայն Էջմիածնական գործերին ռուսաց գործուն միջամտության պատճառով՝ Դանիելը աքսորվում է Եվդոկիա⁷: Մեկ ամիս անց՝ մարտի 10-ին, Թիֆլիսում մահանում է Հովսեփ Արղությանը:

Արղությանը մահվանից սուս չհասցրեց որևէ կտակ կազմել, սակայն Էջմիածնից ժամանած հրավիրակ Սիմեոն եպիսկոպոսին կարողացավ հայտնել. «Իմ կայից դաթարովն Գրիգոր վարդապետն գիտակ է, ի մնանը տեղեկացեք»⁸:

Հովսեփի անձնվեր հետևորդներից էր Գրիգոր Աղքիբանցի վարդապետը՝ նրա աշակերտն ու հավատարիմ անձը: Սիմեոն եպիսկոպոսը, որը եղել է Հովսեփ կաթողիկոսի խոստովանահայրը, մի գրությամբ տեղեկացնում է, որ կաթողիկոսը կտակել է ինչ-որ մի արկղ հանձնել եղբորորդուն՝ իշխան Սողոմոնին. «Իսկ լալ ամենայն կալին իմ սուրբ Աթոռոյն»⁹: Հով-

² Աբր. Զափնյան, Հայոց եկեղեցու պատմություն, Բ մաս, 1909:

³ Փեղանյանց, Պատմական քաղվածքներ, էջ 10:

⁴ Акты (акка), т. II, стр. 1150—1151.

⁵ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1 Գ վավ. 558:

⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հ., Գ գիրք, էջ 3256:

⁷ Հովհաննիսյան Կ., Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմություն, Երևան, 1981, էջ 9:

⁸ Մ. Օրմանյան, Ազգապատում, գիրք Գ, Բ հատոր, էջ 3279:

⁹ Գ. Աղանյան, Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 96:

սեփ Արդությանը կտակել է նաև իր մարմինը թաղել Սիմեոն կաթողիկոսի մոտ՝ Էջմիածնում¹⁰։ Սակայն կաթողիկոսական Աթոռը կտակելու մասին ոչ մի խոսք չի եղել։

Զնայած դրան, Գրիգոր Աղքիրմանցին Թիֆլիսում լուրեր է տարածում, թե իբր Հովսեփ Արդությանը կաթողիկոսական Աթոռը կտակել է կամ Դավիթ արքեպիսկոպոսին, կամ էլ Ս. Պղոսի նորընտիր պատրիարք Հովհաննեսին¹¹։

Թիֆլիսի ռուսական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Լազարևը և լիազոր մինիստր Կովալենսկին, Հովսեփ Արդությանին դիմավորելու եկած հրավիրակներին թույլ չտվեցին անմիջապես վերադառնալ Էջմիածին։ Դա անհրաժեշտ էր այն բանի համար, որ Էջմիածնում չտեղեկանան դեպքերի մասին և «ինքնագլուխ» ընտրություն չկատարեն։

Հակառակ դավիթականների ապստամներին, գեներալ Լազարևի արգելքներին և Գրիգոր վարդապետի դավերին, հրավիրակների նամակն ավելի շուտ է հասնում Էջմիածին, քան Հովսեփի «կտակի» վերաբերյալ Գրիգոր վարդապետի գրությունը¹²։ Արևին ընտրություն է կատարվում և հաստատվում Դանիելի թեկնածությունը՝ 60 օրվա ընթացքում Էջմիածին գալու պայմանով¹³։

Գրությունը փոխվում է այն ժամանակ, երբ Դավիթն ստանում է Գրիգոր Աղքիրմանցու գրությունը, որը գալիս էր համազելու, թե հզոր աջակիցներ կան իր թեկնածությունը հաջողացնելու համար¹⁴։

Ընտրության պահին Դանիելը գտնվում էր Եվդոկիայում (Թոխաթ), և արդեն տեղեկացել էր այդ խառն իրավիճակի մասին։ Նա տեղյակ էր, որ Ներսես Աշտարակեցին դիմում է ամեն տեսակ միջոցների այդ գործը գլուխքելու համար։

Դանիելը Եվդոկիայից 1801 թ. օգոստոսի 1-ին գրություն է ուղարկում Ներսես վարդապետին՝ խնդրելով կաշառքի չդիմել։

— Եթե ազգը ընտրել է Դավթին, — գրում է նա, — թող իր պաշտոնը վաշելի։ Ես կգամ Դավթի մոտ և կծառայեմ նրան, որպեսզի անտանելի նախատինքը վերանա ազգից և Աթոռից. «քանզի որպես լսես» կողոպտեալ վատնեալ զբազմահարուստ գյուղն Աթոռոյն միանգամայն, ի ներքոյ ծանր և անվճարելի պարտոց կացուցիք, ձերոյ լամստեալ կամապաշտ հակառակութեամբ և աստանալսուէր սնափառութեամբ»¹⁵։

Դանիելը, ստացած տեղեկությունների համաձայն, իր նամակում նույնպես շեշտում է, որ Հովսեփ կաթողիկոսի կտակը Դավթին կամ Հովհաննեսին կաթողիկոս օծելու վերաբերյալ կեղծիք է¹⁶։

Ներսես Աշտարակեցին հաշվի չառավ Դանիելի ցանկությունը, նրան իր ընտրության մասին տեղյակ պահելու և Էջմիածին ուղեկցելու համար մի պահ անգամ չհապառնեց և մեծ շուքով ճանապարհ ընկավ դեպի Եվդոկիա։ Եվդոկիայից Էջմիածին հասնելու համար շրախտոմբը պետք է անց-

¹⁰ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 10, վավ. № 72, էջ 96։

¹¹ Մ. Երսմյան, Ազգապատում, գիրք Բ, Բ հատոր, էջ 3280։

¹² Լեո, ճշված աշխատություն, էջ 122։

¹³ Օրմանյան Մ., Ազգապատում, գիրք Գ, Բ հատոր, էջ 3280։

¹⁴ Լեո, ճշված աշխատություն, էջ 122։

¹⁵ Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավերագիր № 96։

¹⁶ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 11, վավ. № 96։

ներ Էրզրումով, ուստի Գրիգոր Աղքիրմանցին վրաց Դավիթ արքայազնի անունից թուրքերեն մի գրություն է ուղարկում Էրզրումի վալի Բաթթալ Հուսեյն փաշային՝ խնդրելով ձեռքակալել Դանիելին. նամակում գրված է.

«...Ինչպես լսել և տեղեկացել եք մեծաշուք Հովսեփ կաթողիկոսի կաթողիկոսության հարցի մասին, և այն մասին, որ երկու բարձր պետությունների ցանկությանը և փառավոր հրամանի համաձայն, Էջմիածնի վանքի կաթողիկոսությանը արժանանալով, նա նշանակվել է կաթողիկոս: Մեզ մոտ մուսք գործելուց հետո, ճակատագրի բերումով, նորին վսեմության կաթողիկոսը ինն օր անկողնային հիվանդությունից հետո, 10-րդ օրը կատարյալ գիտակցությանը կտակ անելով՝ այս անցավոր աշխարհը լքեց և շտապեց հանդերձյալ աշխարհը: Հարգարժան Գրիգոր վարդապետին փոխանորդ դարձնելով՝ նա իր փոխարեն նշանակեց Ռուսաստանի հայոց սուաջնորդի պաշտոնին, իսկ Էջմիածնի վանքի կաթողիկոսությունը կտակեց հանձնել կամ Դավիթ արքեպիսկոպոսին, կամ էլ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննեսին: Դավիթ արքեպիսկոպոսը, գտնվելով Էջմիածնում, բազմիցս շեշտվել է նրա կաթողիկոսության հարցը: Այս պահին Էջմիածնից որոշ հոգևորականներ երկու վանական են ուղարկել և համատորեն խնդրում են Դանիել արքեպիսկոպոսին Թոխաթից հրավիրել և կաթողիկոս դարձնել: Վերոհիշյալ Դանիել արքեպիսկոպոսը երկու բարձրաշուք պետությունների կողմից մերժվել և աքսորվել է: Խնդրում ենք, երբ որ վերոհիշյալ Դանիել արքեպիսկոպոսը Էրզրում գա՝ ձեռքակալել և թույլ չտալ որևէ տեղ գնա»¹⁷:

Գրիգոր Աղքիրմանցու նպատակն այն էր, որ Դանիելը սահմանված ժամկետում չկարողանա հասնել Էջմիածին:

Բաթթալ Հուսեյն փաշային հղած նամակի վերաբերյալ Գրիգոր Աղքիրմանցին Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոսին մի գրություն է ուղարկում, նշելով, որ իր վաղեմի բարեկամ Բաթթալ Հուսեյն փաշային խնդրել է ձեռքակալել Դանիելին¹⁸:

Դիվան Հայոց պատմության մեջ կարդում ենք. «Գրիգոր վարդապետը Լազրովի ձեռամբն Բաթթալ փաշային մարդ է հղեալ զի ընթանեսցէ գԴանիել»¹⁹:

Թիֆլիսից Դավիթ բահանա Տեր-Օհանյանը հայտնում է Դավիթ արքեպիսկոպոսին, որ Դավիթ արքայորդին նամակ է գրել Կարնո Բաթթալ փաշային²⁰:

Եվ իրոք, այդ գրությունն ուղարկել է Դավիթ արքայազնը, որի մասին է վկայում ոչ միայն Տեր-Օհանյանը, այլ նաև, նամակի կնիքն ու ստորագրությունը:

Ըստ Գյուտ Աղանյանի, նամակատարն այն ժամանակ է հասնում Էրզրում, երբ Բաթթալ Հուսեյն փաշան արդեն մահացած է լինում²¹:

Դանիել արքեպիսկոպոսը տեղեկանալով այդ խաղաղական մասին՝

¹⁷ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1 Ը, № 1499:

¹⁸ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. № 41, հմմտ. Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 94:

¹⁹ Գ. Աղանյան, Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104:

²⁰ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. № 45:

²¹ Գ. Աղանյան, Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104:


որոշեց շրջանցել Էրզրումը, և Էջմիածին հասնելու համար ընտրել ավելի հեռավոր, սակայն անվտանգ ճանապարհ²²:


Լեոն, հավանաբար իրագել չլինելով այդ դավադրությանը, Դանիելի ուշացումը վերագրում է նրա դանդաղկոտությանն ու անվճռականությանը, նշելով, որ իբրև դանդաղկոտ և թույլ մարդ՝ նա (Դանիելը) չշտապեց գրնալ Էջմիածին, այլ ճանապարհվելով Թոխաթից, կանգ էր առնում ամեն տեղ, ուր գտնում էր հյուրասիրություն, որի պատճառով չափազանց երկարացնում էր ճանապարհը²³:

Բաթթալ Հուսեյն փաշային գրած նամակում խոսացված կերպով շարադրված է վերը նշված դեպքերի մանրամասն նկարագրությունը: Նամակից տեղեկանում ենք այն խտոմաշփոթ իրավիճակի մասին, որը տիրում է Ղուկաս Կարնեցու մահվանից հետո: Սակայն այս նամակը եզակի չէ: Կան թուրքերեն և պարսկերեն բազմաթիվ վավերագրեր՝ ֆերմաններ, հոքմեր, նամախոսական դիմումներ և այլ բնույթի դիվանական և ոչ պաշտոնական գրություններ, որոնք կարոտ են առավել բազմակողմանի ուսումնասիրության:

²² Նույն տեղում:

²³ Լեո, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1984 թ., էջ 126:





Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏԱ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՅ» (իմաստուն ասույթներ քարոզների համար)

Հայ միջնադարյան մատենագրության մեջ առանձին սեռ են կազմում «Վկայութիւնք» անունը կրող ժողովածուները, որոնք ստեղծվել ու կիրարկվել են գլխավորապես դավանաբանական նպատակներով: Դրանց մեջ կան և այնպիսիք, որոնցում տեղ են գտել նաև ոչ դավանաբանական բնույթի վկայություններ, ասույթներ, խորհրդածություններ: Այս բնույթի «Վկայութիւնք» իրենց բովանդակությամբ մերձ են նշանավոր «Բանք իմաստեոց» ժողովածուների հետ: Պետք է ենթադրել, որ «Բանք»-երը, ստեղծված լինելով շատ ավելի կանոխ, ողեցույց են հանդիսացել «Վկայութիւնք»-ների համար: Ինչպես «Բանք իմաստեոց» ժողովածուներում, այնպես էլ «Վկայութիւնք»-ներում տեղ են գտել ոչ միայն եկեղեցու հայրերի, այլև անտիկ շրջանի նշանավոր մտածողների իմաստասիրական ասույթներն ու բարոյական հրահանգները: Մասնավորապես «Վկայութիւնք»-ները ունեցել են միանգամայն գործնական նշանակություն. դրանցում առկա ասույթներն ու իմաստաստությունները կիրառվել են քարոզներում՝ խոսքն առավել դիպուկ և ներգործուն դարձնելու նպատակով:

Հոգեշեն ասույթների մի աղբյուրի ժողովածու է կազմել ԺԷ—ԺԸ դդ. նշանավոր հեղինակ Ալեքսանդր Զողայեցին: Նա «եղել է Նոր-Զողայի Ամենափրկիչ վանքի սուաջնորդ 1697—1706 թթ., այսպես, Նահապետ Եղեասցու մահից հետո»¹ Էջմիածնի կաթողիկոս 1706—1714 թթ.»²: Ալեքսանդր Զողայեցին Հայ Առաքելական եկեղեցու դավանական սկզբունքների փութեանը պաշտպանն ու ջատագովն էր. նա երկարատև ու համառ պայքար է մղել կաթոլիկ եկեղեցու գործակալների՝ լատին միսիոնարների քարոզչության դեմ, և պարսից Հուսեին շահի հրովարտակի օգնությամբ հալածել է նրանց Հայաստանի սահմաններից³: Թողել է մատենագրական հարուստ ժառանգություն³, որի մեջ իր առավել գործնական բնույթով ուրույն տեղ է

¹ Տե՛ս Հ. Ս. Անապան, Հայկական մատենագիտություն, հո. Ա, Երևան, 1959, էջ 578:

² Հր. Անապան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 108:

³ Հեղինակի երկերի մատենագիտությունը տե՛ս Հ. Անապան, նշվ. աշխ., էջ 578—

գքադեցնում նրա կազմած «Վկայությունը պիտանիք և հարկատրք ի պատրաստ գոյոյ ի ձեռն խնդրողաց Բանի, եթէ ի պէտս քարոզութեան և թէ ի պէտս վիճաբանութեան մանասանդ ի պէտս գիտութեան» խորագրով ասույթների ժողովածուն⁴։ Սրան կցված հեղինակի հիշատակարանից իմանում ենք, որ «զայս սակաւ գրքով, զոր տեսանէք, որք են վկայությունը պիտանիք և պատմությունը վայելուչք, զոր ոչ գտանի լամենայն տեղիս, յոյով տաժանմամբ ընթերցայ զգրեանս բազումս և ի նոցունց հաւաքեցի զյոյժ պիտանիս և զճանաւորագոյն հարկատրն, և գրեցի զսա մեղսաներկ բազկաւ իմով և տխեղձ մատամբ և ընձեռեալ ընծայեցի ձեզ պիթեցելոց իմոց եղբարցոյ բանասիրաց, որք փափագօղ էք բանի և իմաստութեան...։ Բայց զայս գիտասցիք, զի զվեց ամ աշխատեցաք ի վերայ տրաւ՝ բազում աշխարհի շրջելով միանգամայն և զվանորայս յոյովս, և լամենայն տեղոյ անձանօթ գրեանս ընթերցելով, և ի նոցունց զկարևոր սևտանին առնելով այսբան ժողովեցաք, զոր տեսանէք։ Եղև կատարումն տրայ ի թուակաւութեանս Հայոց ՌՃԻԶ (1677) ի Շօշ քաղաքի և ի վանս Զողայոյ յառաջնորդութեան յայսմ նահանգի հոգևոր ծնողի և արքիմառիչի իմոյ տեսուն Դասթի քաջ և արի աստուածաբան վարդապետի և արքեպիսկոպոսի, որոյ ի Տեսունէ վարձատրութիւն եղիցի. ամեն»⁵։ Ուրեմն՝ ասույթների ժողովածուն հեղինակը կազմել է վեց տարում. սկսել է 1671-ին և ավարտել 1677 թ. Շոշ, այն է՝ Սպահան քաղաքում։ Ասույթներում տեղ են գտել քաղվածքներ ա) Սուրբ Գրքից (Բ Օրենք ԺԶ 19, Ելք ԻԳ 3, Ղևտ. ԺԹ 32—ԻԶ 27, Ա Թագ. Բ 30—ԺԶ 7, Բ Թագ. ԺԲ 21, Բ Մակ. Զ 16, Յովք. Ա 21—Դ 14, Իմաստ. Ա 3, Ժող. Ա 1—Ժ 14, Եսայի Ա 2, Միք. Է 5, Արքիմ 4—16, Հովմ. Ա 20, Յայտ. Ա 7 և այլն), բ) Անտիկ մտածողների իմաստախոսություններից և գ) Եկեղեցու հայերի զանազան խորհրդածություններից։ Հասկանալի պատճառով զանց ենք առնում ա բաժնում զետեղված ասույթների հրապարակումը։ Զանց ենք առնում նաև Եվագր Պոնտացու անվամբ բերված վկայությունների հրապարակումը։ Այդ վկայությունները ոչ այլ ինչ են, քան մեծանուն ճգնակյացի ասույթների կրճատ տարբերակները⁶։

«Վկայությունը»-ը հրապարակում ենք ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1984 (16ա—32բ, 43ա—45ա) ձեռագրի։ Ստորև տալիս ենք ձեռագրիս նկարագրությունը։ Զեռագիրը ժողովածու է և ընդօրինակված 1682 թ.։ Գրիչ՝ Աստվածատուր ժամարար (նախանաքար Ալեքսանդր Զուղայեցու աշակերտ)։ Թերթ՝ 241։ Պրակ՝ Ա.—ԻԱ.×12 (ԻԱ 1)+1×1։ Նիւթ՝ թուղթ, (լուսագծեղով՝ 192—241)։ Մեծութիւն՝ 19×13։ Գրութիւն՝ միապին։ Գիր՝ ճօտրգիր։ Տող՝ 25։ Կազմ՝ դրոշմազարդ, շազանակազոյն կաշի։ Բովանդակություն՝

Ա., 2ա—45ա [Ալեքսանդրի Զուղայեցու ժողովեալ] վկայությունը պիտանիք և հարկատրք ի պատրաստ գոյոյ ի ձեռն խնդրողաց բանի, եթէ ի պէտս քարոզութեան և թէ ի պէտս վիճաբանութեան, մանասանդ ի պէտս գիտութեան

Բ. 46ա—8ա Տաղ վասն ոգէվարին ի տեր Ալեքսանդրէ—Վայ իմ օր հոգէվարին...

Գ. 49ա—88բ [Վկայությունը ի գրոց վարդապետաց]

⁴ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1984, թ. 2ա—45ա։

⁵ Անդ, թ. 45աբ։

⁶ Տե՛ս «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացույ վարք եւ մատենագրութիւնը...», աշխատ. Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վեներիկ, 1907, էջ 26 և շար.։

Դ. 89ա—114բ [Աղեքսանդրի Զողայեցոյ Հակաճառութիւն ընդդէմ ազգին ֆռանկաց]

Տե՛ս տպ. «Գիրք որ կոչի Ատենական վիճաբանութիւն արարեալ տեառն Աղեքսանդրու սրբազան կաթողիկոսի Զողայեցոյ...», Կ. Պոլիս 1783:

Ե. 115ա—62բ Սիմէոնի վարդապետի Զողայեցոյ արարեալ Քերականութիւն ըստ լեզուի մերում հայկազանց

Զ. 163ա—240բ Սիմէոնի վարդապետի Զողայեցոյ արարեալ զՏրամաբանութեան հաւաքումն

«Վկայութիւնք»-ից օգտվողների գործը դյուրացնելու նպատակով վերջում կցել ենք Առարկայական ցանկ:

[ԱՂԷՔՍԱՆԴՐՈՅ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ ԺՈՂՈՎԵԱԼ] ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

ՊԻՏԱՆԻՔ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈՂՈՒԹԵԱՆ

1. **Ոսկերեբան ասացեալ.** Առանց բարկութեան ոչ վարդապետութիւն առաջանալ, ոչ դատաստանք կայանան և ոչ մոլութիւնք սանձամարին:

2. Արդարե՛ն՝ բարկութիւնն է մայր ամենայն խրատու, քանզի անբան համբերութիւն սերմանէ գմոլորութիւնս:

2. ա. Որ տեկնմամբ երկնայնոցն ըմբռնի, ոչ բնակի մերձ հովանոցիս ալս:

3. Ի մէջ ամենայն պատուոց մեծագոյն է քահանայականն, որ որ անարատ պահեսցէ զնա:

4. Համբերե առ ժամանակ մի թշնամոյն քո և բարի արա նմա, և յարթեսցես նմա քաղցրութեամբ:

5. Աշխարհս է վաճառ պատրանաց ուր ամենայն ինչ վաճառեալ լինին. ի ամա գնօղք և վաճառողք ստութեամբ վարեն զկեանս իրեանց: Արդ, փախիր յաշխարհէ զի մի պատրեսցես կամ պատրեսցիս:

6. Լաւագոյն է յայտնի թշնամին քան զկերպարանեալ սիրելին, քանզի երկնչելովն՝ ի թշնամեաց խորշին, և ոչ ճանաչելովն զկերպարանեալ սիրելին՝ պատրին:

7. Որպէս հիւանդութիւն պատրաստէ գմարմինն ի մահ, տյնպէս չարութիւն մեղացն պատրաստէ զհոգին ի մահ գեհեհնոյն:

8. Որդին Աստուծոյ չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ, գոր եթող մեզ գանձն. կամեցաւ մեռանիլ Որդին Աստուծոյ, զի հաշտեցուցէ զմեզ ընդ յԱստուծոյ Հօր:

9. Ես դառնագոյն կսկիծ քան զգեհեհնն համարիմ գմերծիլն ի տեսութենէն Քրիստոսի:

10. **Բարդղի ասացեալ.** Թէ որ ի վերայ մեռելոյն կոծալ և արին հանէ՝ կոծաղիրն և կոծօլն նզովեալ եղիցին զինի ի լալիս մեռելոց մի ըմպեսցեն և աշխար ի վերայ մի արասցեն, և թէ արասցեն՝ պարտական լիցին ապաշխարութեան արտաքոյ եկեղեցոյ:

11. Բարկութիւն յարուցանէ թշնամացս և թշնամանք ծնանին զկոհի, իսկ կոհին՝ զհարուածս և հարուածք՝ զվերս, իսկ ի վիրացն՝ բազում անգամ զմահք:

12. **Գրիգոր Նազի[անգ]ացի ասէ,** Աստուած խաչեցաւ՝ երկիր շարժեցաւ:

13. Որ զկոյսն Աստուածածինն ոչ խոստովանի, հեռի է Աստուածութենէն:

14. Եթէ որ խաչելոյն երկիր ոչ պազանէ ընդ աստուածասպանսն կար-

Աղեքսանդր Զուղայեցու հավաքած պիտանի և հարկավոր վկայությունները, որպեսզի ընտրողների համար պատրաստ լինեն թե՛ քարոզչության, թե՛ վիճաբանության և մանավանդ իմացության կարիքների համար:

ՈՍԿԵՏԵՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՍՎԱԾ

1. Առանց խստության ո՛չ վարդապետությունը առաջ կգնա, ո՛չ դատաստանները կկայանան, ո՛չ էլ մոլորությունները կսանձահարվեն:

2. Իսկապես խստությունն է մայրը բոլոր խրատների, որովհետև անբան համբերությունը մոլորություններ է սերմանում:

2. ա. Ով բռնված է երկնալիմների տենչով, չի բնակվի այս ամպհովանու մոտ:

3. Բոլոր պատիվներից մեծագույնը քահանայական պատիվն է, եթե մեկը անարատ պահի այն:

4. Որոշ ժամանակ համբերիր քո թշնամու [արարքներին] և բարիք արա նրան, և կհաղթես նրան քաղցրությամբ:

5. Աշխարհը խաբեությունների վաճառանոց է, ուր վաճառվում է ամեն ինչ, նրա մեջ գնողներն ու ծախողները ստությամբ են վարում իրենց կյանքը: Արդ, փախիր աշխարհից, որպեսզի չխաբես կամ չխաբվես:

6. Հայտնի թշնամին ավելի լավ է դիմակավոր սիրելուց, որովհետև վախենալով՝ խորշում են թշնամուց, իսկ չճանաչելով դիմակավոր սիրելուն՝ խաբվում են:

7. Ինչպես հիվանդությունը մահվան է պատրաստում մարմինը, այսպես էլ մեղքերի չարությունը հոգին է պատրաստում դժոխքի մահվան:

8. Աստուծո որդին չարչարվեց, խաչվեց, թաղվեց, դա թողեց մեզ իբրև գանձ, Աստուծո որդին կամեցավ մեռնել, որպեսզի մեզ հաշտեցնի Հայր Աստուծո հետ:

9. Քրիստոսին տեսնելուց մերժվելը ես ավելի դառն կսկիծ եմ համարում, քան դժոխքը:

ԲԱՐՍԵՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՍՎԱԾ

10. Եթե մեկը կոծում է մեռածի վրա և արյուն է հանում, կոծ դնողն ու կոծողը նզովյալ կլինեն, մեռելների վրա լավիս գինի թող չլանեն և ողբ ու կոծ չանեն, և եթե անեն, պարտավոր են ապաշխարել եկեղեցուց դուրս:

11. Բարկությունը թշնամանք է հարուցում, և թշնամանքը կոխ է ծնում, իսկ կոխվի՝ հարվածներ, և հարվածները՝ վերքեր, իսկ վերքերից շատ անգամ մահեր են լինում:

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՅԻՆ ԱՍՈՒՄ Է

12. Աստված խաչվեց՝ երկիրը շարժվեց:

13. Ով որ կույսին Աստվածածին չի ընդունում, հեռու է Աստվածությունից:

14. Եթե մեկը խաչալիմն չի երկրպագում՝ մարդասպանների շարքին է դասվում, որովհետև ով որ չի ասում «խաչված Աստված», Աստծուն՝ կույսից ծնված, և կույսին՝ Աստվածածին չի խոստովանում:

ԳՐԻԳՈՐ ԱՔԱՆՁԵԼԱԳՈՐԾ

15. Ով որ ասում է «Այլ մեկն է ախտակիրը և այլ մեկը՝ ոչ ախտակիրը և նույն ախտակիրին չի բնդումում որպես ախտակիր մարմնով Աստված Բան, ճգովյալ լինի:

ՄԵՇ ԱԹԱՆԱՍԸ

16. Մեկ է մարմնացած Բանի բնությունը և ոչ թե երկու բնություն, կամ երկտեսակ կամ կրկնապատիկ: Այդ պատճառով էլ մոլորվում են նրանք, որ ասում են, թե «Այլ մեկն է, որ չարչարվեց, և այլ մեկը՝ որ չչարչարվեց: Բայց ոչ այլ ոք էր, քան Բանը, որ չարչարվեց և մահ բնդումեց:

ԱՄԲՐՈՍԻՈՍ

18. Նա, ով անարժանաբար է բնդումում Քրիստոսին, կարծես սպանում է նրան:

19. Երբ փորը լիանում է, «մնաս բարով» է ասում բոլոր առաքինություններին:

20. Քրիստոսին հետևող կույսերի գեղեցկությունն է՝ չզարդարել ինքնիրեն մարմնական զգեստներով, որովհետև Աստծո առաջ գեղեցիկ է այն կույսը, որ ջանում է մարդկանց երևալ ոչ թե գեղեցիկ, այլ՝ անարգ:

21. Աշխարհի ստեղծումը Աստծուց է, այս աշխարհի գործը՝ սատանայից: Իշխանությունների հաստատումը Աստծուց է, իսկ նրանց փառասիրությունը՝ սատանայից:

22. Տերը կամեցավ մատնվել իր աշակերտից, որպեսզի դու, որ քո ընկերոջ կողմից մատնվեցիր և թաղվեցիր, համբերությամբ տանես:

23. Տերը աղոթքի օգնության կարիքը չունեիր, այլ մեզ օրինակ էր տալիս՝ իրեն հետևելու:

24. Առաքինությունը սկսելը չէ, այլ ավարտելը:

ՕԳՈՍՏԻՆՈՍԸ ԱՍՈՒՄ Է

25. Այս աշխարհը պանդխտություն է և ճանապարհ՝ անցնելու այլ կյանք, և բոլոր նրանք, որոնք արժանացան հավիտենական կյանքին, և որոնք արժանի պիտի լինեն, իրենք իրենց ճանաչեցին որպես ճշդեհներ և պանդուխտներ և ոչ թե քաղաքացիներ:

26. Աշխարհի սերը և Աստծո սերը չեն կարող համատեղ բնակվել մի սրտում, ինչպես որ նույն աշքերը չեն կարող միաժամանակ նայել երկինք ու երկիր:

27. Այս աշխարհի հեշտ կյանքի տրտմությունը ճշմարիտ է և ուրախությունը՝ սուտ, աշխատանքը՝ ծանր, և հանգիստը՝ երկյուղալի, երջանկությունը՝ կեղծ է և թշվառությունը՝ իսկական:

28. Հպարտությունը թյուր գերազանցության բնդումն է:

29. Տերը իր անկողինը թողեց իր աշակերտներին: Ով որ ուզում է հանգչել նրա հետ երկնքում, պետք է պառկի այդ անկողնու վրա, աչիմք՝ մեռնի երկրում:

ԳՐԻԳՈՐ ԱՔԱՆՁԵԼԱԳՈՐԾ

15. Ով որ ասում է «Այլ մեկն է ախտակիրը և այլ մեկը՝ ոչ ախտակիրը և նույն ախտակրին չի ընդունում որպես ախտակիր մարմնով Աստված Բան, նզովյալ լինի:

ՄԵԾ ԱԹԱՆԱՍԸ

16. Մեկ է մարմնացած Բանի բնությունը և ոչ թե երկու բնություն, կամ երկտեսակ կամ կրկնապատիկ: Այդ պատճառով էլ մոլորվում են նրանք, որ ասում են, թե «Այլ մեկն է, որ չարչարվեց, և այլ մեկը՝ որ չչարչարվեց: Բայց ոչ այլ ոք էր, քան Բանը, որ չարչարվեց և մահ ընդունեց:

ԱՄԲՐՈՍԻՈՍ

18. Նա, ով անարժանաբար է ընդունում Քրիստոսին, կարծես սպանում է նրան:

19. Երբ փորը լիանում է, «մնաս բարով» է ասում բոլոր առաքինություններին:

20. Քրիստոսին հետևող կույսերի գեղեցկությունն է՝ չզարդարել ինքնիրեն մարմնական զգեստներով, որովհետև Աստծո առաջ գեղեցիկ է այն կույսը, որ չանում է մարդկանց երևալ ոչ թե գեղեցիկ, այլ՝ անարգ:

21. Աշխարհի ստեղծումը Աստծուց է, այս աշխարհի գործը՝ աստամայից: Իշխանությունների հաստատումը Աստծուց է, իսկ նրանց փառասիրությունը՝ աստամայից:

22. Տերը կամեցավ մատնվել իր աշակերտից, որպեսզի դու, որ քո ընկերոջ կողմից մատնվեցիր և թաղվեցիր, համբերությամբ տանես:

23. Տերը աղոթքի օգնության կարիքը չունեիր, այլ մեզ օրինակ էր տալիս՝ իրեն հետևելու:

24. Առաքինությունը սկսելը չէ, այլ ավարտելը:

ՕԳՈՍԻՆՈՍԸ ԱՍՈՒՄ Է

25. Այս աշխարհը պանդխտություն է և ճանապարհ՝ անցնելու այլ կյանք, և բոլոր նրանք, որոնք արժանացան հավիտենական կյանքին, և որոնք արժանի պիտի լինեն, իրենք իրենց ճանաչեցին որպես ճշդեհներ և պանդխտներ և ոչ թե քաղաքացիներ:

26. Աշխարհի սերը և Աստծո սերը չեն կարող համատեղ բնակվել մի սրտում, ինչպես որ նույն աչքերը չեն կարող միաժամանակ նայել երկինք ու երկիր:

27. Այս աշխարհի հեշտ կյանքի տրամությունը ճշմարիտ է և ուրախությունը՝ սուտ, աշխատանքը՝ ծանր, և հանգիստը՝ երկյուղալի, երջանկությունը՝ կեղծ է և թշվառությունը՝ իսկական:

28. Հպարտությունը թյուր գերազանցության ընդունումն է:

29. Տերը իր անկողինը թողեց իր աշակերտներին: Ով որ ուզում է հանգչել նրա հետ երկնքում, պետք է պսոկի այդ անկողնու վրա, այսինքն մեռնի երկրում:

35. Մի դներ ունկն բամբասողին առ ի լընդունել զբամբասանս նորս, զի մի յղասցիս զմահն ի հոգի քո, վասն զի կերակուր մահու է բամբասանքն:

36. Սէրն է ծանրագոյն հնար ընդդէմ նախանձուն:

37. Հպարտութիւն բառնայ ի մարդոյն զԱստուած, նախանձն՝ զընկերն և բարկութիւն՝ զհինքն իսկ:

38. Որպէս քացախն ապականէ զամանն. եթէ երկար մնասցէ անդ, նոյնպէս բարկութիւն՝ զսիրուն, թէ մնասցէ մինչ ի վաղիւն:

39. Մեղքն, եթէ մեծ և եթէ փոքր, անպատիժ լինել ոչ կարեն:

40. Աշխատութիւն երկեցուցանէ, բայց տես զվարձն:

41. Երկոքին սէր մարդկան շինեն զերկու քաղաքս. սէրն Աստուծոյ շինէ զվերինն Երուսաղէմ, և սէր[ն] աշխարհիս շինէ զբաբիլոն դժոխաց:

42. Զի է զի զամենայն ինչ կամիս բարի և զքեզ ոչ բարի, աղաչեմ զքեզ նախ մեծարեալ զքեզ քան զքոյսն. ցախս ընդ կորուստ դանկի միոջ և ոչ ցախս ընդ կորուստ հոգոյն:

43. Ոչ այլ ինչ է ներկա ժամանակս, բայց միայն ընթացք առ մահն:

44. Դիւրեալ բամահէ զաշխարհս, որ միշտ ի միտ ածէ զօր մահուն իւրոյ:

45. Յոյժ փարթամ է քրիստոնէական կրօնքս, վասն զի ստանայ զըստացողն ամենայնի, այսինքն՝ զՔրիստոս:

46. Առաջի մարդկան սիրուն դատի բանին և առաջի Աստծո բանն դատի սրտին:

47. Յետորոյ իմացայ գնեալ զիս պատուական արեամբն Քրիստոսի, այլ ոչ կամեցայ առնել զիս վաճառելի:

48. Այտքիկ են, զոր համարեմ ձեզ պահել, որ բնակեալդ էք ի վանս նախ զի համակամ բնակեսցիք, վասն որոյ իսկդ էք ի միասին, և մի անուանէք ձեզ յառուկ իր:

49. Ոչ է պարտ երկնի ի տալն, քանզի ոչ դադարէ Աստուած դարձեալ պարգևել, յորժամ զառեալն բաշխեսցոյք:

50. Չար է մեղանչելն, չարագոյն յարամնալն և ևս չարագոյն ջատագով լինելն:

(Շարունակելի)

30. Ինչքան մարդ շատերին խոստովանի իր գարշելի մեղքերը, այնքան թողության շնորհներ կստանա:

31. Ինչպես որ արագ չորանում են բարձունքները և նովիտները ջրով են լցվում, այդպես էլ շնորհները առնվում են հպարտներից և տրվում են խոնարհներին:

32. Ոչինչ այնպես նման չէ սաստանայի գործերին, ինչպես դիակալությունն ու լեզվակոխվը:

33. Մեծ հիմարություն է գնալ այնտեղ, ուր շատերին քնկած է տեսնում:

34. Նախանձը նման է հոգու ցեցի, որ ուտում է զգայարանները, այրում է սրտերը, չար ժանդի պես նեղում է մտքերը, ապականում է մարդու բոլոր բարությունները:

35. Ականջ մի դնիր բամբասողին՝ ընդունելու նրա բամբասանքները, որպեսզի մահ չծնեն քո հոգում, քանի որ բամբասանքը մահվան կերակուր է:

36. Սերը մեծագույն ուժն է նախանձի դեմ:

37. Հպարտությունը մարդու միջից հանում է Աստծուն, նախանձը հանում է ընկերոջը, իսկ բարկությունը՝ հենց իրեն:

38. Ինչպես որ քացախն է ապականում ամանը, եթե երկար մնա այնտեղ, այդպես էլ բարկությունը կապականի սիրտը, եթե մնա մինչև վաղը:

39. Մեղքերը, մեծ թե փոքր, անպատիժ լինել չեն կարող:

40. Աշխատանքը հոգնեցնում է, սակայն որոշիչը վարձն է:

41. Մարդկանց երկու սերերը երկու քաղաքներ են շինում, Աստծու սերը շինում է վերին Երուսաղեմը, իսկ աշխարհի սերը շինում է դժոխային քաբելոնը:

42. Ինչպես է, որ ամեն ինչ բարի էս ուզում, իսկ քեզ՝ ոչ: Խնդրում եմ քեզ՝ նախ մեծարիք քեզ, քան քո ունեցածները, ցավում ես մի կոպեկի կորուստի համար, սակայն չես ցավում հոգու կորուստի համար:

43. Ոչ այլ ինչ է ներկա ժամանակը, եթե ոչ միայն ընթացք դեպի մահ:

44. Հեշտ է արհամարհում աշխարհը նա, ով միշտ մտաբերում է իր մահվան օրը:

45. Հույժ հարուստ է մեր քրիստոնեական կրոնը, որովհետև ստանում է բոլորի ստացողին, այսինքն՝ Բրիստոսին:


46. Մարդկանց մոտ սիրտն է դատվում խոսքով, իսկ Աստծո մոտ խոսքն է դատվում սրտով:

47. Իմանալուց հետո, որ գնվել եմ Բրիստոսի պատվական արյամբ, այլևս չուզեցի վաճառելի դառնալ:

48. Սրանք են, որ գտնում եմ, թե պետք է պահեք, դուք որ բնակվում եք վանքերում, նախ որ համերաշխ ապրեք, քանի որ ճշմարիտ եք միապին, և ձեզ հատուկ մի համարեք:

49. Պետք չէ տառապել տալու ժամանակ, քանի որ Աստված չի դադարի նորից պարգևել, երբ առնվազը բաշխենք:

50. Չար է մեղանշելը, ավելի չար է այդպես մնալը և առավել ևս չար է պաշտպան կանգնելը:



Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԷԶՄԻԱՇՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՎԱՆՔԻ 1739—1759 թթ. «ԵԼԻՑ-ՄՏԻՑ» ՄԱՏՅԱՆՆԵՐԻ

Հայոց Եկեղեցու, նրա աթոռանիստ կենտրոնի ու հատկապես հայ ժողովրդի արևելահայ հատվածի սոցիալ-տնտեսական վիճակի պատմության ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանական տնտեսության 1739—1759 թթ. «Ելից-մտից» մատյանները, որոնք մասնագետների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել¹։ Մատյանները հատկապես կարևոր են Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման համար, իսկ տնտեսությունն ուսումնասիրելը, նրա զարգացման կոնկրետ օրինաչափությունները բացահայտելը այդ հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման հիմնական հարցն է։ Մատյանների ուսումնասիրումից միաժամանակ պարզվում է, որ Արևելյան Հայաստանը գտնվելով իրանական տիրապետության տակ, չի զրկվել տնտեսական իր ինքնուրույնությունից, չի վերածվել տիրապետողների վարչական ու տնտեսական սխտեմի դիմագուրկ կցորդի։

17—18-րդ դդ. Արևելյան Հայաստանի տնտեսությանը տեսք տվող հանդիսացել է ոչ այնքան աշխարհիկ, որքան եկեղեցական-վանական տնտեսությունը։ Դա պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ եկեղեցական կալվածքները իրենց հիմքում ունենալով վակֆալիկ (հայկական աղբյուրներում վախմ) իրավունքի նախապայման, կոտորակման ենթակա չէին։ Այդ իրավունքի մասին արժեքավոր տեղեկություններ է

¹ Միակ հեղինակը Բ. Հարությունյանն է, որն իր ուսումնասիրություններում մասնակիորեն օգտագործել է այդ աղբյուրները։ (Արությունյան Բ., Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ер.: ВАН, 1940, Նույնի, Վարձու աշխատանքներ հանրային խանութի մեջ 17-րդ դ. և 19-րդ դ. առաջին բաժնից, «Պատմա-Բանասիրական հանդես» 1, Երևան, 1959;

հաղորդում Սիմեոն Երևանցին: Այսպես, նկարագրելով կաթողիկոս Գրիգոր Մակվեցու կողմից 1431 թ. Էջմիածնի վանքին Վաղարշապատ գյուղի նվիրատվության օրինակը, նա գրում է. «Եւ Գրիգոր կաթողիկոս՝ գրեցուցանէ ի յերիս ղնպալալոյսն ևս թէ Գրիգոր յալիֆալն առնու զգեօղս զայս և վախըֆ տա Էջմիածնի Աթոռոյն: Քանզի որովմեստի յաննալն յազգս օրէն է, զի վախըֆն ոչ վաճառէ և ոչ յետս դառնայ, վասն այսորիկ այսպէս գրեցուցանէ, զի մի ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել»²: Աշխարհիկ ավատական տների ներկայացուցիչներից շատերը միաժամանակ քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով, դրանք նվիրում էին սեփական տիրույթի սահմաններում գտնվող վանքերին ու եկեղեցիներին նկատի ունենալով նաև այն, որ Հայ Եկեղեցու իրավունքների ամրապնդումը կնպաստի հետագայում իրենց իշխանության վերականգնմանը: Ըստ այդմ էլ, վանքերն ու եկեղեցիները, ինչպես նաև բարձր հոգևորականության առանձին ներկայացուցիչներ դառնում են տնտեսության կազմակերպիչներ: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին. «Ամենալն վանորայք ազգիս հայոց,—գրում է նա,—իւրաքանչիւր սևազլոխ ունէր իւր զինչս առանձին, այգի և բորաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և գմուտս ստացումսնոց նաև գմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ յինքեանս բաժանէին»³: Վանական տնտեսություններն ընդարձակվում էին նաև սեփական միջոցների ու կուտակումների հաշվին: Եկեղեցական տնտեսություններն այս շրջանում ընդգրկում էին գյուղատնտեսության գրեթե բոլոր կարևոր ճյուղերը և գյուղատնտեսական հոմքի վերամշակման բազմազան ձեռնարկություններ:

Իբրև Հայ Եկեղեցու աթոռանիստ կենտրոն, իր հողային տարածքներով ու անշարժ գույքով առանձնանում էր Էջմիածնի վանքը: Ինչպես վկայում են աղբյուրները, արդեն 18-րդ դարի կեսերին վանքի սեփականատիրական իրավունքները (մուլք) տարածվել են 23 գյուղերի վրա, որոնցից Վաղարշապատի, Նորագեղի, Բոխենիսի, Քիրաշլուի՝ 6, Շղվարդի՝ 4—5, Մաստուրայի՝ 2—5, Օշականի՝ 0—5 դանգ, սեփականությունն օտարման ենթարկվելու դեպքում բաժանվում էր 6 հավասար մասերի, որը իրանական աղբյուրներում կոչվում էր դանգ, իսկ հաշվականում ստակ: Մեկ ամբողջական կալվածքը 6 դանգ (ստակ) էր, մուլքերին որպես վակֆ, իսկ մնացած գյուղերին՝ զանձագին մուլքի իրավունքով⁴: Եթե նկատի ունենանք, որ 18-րդ դարի վերջերին, ըստ Ի. Շուպենի Երևանի խանությունում կային 87 մուլքադարական գյուղեր, ապա ստացվում է, որ Էջմիածնի վանքը իր ձեռքում է կենտրոնացրել մուլքադարական գյուղերի մոտ 26 տոկոսը, իսկ նրանցում եղած գյուղացիական տնտեսությունները կազմել են խանության մեջ եղած գյուղացիական բոլոր տնտեսությունների ալկի բաժնի 11 տոկոսը⁵: Ըստ Բ. Հարությունյանի հաշվարկների, Էջմիածնի վանական տնտեսության վարելահողերի ու այգիների ընդհանուր տարածությունը կազմել է մոտ 1142 հեկտար⁶:

² Սիմեոն Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 101:

³ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 288—289, հմտո. Գրիգոր Դարանաղի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ 1915, էջ 296:

⁴ Սիմեոն Երևանցի, Ջամբո, էջ 100—129:

⁵ Шопен И. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, с. 931—940.

⁶ Арутюнян Б., Крупное монастырское хозяйство..., с. 39—40.

Վանական տնտեսության վարելահողերի մի մասը հատկացված էր հացահատիկային կուլտուրաների մշակությանը: Մշակվել են ցորենի և գարու աշնանացան ու գարնանացան տեսակները: Այսպես, վանքի 1752 թ. հաշվեմատյանում նշվում է, որ վանքի հողատարածություններում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ցորեն և գարի ցանվել է 630 տոմար (տարածության չափ=մոտ 0,25 հա.) տարածքում, իսկ մարտ-ապրիլ ամիսներին՝ 345 տոմար⁷: Ըստ 1728 թ. Վաղարշապատ գյուղի թուրքական հարկացուցակի, գյուղի չորս թաղերի բնակիչները պարտավոր էին որպես բահրա պետությանը վճարել. ցորեն՝ 2000 քիլա (ծանրության չափ=27—30 կգ.). գարի՝ 1800 քիլա⁸: Համաձայն Ի. Շոպենի տվյալների, իրանական տիրապետության վերջերին, Էջմիածնի վանքի հողատարածությունների համախառն բերքը հիշյալ կուլտուրաների գծով կազմել է. ցորեն՝ 6000 փութ (ծանրության չափ=16 կգ.), գարի՝ 1800 փութ⁹: Որպես գարնանացան ու աշնանացան հացահատիկային կուլտուրաներից մշակվել է և հաճարի կարմիր ու սպիտակ տեսակները. «Աճար իստակող ԻԲ (22) պատվաց վարձն էտու...»,—կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում¹⁰: Բրնձի տարածվածության մասին է վկայում այն հանգամանքը, որ հաճախ վանական տնտեսությունում բրնձն է վաճառվել. «Թուին ՌՄԷ (1758) բրնձն ծախեցաք ԾԿԳ (163) լիտր Ա (1) լիտրն ԻԸ (28) փողով գինն էղև Ա թոմսան ԲՌ (2000) դիան»—տեղեկացնում է վանքի մեկ այլ հաշվեմատյան¹¹:

Արևելյան Հաշատում հողասակավության ու ջրի պակասության պայմաններում հնարավոր չէր կիրառել դաշտավարության եռադաշտյան սխեման: Հիմնական սխեման ւերմնափոխությունն էր, երբ միևնույն հողակտորի վրա ցանքս է կատարվել երկու անգամ, բնդ որում հացաբույսերի ցանքսերին փոխարինել են բանջարա-բոստանային կամ կերային կուլտուրաները: Այդ մասին ուղղակի վկայություն ունի 17-րդ դ. ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը: Նա գրում է. «...այստեղ հողը երբեք հանգիստ չի մնում, երբ հավաքվում է մի բերք, իսկույն նրա փոխարեն ցանվում է մի այլ կուլտուրա»¹²:

Դաշտավարության մեջ լայն կիրառություն է գտել պարարտացումը: Էջմիածնի վանական տնտեսությունում օրինակ, կիրառվել է բնական պարարտանյութ տեղափոխողի վարձու աշխատանքը. «Կու կրող ԻԳ (23) մշակաց վարձն էտու ԱՌԳ (1003) շահի գիտությամբ ժամօրհնողին»,—կարդում ենք վանքի մատյաններից մեկում¹³: Հողի բերքատվության բարձրացման կարևոր պայմաններից մեկն էլ մոլախոտերից մաքրումն էր. «Չափի (մոլախոտ—Հ. Թ.) հավաքող ԻԵ (25) մշակաց վարձն էտու Ե (5)ին կէս շահով և Ի (20)ին ԱԱ (11) փողով տվաք չորս հարիր ԾԵ (55) դիան ձեռամբ Դունկիանոս վարդապետին»—տեղեկացնում է վանքի 1755 թ. հաշվեմատյանը¹⁴: Իսկ 1758 թ. մատյանից տեղեկանում ենք քարերից հո-

⁷ Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 76:

⁸ Տես Հ. Փափագյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի» 5, Երևան, 1960, էջ 440:

⁹ Шопен И., Исторический памятник..., с. 680.

¹⁰ Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 32:

¹¹ Նույն տեղում, վավ. 23, էջ 3:

¹² J. Chardin, Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, vol. IV, Paris, 1811, p. 105.

¹³ Մատենադարան, Կթղկ. դիվ. թղթ. 1, վավ. 13, էջ 245:

¹⁴ Նույն տեղում, վավ. 27, էջ 51:

դատարանությունների մաքրման, ինչպես նաև կոշտ հողակտորների փշրման մասին. «Հող բանտոլ և մանօղ ԼԲ (32) մշակաց վարձն ետու Գ (3) պիստով (դրամի միավոր—20 դինար) վերակացու Ակոր վարդապետի ձեռամբ ԱՌԻ (1004) ապասի Բ (2) շահի»¹⁵:

Հողամշակության համար կարևոր նշանակություն ուներ նաև գյուղատնտեսական գործիքների կատարելագործումը, սակայն բնատնտեսության պայմաններում այն չափազանց դանդաղ էր ընթանում: Դաշտավարության մեջ կիրառվող ամենակարևոր գործիքները արորն ու գոյթանն էին: Արորը վարում էր մակերեսային, ուստի և այն հիմնականում օգտագործում էին գարնանային ցանքի ժամանակ: Նրա արտադրողականությունը օրական չէր անցնում 0,3 հեկտարից: Արորավարի ժամանակ զբաղված էին լինում 1—6 մարդ, իսկ որպես բաշող ուժ պահանջվում էր 1—2 զույգ եգ: «Չույգ եգը» աղբյուրներում կոչվել է «Լուծ». «Խ (40) լուծ սամի (երկաթից պատրաստված ձողեր, որոնց արանքում մտնում էին եգների գլուխները) առինք է (7) անասուն վարուց ձեռամբ վաքիլին, գինն ետու Թ (9) շահի»,—կարդում ենք վանքի հաշվենաստյաններից մեկում¹⁶: «Լուծը» հաճախ կոչվել է նաև «Չույթ». «Չույթ վարօղ մշակաց բաշխիչ ետու երկու հարիր դրան»,—կարդում ենք վանքի մեկ այլ հաշվենաստյանում¹⁷:

Դաշտավարության մեջ հերկից անմիջապես հետո սկսվում էր ցանքը, որի ժամանակ այն արտելում, որտեղ արորը հնարավորություն չէր ունեցել ավելի խորը վարելու՝ հատկապես խամ հողերում, միաժամանակ կատարել են հողերի փխրեցման աշխատանքներ: Այն կատարվում էր փոցխով, որին բաշելու համար լծել են 2—3 զույգ եգներ. «Փոցխ քջօղ Ժ (10) մշակաց վարձն ետու Գ (3) պիստով ձեռամբ տեր Մելիքստեփին»,—տեղեկացնում է վանքի մատյաններից մեկը¹⁸:

Ցանքին նախորդում էր սերմերի նախապատրաստումը, այսինքն կատարվում էր սերմերի ընտրություն և տեսակավորում: Հատկապես ուշադրություն էին դարձնում, որ սերմերը լինեին նույն տարվա բերքից հավաքված, խոշոր և ծանր. Գ (3) ապասի ետու սերմացու ցորեն խտակող ԻԴ (24) կանանց ամբարտարի ձեռօք»,—կարդում ենք մատյանում¹⁹: Եթե սերմերը նախատեսված էին աշնանային ցանքի համար, դրանք ժամանակավորապես պահվում էին պարկերում, իսկ եթե գարնանային՝ պահվում էին հատուկ փորված հողերում. «Ե (5) շահի ետու ներսի ցորնի և գարու հորի վրա բանօղ Ը (8) մշակաց է (7) փօղով»,—կարդում ենք մեկ այլ մատյանում²⁰: Հարկ է նշել, որ առաջին դեպքում սերմացուն լավ էր պահպանվում, իսկ երկրորդ դեպքում խոնավությունից կորցնում էր ծլունակությունը:

Ցանքին հաջորդում էր տափանումը. սերմերը հողում ծածկելու համար գործածում էին ցաքանը, որը նույնպես դժվար աշխատեցվող գործիք էր և ուներ 2—3 լծասարք. «Տափի լուծ քջօղ ԻԴ (24) մշակաց վարձն ետու կես շահօղ Գ (3) ապասի»,—տեղեկացնում է վանքի մի հաշվենաստյան²¹:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 42:

¹⁷ Նույն տեղում, վավ. 27, էջ 55:

¹⁸ Նույն տեղում, վավ. 23, էջ 62:

¹⁹ Նույն տեղում, վավ. 13, էջ 29:

²⁰ Նույն տեղում, էջ 31:

²¹ Նույն տեղում, վավ. 23, էջ 46:

«Ելից-մոից» մատյանները տեղեկացնում են և տափանկելուն հաջորդող հողի մարկումսան աշխատանքի մասին, երբ ծոված, լալն բերանով երկաթյա բահով վարած տարածություններում ջրելու համար ստուներ էին անցկացվում: Սա նույնպես շատ աշխատատար պրոցես էր և մեծ քանակությամբ աշխատում էր պահանջում. «Մարկուսով ԶԶ (76) մշակաց որոց 1,9 (36)ին Ա (1) շահի Ա փող. ԺԸ (18)ին Ա շահի Բ (2) փող. ԻԲ (22)ին մին շահով վարձ ետու երեք հազար ԹԾԶ (970) դիան»²²:

Հնձից հետո, որը կատարվում էր գերանդիով կամ մանգաղով, հացահատիկային կուլտուրաների մշակության վերջին գործը կատարում էր, որի մանրամասն նկարագիրը գտնում ենք Ժ. Ծարդենի մոտ. «Նրանք,—գրում է Ծարդենը,—ցորենը շրթաներով չեն կալում, ինչպես դա անում ենք մենք, այլ առանձնացնում են հատիկը ցողունից հենց կալատեղում հետևյալ կերպ. նախ ցողունները իրար են կապում խրձերով 30—40 ֆուտ (քայլ) շառավիղով, մեզ նման չվախենալով ոչ գողերից և ոչ էլ քամուց: Հետո նրանք այդ խրձերը շրջում են գլխիվայր, որոնց վրայից գնում է կամնասայլը: Վերջինս ունի երեք ֆուտ երկարություն և երկու ֆուտ լայնություն: Կամնասայլի վերևի մասը ավելի ճեղ է, քան ներքևինը և ծառայում է որպես ճշտեղատեղ պշոդի համար: Ներքևի մասը ունի քստակուսու տեսք, բաղկացած փայտե չորս ձողերից: Երկու ձողերի արանքում կան իրար մեջ մտած երեք, երբեմն էլ չորս կրրավուն փայտեր, որոնք ծառայում են իբրև սունի և նման են մեր հրուշակագործների գրտնակներից: Գլանաձև սունիների վրա, մեջ ընդ մեջ հարմարեցված են եռանկյունաձև կտրիչները, որոնք ունեն տղոց նման սուր ատամներ: Սրանցից մեկը տնու վրա հարմարեցված է ուրագի ձևով, մյուսը՝ կացնի, որպեսզի տարբեր դիրքերով փոխած ծղոտները երկու ուղղությամբ էլ կտրատվեն: Կամնասայլը ունի փայտե քաշիկ կամ կաշվե ձգափուկ, որին լծում են ամեն տեսակի գրաստներ՝ ձիեր, եզներ, ջորիներ, ափանակներ, միայն առանձին-առանձին: Կամնասայլի վրա նստեցնում են տղա երեխայի, որը հարկադրում էր կենդանիների վազել արագ վարձով: Յուրաքանչյուր կենդանի վազում է մոտ 3—4 ժամ, որից հետո նրան փոխում են: Մոտիկ կանգնած մարդիկ եղանակներով հարդը առանձնացնում են հենց կալատեղում, իսկ հատիկները, որոնք ավելի ծանր են, մնում են տակին»²³:

Էջմիածնի վանական տնտեսությունում երկրագործական մշակությունների մեջ մեծ տեղ էր հատկացված նաև տեխնիկական կուլտուրաներին: Վանքի մատյաններում, օրինակ, որպես զարմանալին ցանք թվարկվում են բամբակը և բունջիթը, չնայած չի նշված այդ կուլտուրաների զբաղեցրած տարածության չափը²⁴: Հատկապես արժեքավոր էր բամբակի մշակությունը, որը միաժամանակ որպես հումք վաճառքի է հանվել վանքի խանութներում. «Բամբակ ծախեցաք վրացի Դավթին ԾԸ (108) լիտր Ա (1) լիտրն Զ (6) ապասի, գինն եղև ԺԲ (12) թուման»,—հայտնում է վանքի մատյաններից մեկը²⁵: Նույն բնույթի մեկ այլ վավերագրում առվում է. «Գենեցեցո քամբակ ծախեցաք ԾԲ (102) լիտր»²⁶: Բամբակենու մշակության բնագավա-

²² Նույն տեղում, վավ. 27, էջ 51:

²³ Chardin, vol. IV, p. 105—107.

²⁴ Մատենադարան, Կրթկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 376:

²⁵ Նույն տեղում, վավ. 23, էջ 2:

²⁶ Նույն տեղում, էջ 20:

ռում վանական տնտեսությունում կիրառվել է մեծ քանակությամբ աշխատում. «Քամբակի քաղհանօղ ՀԱ (71) մշակաց վարձն ետու Ա (1) շահույ, մէկ թուման ութ հարիւր դիան»,—տեղեկացնում է հաշվեմատյաններից մեկը²⁷: Մեկ այլ հաշվեմատյանում էլ կարդում ենք. «Զ (6) ապաւի Գ (3) փօղ ետու Քարաքթի բամբակի սէզ հաաթօղ ԾԱ (51) տղայոց Գ փօղով²⁸: Համեմատաբար սուղ են տեղեկությունները բունջութի մշակության մասին, սակայն վանքի ձիթհանների մասին Սիմեոն Երևանցու հայտնած վկայությունները հավաստում են տեխնիկական այդ կուլտուրայի տարածվածության մասին²⁹: Ըստ Ի. Շոպենի, վանքի հողատարածություններում իբրև գարնանային ցանք բունջութը զբաղեցրել է 4,5 խավար ցանովի տարածություն, որից ստացվել է մոտ 1500 փութ բերք³⁰:

Իրենց լայն տեսականիով մեծ տարածություններ են զբաղեցրել բանջարաբուսաճալին կուլտուրաները: Հատկապես նշանակալից էր կաղամբի մշակությունը իր վաղահաս և ուշահաս տեսակներով: Մ. Թաղիադյանցի հավաստմամբ, դեռ 17-րդ դարի սկզբներին չողալեցի Կարապետ եպիսկոպոսի կողմից Էջմիածնի վանքի բանջարանցներում աճեցվել է ծաղկակաղամբ³¹: Վանական տնտեսությունում կալին հատուկ հորեր, ուր կաղամբը թարմ վիճակում պահվում էր մինչև խոր ձմեռ. «Ե (5) շահի Զ (6) փօղ ետու ներսի քալամի հորի վրա բանօղ Ը (8) մշակաց Է (7) փողով հոխմբերի Ե-ումն»³²:

Բանջարանոցային կուլտուրաներից սոյան ու սխտորը այնքան շատ էին մշակվում, որ վանքը հաճախ ստացված բերքը վաճառքի է հանել. «Երևան տարած տխագին առինք ԵԻ (5000) դիան Զ (6) շահի», կամ «Սխտոր ծախեցաք Ե (5) փութ Ա (1) փութն Զ շահի գինն առինք Լ (30) շահի»,—տեղեկացնում են վանքի հաշվեմատյանները³³:

Կարևոր էր նաև բոլկի ու շաղգամի մշակությունը, որոնց մասին վանքի մատյաններից մեկում կարդում ենք. «Աժ (100) դիան ետու Հասարակաց պաղչայի բոլկի և շաղգամի տեղ փորթօ Բ (2) մշակաց Յակոբ վարդապետի ձեռօք մարտի ԺԲ (12)ումն»³⁴:

Պակաս կարևորություն չունեն և ընդավորների դասին պատկանող բույսերի մշակությունը (ոսպ, սիսեռ, բակլա, լոբի), որոնցից բակլայի մշակությունը մասին վանքի մատյաններից մեկը հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Է (7) շահի Բ (2) փօղ ետու բակլի բաղչի առուհանօղ Թ (9) մշակաց Ը (8) փողով տնտեքաշու ձեռօքն»³⁵:

Բոստանային կուլտուրաներից սվեղի շատ տարածված էր վարունգի ու սեխի մշակությունը: Աճեցվել է երկու տեսակի վարունգ՝ գարնանային ու աշնանային: Գարնանայինը երկարավուն, ողորկ մաշկով, մշակվել է գարնանը. «Էր ժամանակն գարնանային, վասն որոյ կայր ի մէջ սեղանին վա-

²⁷ Նույն տեղում, վավ. 27, էջ 57:

²⁸ Նույն տեղում, վավ. 13, էջ 3:

²⁹ Սիմեոն Երևանցի, Զամբու, էջ 191, 275, 282, 291 և այլն:

³⁰ Шопен И., Исторический памятник..., с. 680.

³¹ Մ. Թաղիադյանց, Ծանապարհորդութիւն ի Հայս, 6. 1, Կալկարա, 1847, էջ 78:

³² Մատենադարան, Կողկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 30:

³³ Նույն տեղում, վավ. 23, էջ 5, 12:

³⁴ Նույն տեղում, վավ. 13, էջ 49:

³⁵ Նույն տեղում, էջ 7:

րունգ, որ է խիար»,—հայտնում է Առաքել Դավրիժեցին³⁶։ Աշնանային վարունգը, որ փոքր չափի էր ու փշոտ մաշկով, ամեցվել է ամուսն վերջերին։ Վանքի մատյանները տեղեկություններ են հաղորդում վարունգի մշակության ձևերի մասին, որոնցից ամենակարևորն էր վարը։ Վարի ժամանակ հողորսագույ հեռացնում էին մողխատերը և փխրեցնում բուլսի շուրջ եղած հողը («պողազ լցնել»)։ «Զ (6) շահի ետու ներսի պաղչալի խիյարի պողազ լցնող Զ մշակաց բաղչապանի ձեռք»³⁷։ Մ. Թադիսադանցի հավաստմամբ Էջմիածնի վանական տնտեսությունում մշակվել է սեխի մոտ տասը տեսակ, որոնցից լավագույններն էին «Դոթման» ու «Շալալը»³⁸։

Էջմիածնի վանական տնտեսության երկրագործական զբաղմունքի կարևորագույն բնագավառներից մեկն էլ ալվանդական այգեգործությունն էր։ Լայն տարածում էր ստացել պտղատու ծառերի այնպիսի տեսակների մշակությունը, ինչպիսիք էին ծիրանեհին, դեղձեհին, տանձեհին, սալորեհին ու խնձորեհին, նաև թթենին, ղնկուզեհին, բալենին և այլ։

Այգեգործության մեջ հատկապես մեծ էր խաղողագործության տեսակարար կշիռը։ Հիմնականում կիրառվել է թմբալին սիստեմով պտուկած վազերի մշակությունը, որոնց մեջ առանձնացել են խարջի, մխալի, գառան դմակ, հաշաբաշ, հալեորուկ, խոզակաշի, եզան աշք, քիշմիշ տեսակները։ Մատյաններում հանդիպում ենք տեղեկությունների խաղողի վազի մշակման աշխատանքների մասին։ Դրանցից մեկն, օրինակ, հաղորդում է Էտոցի մասին, որի ժամանակ հեռացվում էին չորացած հին և նոր, ավելորդ ու անկանոն աճած ճյուղերը։ «Ետու Նորագեղի մեր այգոյ լետելոյ. ինն հազար ութ հարիւր դիան»³⁹։ Էտեյուց հետո կտրած մատերը (աղբատ) հավաքում էին և օգտագործում որպես վառելիք. «Աղբատ ժողովոյ ԻԲ (22) մշակաց վարձն ետու բաղչապանի ձեռք»,—հաղորդում է մատյաններից մեկը⁴⁰։ Վազի մշակման կարևոր աշխատանքներից մեկը այգեփորն էր, որում համեմատաբար մեծ քանակությամբ աշխատում էր օգտագործվում։ Այսպես, միայն Նորագյուղում ունեցած այգիներում վանքը այգեփորի աշխատանքներում վարձակալել է 58 մշակներ. «Նորագեղի մեր այգոյ ԾԼ (58) փորող մշակաց վարձ ետու մին թուման հինգ հազար Դժ (400) դիան ձեռամբ տեր Սահակին»⁴¹։ Առանձնահատուկ նշանակություն ունեւ այգու բուծումը։ Որպես բուժակնութ օգտագործել են պղնձարջասպի և կրի խառնուրդը, ինչպես նաև ծծումբ. «Ետու նաև կրչի Վիրապին, որ մեզ կիր տալոյ»,—կարդում ենք մատյաններից մեկում⁴²։

Այգեկույթը սկսվում էր սեպտեմբերի կեսերից և շարունակվում մինչև նոյեմբերի կեսերը։ Քաղած խաղողը կողովներով տեղափոխում էին հրձաններ, որ այն տրորվում էր ու վերածվում քաղցուի. «ԺԳ (13) ապասի Ա (1) շահի ետու Բօշի այգու ԼԲ (32) քաղորի կես շահով. ԺԶ (16) քթոց կրող և կոխավորի Դ (4) ապասի Բ (2) շահի Անանիայ վարդապետի ձե-

³⁶ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Էջ 472։

³⁷ Մատենադարան, Կթղյ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 30։

³⁸ Մ. Թադիսադանց, նշվ. աշխ., էջ 77, հմմտ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վեներտիկ, 1890, էջ 316։

³⁹ Մատենադարան, Կթղյ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 51։

⁴⁰ Նույն տեղում, վավ. 23, էջ 46։

⁴¹ Նույն տեղում, վավ. 27, էջ 51։

⁴² Նույն տեղում, էջ 42։


նօք»—տեղեկացնում է վանքի մատյաններից մեկը⁴³։ Ստացված քաղցուն գնում էր օղու, գինու և դոշաքի պատրաստմանը. «Արաղ քաշելու է (7) մշակին վարձն ետու»,—հաշտնում է մատյանը⁴⁴։ Խաղողի այգու խնամքի վերջին պրոցեսը այգեթաղն էր։ Այն ևս շատ ծանր աշխատանք էր ու պահանջում էր մեծ քանակությամբ աշխատուժ։ Ինչպես վկայում է մատյաններից մեկը վանքի միայն «Վերի այգի» կոչված հողատարածություններում այգեթաղին մասնակցել են 365 մշակներ⁴⁵։


Վերջում կցանկանայինք ասել հետևյալի մասին. Էջմիածնի վանական տնտեսություններում վարձու աշխատանքին մեծ տեղ հատկացնելու հանգամանքը որոշ տարակարծություններ է առաջացրել ուսումնասիրողների շրջանում։ Ոմանց կարծիքով 17—18-րդ դդ. Էջմիածնի վանական տնտեսությունը խարխալած էր վարձու աշխատանքի վրա և դա իբր տանում էր ավատական հարաբերությունների քայքայում ու կապիտալիզմի սաղմերի սկզբնավորում։ Անժխտելի է, որ Էջմիածնի վանական տնտեսությունում կիրառվել է վարձու աշխատանք, սակայն աշխատանքի այդ ձևը նախ չի հանդիսացել տիրապետող և ոչ էլ ապացուցում է ավատական կարգերի քայքայումը։ Այստեղ, ինչպես վկայում են «Ելից-մտից» մատյանները, կիրառվել է ժամանակավոր, սեզոնային մշակների աշխատանքը, որոնք իրենց աշխատանքի դիմաց ստացել են սնունդ և դրամական վարձատրություն։

⁴³ Նույն տեղում, վավ. 13, էջ 14։

⁴⁴ Նույն տեղում, վավ. 23, էջ 43։

⁴⁵ Նույն տեղում, էջ 70։





«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ—СЕНТЯБРЬ 1990 г.)

1. Поздравительная телеграмма председателя Верховного Совета Республики Армения Левона Тер-Петросяна Католикосу всех армян Вазгену I по случаю 82-летия со дня рождения, 22 сентября 1990 г. (стр. 3).
2. Ответная телеграмма Католикоса всех армян Вазгена I председателю Верховного Совета Республики Армения Левону Тер-Петросяну, 24 сентября 1990 г. (стр. 4).
3. Поздравительная телеграмма председателя Совета Министров Республики Армения Вазгена Манукяна Католикосу всех армян Вазгену I по случаю 82-летия со дня рождения, 20 сентября 1990 г. (стр. 5).
4. Ответная телеграмма Католикоса всех армян Вазгена I председателю Совета Министров Республики Армения Вазгену Манукяну, 21 сентября 1990 г. (стр. 6).
5. Письмо Католикоса всех армян Вазгена I президенту СССР М. С. Горбачеву в связи вооруженного нападения лиц в военной форме на армянский монастырь Амарас в Нагорном Карабахе, 13 сентября 1990 г. (стр. 7—8).
6. Телеграмма Католикоса всех армян Вазгена I президенту СССР М. С. Горбачеву о восстановлении Советской власти в Нагорном Карабахе, 15 сентября 1990 г. (стр. 9).
7. Письмо Католикоса всех армян Вазгена I министру обороны СССР маршалу Д. М. Язову касательно вопроса Нагорного Карабаха, 14 сентября 1990 г. (стр. 10—11).
8. Епископ Аняния Арабаджян—«Пастырь храбрый полагает жизнь свою за овец» (Посещение г. Москвы Католикосом всех армян Вазгеном I и встреча с президентом СССР М. С. Горбачевым касательно вопроса Нагорного Карабаха), 27 сентября—2 октября 1990 г. (стр. 12—15).
9. Телеграмма Католикоса всех армян Вазгена I академику Виктору Амбарцумяну по случаю 82-летия со дня рождения и увещание о прекращении голодовки в связи с вопросом Нагорного Карабаха, 18 сентября 1990 г. (стр. 16).
10. Телеграмма Католикоса всех армян Вазгена I академику Виктору Амбарцумяну о прекращении голодовки в связи с вопросом Нагорного Карабаха, 21 сентября 1990 г. (стр. 17).
11. Телеграмма Католикоса всех армян Вазгена I академику Виктору Амбарцумяну, Зор-Балаяну, Сосу Саркисяну и другим депутатам Нагорного Карабаха, объявившим голодовку 15 сентября 1990 г. (стр. 18).
12. Телеграмма Католикоса всех армян Вазгена I академику Виктору Амбарцумяну, Сосу Саркисяну, Зори Балаяну, Симеону Бабаиану и Вачагану Григоряну, увещевая прекратить голодовку в связи с вопросом Нагорного Карабаха, 24 сентября 1990 г. (стр. 19).
13. Совместная поздравительная телеграмма Виктора Амбарцумяна, Соса Саркисяна, Зори Балаяна, Симеона Бабаяна и Вачагана Григоряна Католикосу всех армян Вазгену I по случаю 82-летия со дня рождения, 24 сентября 1990 г. (стр. 20).
14. Слово Католикоса всех армян Вазгена I по Армянскому телевидению, 5 сентября 1990 г. (стр. 21—22).
15. Защита дипломных работ в Духовной Академии, 20 июня 1990 г. (стр. 23—24).
16. Днякон Эдвард Мирзаханян—Торжество

открытия учебного года в Духовной Академии св. Эчмиадзина, 22 сентября 1990 г. (стр. 25—26).

17. Церковная хроника Первопрестольного Эчмиадзина за август—сентябрь месяца (стр. 27—29).

18. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе св. Эчмиадзина в день праздника Сошествия Святого Духа, 3 июня 1990 г. (стр. 30—33).

19. Священническое рукоположение в армянской епархии Грузии, 21—22 июля 1990 г. Помещена также биография вновь рукоположенного священника Татева Арутюняна (стр. 34—35).

20. Вести из армянской епархии Австралии:

а. Священническое рукоположение и помазание в армянской церкви Св. Воскресения Сиднее, 14—15 июля 1990 г. (стр. 36—38).

б. Прощальная литургия старшего священника Араманса Мирзаяна (в связи с уходом на пенсию) в армянской церкви Св. Воскресения г. Сиднее, 8 июля 1990 г. (стр. 38—39).

г. Пасторское посещение предстоятеля армянской епархии Австралии и Новой Зеландии епископа Агана Палкозяна мало-

численной армянской общины в г. Перт (Западная Австралия), 7—15 июня 1990 г. (стр. 39).

д. 35-ое всеобщее собрание Совета Церквей Австралии в г. Аделаиде, 29 июня—3 июля 1990 г. (стр. 39—40).

21. **Н. Тер-Микаэлян**—«Записи из дневника патриарха Шнюрка» (рецензия)—(стр. 41—46).

22. **Маня Казарян**—Реставрируются художественные ценности Первопрестольного Эчмиадзина (статья)—(стр. 47—53).


23. **Архимандрит Микаэл Ачапаян**—Новооткрытые эпитафии и литографические коррективирования (исследование)—(стр. 54—56).


24. **Карпис Суренян**—Писатель Мисак Мецаренц (статья)—(стр. 57—63).

25. **Григор Аракелян**—Источниковедческое значение письма, написанное грузинским царевичем Давидом на турецком языке Эрзрумскому паше Баттал Гусейну (исследование)—(стр. 64—69).

26. **А. А. Кесеян**—Показания для проповедничества (исследование, продолжение)—(стр. 70—77).

27. **Г. В. Торосян**—Земледельческая культура в монастырском хозяйстве Эчмиадзина согласно монастырским реестрам «Исхода—прихода» 1739—1759 гг. (исследование)—(стр. 78—85).





„ETCHMIADZIN“
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST—SEPTEMBER 1990)

1. Congratulatory cable of Mr. Levon Ter-Petrossian, president of the Supreme Council of Armenian Republic, to His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, on the occasion of the 82-nd anniversary of His birthday, 22-nd September 1990 (p. 3).

2. The answer cable of His Holiness Catholicos Vasken I to Mr. Levon Ter-Petrossian, president of the Supreme Council of Armenian Republic, 24-th September 1990 (p. 4).

3. Congratulatory cable of Mr. Vasken Manoogian, prime minister of Armenian Republic, to His Holiness Catholicos Vasken I, on the occasion of the 82-nd anniversary of His birthday, 20-th September 1990 (p. 5).

4. The answer cable of His Holiness Catholicos Vasken I to Mr. Vasken Manoogian, prime minister of Armenian Republic, 21-st September 1990 (p. 6).

5. Letter of His Holiness Catholicos Vasken I to Mr. M. S. Gorbachov, president of Soviet Union, in connection of the armed attack by persons with military uniform on the Armenian monastery of Amaras (Karabagh), 13-th September 1990 (pp. 7—8).

6. The cable of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, to the president of Soviet Union Mr. M. S. Gorbachov, to restore the Soviet power in Karabagh, 15-th September 1990 (p. 9).

7. The letter of His Holiness Vasken I to Marshal D. V. Yazov, minister of defence of Soviet Union, about the question of Karabagh, 14-th September 1990 (pp. 10—11).

8. **Bishop Anania Arabadjian**—«The brave shepherd puts himself over the sheeps» (the visit of His Holiness to Moscow and His meeting with

Mr. M. S. Gorbachov, president of Soviet Union, about the problem of Karabagh), 27-th September—2-nd October 1990 (pp. 12—15).

9. The cable of His Holiness to the academician Mr. Victor Hambartzoomian, on the occasion of his 82-nd birthday anniversary, to cease the hunger strike, in connection to the problem of Karabagh, 18-th September 1990 (p. 16).

10. The cable of His Holiness to the academician Mr. Victor Hambartzoomian, to cease the hunger strike, in connection to the problem of Karabakh, 21-st September 1990 (p. 17).

11. The cable of His Holiness to the academician Victor Hambartzoomian, Zory Balayan, Sos Sarkissian and the other hunger striker deputies of Karabagh, 15-th September 1990 (p. 18).

12. The cable of His Holiness to the academician Victor Hambarzoomian, Zory Balayan, Sos Sarkissian, Simon Babayan and Vachakan Grigorian, encouraging them to cease the hunger strike, in connection to the problem of Karabagh, 24-th September 1990 (p. 19).

13. The cable of Victor Hambartzoomian, Sos Sarkissian, Zory Balayan, Simon Babayan and Vachakan Grigorian to His Holiness, in connection of His 82-nd birthday anniversary, 24-th September 1990 (p. 20).

14. The address of His Holiness Vasken I from the TV of Yerevan, 5-th September 1990 (p. 21—22).

15. The presentation of the theses in the Theological Seminary of the Holy See, 20-th June 1990 (pp. 23—24).

16. **Deacon Edward Mirzakhanan**—The reopening ceremony of the Theological Seminary of

Holy Etchmiadzin, 22-nd September 1990 (pp. 25-26).

17. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of church festivities in the Holy See during the months of August-September 1990 (pp. 27-29).

18. Sermon of Archbishop Nerses Bozabalian given in the Cathedral of Holy Etchmiadzin during the Pentecost festivity day, 3-rd June 1990 (pp. 30-33).

19. Sacerdotal ordination in the Armenian diocese of Georgia, 21-22-nd July 1990. There is also the biography of Father Datev Harootiunian (pp. 34-35).

20. **News from the Armenian diocese of Australia.**

a. Sacerdotal ordination and consecration in the Armenian church Holy Harootiun of Sydney, 14-15-th July 1990 (pp. 36-38).

b. The farewell mass of Archpriest Aramayas Mirzayan (to go to pension) in the Armenian church Holy Harootiun of Sydney, 8-th July 1990 (pp. 38-39).

c. The pastoral visit of Bishop Aghan Balianian, prelate of the Armenians of Australia and New Zealand diocese, to the little Armenian colony of Perth (Western Australia), 7-15-th June 1990 (p. 39).

d. The 35-th general meeting of the churches' council of Australia, 29-th June-3-rd July 1990 (pp. 39-40).

21. **N. Der-Mikaelian**—«Pages from the diaries of His Beatitude Patriarch Shnork» (literary critical)—(pp. 41-46).

22. **Manya Ghazarian**—The fine arts' treasures of the Holy See are being restored (article)—(pp. 47-53).

23. **Reverend Michael Achabahian**—Newly discovered inscriptions and lithographical corrections (study)—(pp. 54-56).

24. **Garbis Soorenian**—The poet Misak Medzarentz (article)—(pp. 57-63).

25. **Grigor Arakelian**—The scientific meaning of the letter written in turkish language by the royal prince David of Georgia, sent to Battal Hooseyn Pasha of Erzroom (study)—(pp. 64-69).

26. **H. H. Keuseyan**—Testimonies for preachings (study)—to be continued (pp. 70-77).

27. **H. V. Thorosian**—The agricultural culture in the monastical economy of Etchmiadzin, according the journals of 1739-1759 of the monastery (study)—(pp. 78-85).

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին	3
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ մեծահարգ տիար Լևոն Տեր-Պետրոսյանին	4
Ծայրագույն Պատրիարք Նորին Սուրբ Օծույթուն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա	5
Հայաստանի Հանրապետության վարչապետ տիար Վազգեն Մանուկյանին	6
Մեծահարգ Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովին պրեզիդենտ Խորհրդային Միության	7
ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին	9
Խորհրդային Միության մարշալ, պաշտպանության մինիստր Դմիտրի Տիմոֆեևի Յագովին	10
ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱԶՅԱՆ—«Հովի քաջ գանձն իր դնէ ի վերայ ոչ- խաբաց»	12
Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին	16
ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին	17
Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին, Զորի Բալայանին, Սոս Սարգսյանին և Լեոնային Ղարաբաղի մյուս դեպուտատներին	18
ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին, Զորի Բալայանին, Սոս Սարգսյանին, Սիմեոն Բաբայանին, Վաչագան Գրիգորյանին	19
Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս	20
Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի խօսքը Երևանի հեռուստացույցից	21
Ավարտաճառերի պաշտպանություն հոգևոր ճեմարանում	23
ԷԴՎԱՐԴ ՍՐԿ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ—Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսություն	25
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	27
Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանյանի քարոզը՝ խաղած Մայր տաճարում	30
Քահանայական ձեռնադրություն	34
Լուրեր Աստրախիոյ հայոց թեմէն	
Քահանայական ձեռնադրութիւն և օծում Աստրախիոյ հայոց թեմում	36
Հրաժեշտի պատարագ	38
Լուրեր Աստրախիոյ առաջնորդարանէն	39
Աստրախիոյ Եկեղեցիներու Խորհուրդի 35-րդ ժողովը	39
Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—«Էջեր Շնորհք Պատրիարքի օրագրութենէն»	41
ՄԱՆՅԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ—Վերանորոգվում են Մայր Աթոռի գեղարվեստական գանձերը	47
ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆ—Նորահայտ արձանագրություններ և վի- մագրական սրբագրումներ (Գանձասարի վանք)	54
ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ—Ի՛նչ արբեցույթամբ (Միաք Մեծաբեմ)	57
ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ—Վրաց Դավիթ արքայազնի Էրզրումի Բաթթալ Հուսեյն փաշային գրած թուրքերեն նամակի աղբյուրագիտական նշանակությունը	64
Հ. Հ. ԲՅՈՍԵՅԱՆ—«Վկայութիւնք ի պետս քարոզութեանց»	70
Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ—Երկրագործական մշակույթը Էջմիածնի վանական տնտեսու- թյունում ըստ վանքի 1739—1759 թթ. «Եկից-մսից» մատյանների	78
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	86
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	88

Խմբագիր՝ ԵՐՎԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 13.11.1990 թ.: Ստորագրված է տպագրության 18.02.1991 թ.
Տպագրական 5,75 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 1232:

Մալր՝ Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1990 թ.

